

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9(44 925)

82-46

942

97


9(47.925)

S-46

5 OCT 2011
ECP

Մատենաշար «ՅՈՒՍԱԲԵՐ» թիվ 3

ԴՈՒԲԻՆ



ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԿԱԺԻՌԸ

Նախաբան՝

Վ. ՆԱԽԱՍԱՐԴՅԱՆԻ

090



Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն Ի Փ Ա Խ Ո. Բ Է Ն

Թբրական Մեծ Եղեռնը հայկական նարցը չլուծեց։
Չյուծեց մինչեւ իսկ ժամանակաւոր ճեւով։ Անմատչըն
քաց կոտորածները չկարողացան քաղել մեր Կոտ։
մինչեւ իսկ մի քանի տասնեակ տարիների համար,
ինչպէս երազում էին բռնք դեկավարները։ Հայկական
հուրցը, իր բոլոր հաւանականութիւններով, նաև այսօր
վառ ու կենդանի ցցուած է քաղաքական աշխարհի առջեւ։

Մեծ Եղեռնը անլոյն բռնեց նաև Թիւրքիոյ գարա-
ւոր Երազը։ Հայ ժողովրդի մեկ ամբողջ հաստուածի բնու-
ջնօնսմը փլատակների վերածեց նրա բնակած հայունիք-
րը, սակայն այդ փլատակների վրայից նա նամբայ զգեց
բռնք աշխարհակալ երազանքների առջեւ դեսի նիւսիս
եւ արեւելք, դեսի կովկասեան լեռներն ու անդրկասպ-
եան երկրները։ Պատմութիւնից քաղաքական իմաստու-
թեան դաս առնելու համար մեր յիշատակած փաստերը
իբրև դասական օրինակներ կարող են ծառայել։ Հայ-
կական կոտորածները, նիշտ է, շշմեցուցիչ նարուած
իջեցրին հայ ժողովրդին, սակայն նրանք անկարող ե-
ղան փրկել Թիւրքիոյ խորտակուող նաւը։ Ռուսաստու-
նը, Թուրքիոյ ոխերիմ քննամին, որ քաղաքական դես-
րերի դիպուածական բերումով քաշուել էր կովկասեան
լեռներից դեսի նիւսիս, այնուեղ, որտեղից նա, մօտ մի
դար առաջ, կարողացել էր մեր ու մեզ բախտակից ժողո-
վուրդների դիմակների վրայով իջնել դեսի նարաւ, այսօր
նորեն բռնել է Հայկական Բարձրավանդակի մեկ կարեւոր
փեշը, զոն բերելով մեզ իր աշխարհակալ ծրագրերին եւ
պատրաստուելով իր դրօշը ցցել դեսի նարաւ տաք
ջրերը տանող աւելի նեռաւոր տարածութիւնների վրայ։
Թիւրքիան անարդար գտաւ մեր պահանջը, — սեփական
անկիւն ունենալու պատմական Հայաստանի հողերի
վրայ։ նա գերազանց մեզ հետ լինելու փոխարեն մեր



3519-2002

Վրայից անցնել, — անցաւ ու ձախողեց։ Այս քաղաքականությանը այն հետևանքն ունեցաւ, որ հզօրները եկան ու անցան մեր ու բուրքերի վայլից, հարուածելով առանձին-առանձին, բայց երկուսիս անխտիք, տիրանալով այն ողերին, ուր մենք դարերով արին եւ քրտինք ունեինք քափած։

Հրատարակութեան տալով «Հայ-Թրքական Կնճիոք»՝ «Յուսաքեր»-ը նպատակ ունի պատմական փասուերի լոյսի տակ հայ եւ քուրք դեկավարների լուրջ խորհրդածութեանց նիւր դարձնել այն եղերական անցեալը։ որ հայ ժողովուրդը ունեցաւ յատկապէս մեծ պատերազմի լինքացքին եւ այն արիւնու պատմութիւնը։ որ Օսմանեան երեմնի հզօր պետութիւնը Վենայի պարփազների տակից բերաւ ու հասցրեց մինչեւ էնկիւրի։

«Հայ-Թրքական Կնճիոք» նեղինակի անունը կրկնակի արմեր է տալիս այս ուշագրաւ ուսումնասիրութեան։ Կարելի է ջնաշտուել նրա տեսակետների հետ — այդ լիմբունումների խնդիր է, — սակայն անկարելի է այդ տեսակետների վրայից քերեւորեն անցնել։ առանց նախապէս դառն խորհրդածութեանց նիւր դարձնելու այն ամենը։ ինչ այնքան խոր ու վարակիչ անկեղծութեամբ եւ այնքան կսկիծով արձանագրուած է այս գրոյնի գրերէ իւրաքանչիւր մեկ էջի վրայ։

Հին Թիւրքիան, խայֆայութեան ու սուլթանութեան գաստկան որրանը, երեկ ջրմբոնեց այն նշանաւութիւնները, որոնք արձանագրուած են այս աշխատութեան մեջ։

Թերեւս լիմբոնի այսօք, երբ նա, մեկ յանդուզն լինդումով, փորձեց շախչակել այն շղթաները, որոնք այդ երկու նեխող հաստատութիւնները նետել եին նրա վտիս վզին։

Եթէ այդպէս լինի, — ապա նենց այժմուանից կարելի է տաել, որ մի նոր ու լուսաւոր էջ պիտի բացուի ընդհանրապէս Արեւելքի եւ յատկապէս Թիւրքիոյ եւ Հայուստանի համար։

Վարժուենք մեր սիրաց տեղափոխել ուղեղի մեջ եւ ոչ թէ ուղեղը պահել մեր սրուում, ինչպէս կ'ամեր ամեն մի ողջմիտ քաղաքական գործիչ։

Բաւական է որքան յոյսեր ու ցնորքներ ցանեցինք եւ փոխարենք առաւորեն գոներ հնմեցինք։

Տուժեցինք մենք երկուս եւ շահեցինք մեր փոխարեն ու մեր հաջուին ուրիշները։

Մի՞րէ ժամանակը չէ, որ այլեւս յարդերին ջապանինենք, փորձենք լինել յատես, շրջանայեաց ու զգասու, յամախոն ու հեռատես։

«Toutes les nations sont de Dieu» — բոյս ազգերն Աստուածանից են — չմոռանանք Լորանի այս գեղեցիկ խօսքերը, որ Թիւրքիոյ պետական գործիների քաղաքական իմաստութեան մատեանի մեջ, գործախտաբար։ Երբէք տեղ զգտան։

Դիտակցենք, վերջապէս։ յանուն հարուածուած ու պայքարող Արեւելքի իրական ազատագրութեան, յանուն Թիւրքիոյ նշանակութիւնի ։ յանուն Հայ եւ Թիւրք ժողովրդների լուսաւոր ապազյի, որ Կռւով մեռք բերուած ամեն մի յաջողութիւն, մինչեւ իսկ ամենեն փայլունի։ ամենեն ցանկալին՝ շատ աւելի անարժէք, կորսուարեր ու կործանարար է իր եռերեան մեջ, քանի Խաղաղութեամբ ու հեռատեսութեամբ վաստակուած իւրաքանչիւր մի յաղթանակ, մինչեւ իսկ, երբ այդ յաղթանակը մեռք է բերուած կամովին կատարուած մեծագոյն զրինդութիւնների գնուվ։

Այդ փառայեղ ու լուսաւոր յաղթանակներից մեկն ու առաջինը պիտի լինի Թիւրքիոյ համար անշուշտ նաև Հայ Դատի լաւծումը։

Այս աշխատութիւնն այդ լուծման ուղին է զգում եւ այդ պատճառով բող նա լինի միքենու մի համեստ նիւր այդ նախապարհին ընկած։

Թուրք մամուլի էջերում պաշտօնական և ան-
պաշտօն անձնաւորութեանց կողմից յաճախ լսւում են
սպառնալիքներ, խրատներ, մեղագրանքներ եւ յոր-
դորներ՝ ուզուած հայ ժողովուրդին:

Մենք՝ այսօրուայ պարտուածներս՝ ուրախու-
թեամբ պիտի լսէինք յաղթական Թուրքիոյ մեզ ար-
ւած խորհուրդները, եթէ միայն այդ խորհուրդները՝
անկեղծ եւ նպաստաւոր լինէին թէ՛ մեր ազգային
շահերի եւ թէ՛ Արեւելքի խաղաղութեան և յառաջ-
դիմութեան տեսակէտից։ Անվրդով պիտի ընդունէինք
թուրք մամուլի մէջ յաճախակի երեւացող մեղսգրանք-
ներն ու քննադատութիւնները, եթէ նրանք զուրկ չլի-
նէին լրջութիւնից և նպատակ ունենային պատահած
աղէաների խսկական պատասխանատունները ճշգել։

Օսմաննեան կայսրութեան փլուզումը, նրա ազ-
գարնակութեան նուազումը երեսուն միլիոնից մինչեւ
եօթ-ութ միլիոն, հայ ժողովրդի կրած եղերական տա-
ռապանքներն ու տուած անհամար զոհերը պէտք է
հարկադրեն՝ երկուստեք լրջօրէն խորհելու արիւնոտ
անցեալի խսկական պատճառների մասին եւ գծելու
հայ և թուրք ժողովուրդների համերաշխ կենցաղի
խսկական ուղիները։

Այս ուղղութեամբ անկարող է չմտածել հայ ժո-
ղովուրդը, որ, կրծատուելով, հասած է երեք միլիո-

նի. այս ուղղութեամբ լրջօրէն պէտք է խորհի նաև օսմանեան կայսրութեան բովանդակ թրքութիւնը. որ դէպէշ-դէպք ու փաստէ-փաստ սրածու՛լով ու նուազելով, հասել է ընդամէնը հինգ-վեց մի լիոնի:

Մէկ կողմ նետելով թուրք մամուլի հերիաթներն ու հայոյան քնները, աշխատենք առարկայօրէն մօտենալ նրանց ջօշափած այն հիմնական կէտերին, որոնք վերաբերում են Հայկական Հարցի անցած պատմութեան և Հայ Դատի լուծման եղանակներին:

Հայկական հարցի մասին եղած թուրք դեկավարների և հրապարակախօսների կարծիքները իրարից շատ քիչ են տարբերուում. եթէ որոշ և միաժամանակ չափազանց նուրբ տարբերութիւններ կան ապագային վերաբերող առաջարկների մէջ, անցեալի նկատմամբ, այնուամենայնիւ, նրանք ամենքն ալ ճիշդ նոյն յան կերդն են կրկնում:

Այսպէս. օրինակ, Էնկիւրիի Ազգ. Փողովի նախագահ Բառւֆ պէյ յայտարարած է «Ժուրնալ»ին. «Վաթսուն տարի առաջ հայեր և թուրքեր այնքան բարեկամ էին իրարու, որ թուրք պաշտօնատար անձմը, իր բացակայութեան իր ընտանիքը՝ կը վստահէր հայուն և փոխադարձաբար նոյնը կ'ընէր նաև հայը. դժբախտաբար, վենեստիկի մէջ կազմուած հայ կօմիտէները պատճառ եղան մեր զիլուն եկած աղէտներուն», Եւ Բէռվ պէյր առաջարկում է ապագայի համար իրը միջոց հետեւեալը. «Հայերը կրնան համար երկրին մէջ, պայմանաւ, որ անոնք մեր երկրին մէջ կիրարկուող օրէնքներէն և կանոններէն դուրս տարբեր առանձնաշնորհումներ չպահանջնեն. եթէ հայերը պիտի պահանջնեն ազգային տուն, թող այդ տունը ստանան, իրանց բարեկամ ամերիկացիներէն».

Համարեայ նոյն իմաստն ունի նաև «Իզտամ»-ի

արտօնատէր Ահմէտ ձէվտէթ պէյի արտայայտութիւնը. Խօսելով Սզգային Տան մասին եւ ընդունելով նրա անհրաժեշտութիւնը, ձէվտէթ պէյր աւելացնում է. — «Հայերը մինչեւ հիմա այդ միամտութեան երեսէն (խօսք Հայաստանի ազատման մասին է), այնքան վեասներ կրելով հանդերձ, զեռ կը յամառին շարունակել իրանց նոյն ընթացքը. Այս ընթացքէն մեծ վեասներ յառաջ եկան, հայերն ալ թուրքերն ալ փնացան. Հայերը ցորական Խուսիոյ ենթարկուելով, շատ մեծ վեասներ հասցուցին իրանց հայրենակից թուրքերուն. թուրքերն ալ, ընականաբար, փօխազարձուցին, Երկուստեք հարիւր հազարաւոր անձեր փնացան, աւերուեցան քաղաքներ, գիւղեր»:

Ապագայի համար Ահմէտ ձէվտէթը հետեւալն է զրում. —

«Եթէ երբէք չգործուէին այդ ոճիրները, այսօր հայ ժողովուրդը իր թուրք հայրենակիցներուն հետ կողք կողքի երջանիկ կեանք մը պիտի անցներ: Հայերուն երկու խրատ ունիմ — կ'աւելցնէ ձէվտէթ. — եթէ երբէք չեն ուզեր մեզի հետ ապրիլ՝ Արդէնթին կրնան երթալ և հոն հաստատել իրանց ընակութիւնը. եթէ երբէք կ'ուզեն մեզի հետ ապրիլ՝ Ազգային Մեծ Փողովի մօտ խօսք հասկցող երկու մարդ թող զրկեն և խնդրեն, որ հայերը ընդունուին իրը հայրենակիցներ. Օրինակ առնելու է հրէան երէն, որոնք այնքան եշջանիկ կ'ապրին, չպահանջելով և ոչ մի ազգային առանձնաշնորհում»:

«Թէրձիման» թերթը նոյն լեզուով է արտայայտում. նա ևս ուրախութիւն յայտնելով, որ Թէվժիք փաշայի նախարարութեան յայտնի տրամադրութիւնը, այն է՝ զիջել Վան, Պիթլիս նահանգները հայերին, այլևս ջուրն է ընկած, և, այսպիսով, բարեբախտա-

նի. այս ուղղութեամբ լրջօրէն պէտք է խորհի նաև օսմանեան կայսրութեան բովանդակ թրքութիւնը, որ զէպէ-զէպէ ու փաստէ-փաստ սրածունով ու նուազելով, հասել է բնգամէնը հինգ-վեց մի լիոնի:

Մէկ կողմ հետեւով թուրք մամուլի հեքիաթներն ու հայնոյանքները, աշխատենք առարկայօրէն մօտենալ նրանց չօշափած այն հիմնական կէտերին, որոնք վերաբերում են Հայկական Հարցի անդած պատմութեան և Հայ Դատի լուծման եղանակներին:

Հայկական հարցի մասին եղած թուրք դեկափարների և հրապարակախօսների կարծիքները իրարից շատ քիչ են տարբերուում. եթէ որոշ և միաժամանակ չափազանց նուրբ տարբերութիւններ կան ապագային վերաբերող առաջարկների մէջ, անցեալի նկատմամբ, այնուամենայնիւ, նրանք ամենքն ալ ճիշդ նոյն յանակրն են կրկնում:

Այսպէս, օրինակ, Ենկիւրիի Ազգ. Ժողովի նախագահ Բառուֆ պէյ յայտարարած է «Ժուրնալ»ին. «Վաթուն տարի առաջ հայեր և թուրքեր այնքան բարեկամ էն իրարու, որ թուրք պաշտօնատար անձ մը, իր բացակայութեան իր ընտառնիքը կը վստահէր հայուն և փոխադարձաբար նոյնը կ'ընէր նաև հայը. դժբախտաբար, Վենստափիկի մէջ կազմուած հայ Կոմիտէն և ցարական Ծուսիոյ կոթնած հայ Կոմիտէները պատճառ եղան մեր զլիուն եկած աղէտներուն», եւ թէուֆ պէյը առաջարկում է ապագայի համար իրք միջոց հետեւեալը. «Հայերը կրնան մալ երկրին մէջ, պայմանաւ, որ անոնք մեր երկրին մէջ կիրարկուող օրէւքներէն և կանոններէն գուրս տարբեր առանձնաշնորհումներ չպահանջեն: Եթէ հայերը պիտի պահանջն աղգային տուն, թող այդ տունը ստանան, իրանց բարեկամ ամերիկացիներէն»:

Համարեայ նոյն իմաստն ունի նաև «իգտամ»-ի

արտօնատէր Ահմէտ ձէվտէթ պէյի արտայայտութիւնը, Խօսելով Սզգային Տան մասին և ընդունելով նրա անհրաժեշտութիւնը, ձէվտէթ պէյը աւելացնում է. — «Հայերը մինչեւ հիմա այդ միամտութեան երեսէն (խօսք Հայաստանի ազատման մասին է), այնքան վեասներ կրելով հանգերձ, զեռ կը յամառին շարունակել իրանց նոյն ընթացքը: Այս ընթացքէն մեծ վեասներ յառաջ եկան, հայերն ալ թուրքերն ալ փճացան: Հայերը ցարական Ծուսիոյ ենթարկուելով, շատ մեծ վեասներ հասցուցին իրանց հայրենակից թուրքերուն, թուրքերն ալ, բնականաբար, փօխազարձուցին: Երկուստեք հարիւր հազարաւոր անձեր փծացան, աւերուեցան քաղաքներ, գիւղեր»:

Ապագայի համար Ահմէտ ձէվտէթը հետեւեալն է զրում. —

«Եթէ երբէք չգործուէին այդ ոճիրները, այսօր հայ ծողովուրդը իր թուրք հայրենակիցներուն հետ կողք կողքի երջանիկ կեանք մը պիտի անցներ: Հայերուն երկու խրատ ունիմ—կ'աւելցնէ ձէվտէթ. — Եթէ երբէք չեն ուզեր մեզի հետ ապրիլ՝ Արդէնթին կրնան երթալ և հոն/հաստատել իրանց բնակութիւնը. Եթէ երբէք կ'ուզեն մեզի հետ ապրիլ՝ Ազգային Մեծ Ժողովի մօտ խօսք հասկցող երկու մարդ թող զրկեն և խնդրեն, որ հայերը ընդունուին իրը հայրենակիցներ: Օրինակ առնելու է հրէաներէն, որոնք այնքան երջանիկ կ'ապրիլ, չպահանջելով և ոչ մի աղգային առանձնաշնորհում»:

«Թէ՛ ձեման» թերթը նոյն լեզուով է արտայայտում. նա ևս ուրախութիւն յայտնելով, որ Թէվֆիք փաշայի նախարարութեան յայտնի տրամադրութիւնը, այն է՛ զիջել վան, Պիթլիս նահաւելու հայերին, այլև ջուրն է ընկած, և, այսպիսով, բարեբախտա-

բար, հայկական հարցն էլ փակուած է, առաջարկում է այսուհետեւ չզբաղուել Հայկական Հարցով:

«Իգտամ»ը նորից անդրադառնալով Հայկական Հարցին, Ահմէտ Ճէվտէթի բերնով յայտնում է.—

«Թուրքերէն բարոյապէս և նիւթապէս խլուած հողամասի մը հնքնավարութիւնը պահանջելով, հայերը թուրքերուն կասկածները պիտի աւելցնեն: Ինքնավարութիւն ստացող ազգերէն ամէնէն հինէն սկսած մինչեւ ամէնէն նորը, կազմեցին թուրքիոյ դէմ ուազմանիւթի մթերսնոց մը, ըմբոստութեան օճախի մը, ստեղծելով յարատեւ միջամտութեանց պատրուակ մը»:

Յետոյ, պատմելով, թէ ինչպէս խնդալը եկած է, երբ առաջարկ է ներկայացուել հայկական օճախ ստեղծելու մասին և խորհուրդ տալով, որ հայերը Ռիզա Նուրիի Լօզանի խորհրդաժողովին արտասանած խօսքերը տախտակների վրայ գրեն և պատերից կախնիրանց զաւակներին սովորեցնելու համար, վերջացընում է այսպէս:—

«Վերջապէս Հայկական խնդիրը անդամ մը եւս չբացուելու պայմանով գոցուեցաւ. ասկէ վերջ այս գլխացաւէն ազատուած պիտի ըլլան թուրքերն աւ, տէրութիւններն ալ, հայերն ալ»:

«Ելերի» թերթը յանձինս Ռելալ Նուրիի, աւելի անկեղծօրէն և առանց ծուռ ու մուռ դարձուածքների, յայտարարում է:—

«Հայկական Տան մասին ինկիւրի մէջ երբ լուր առինք, կոնակի վրայ պառկած՝ տասը վայրկեան անդադար խնդացինք:»

«Այս տեսակէտին առաջին արդիւնքը եղաւ, յոյն և հայ փոքրամասնութիւններու Անսատուէն վերջնական անհետացումը»:

«Ելերի» թերթը, զետեղելով Սուլէյման Նազըֆի

«Հայ Ազգային Տուն» խորագիրն ունեցող յօդուածաշարքը, հայկական շարժումները ստեղծող պատճառաների լուսաբանութեանց մէջ է մտնում, յայտարարելով. որ, չնորհիւ ուուսահայերի և պարսկահայերի միջամտութեան և իզմիրիեան ու Զաւէն պատրիարքների գաւագիր գործունէութեան, յեղափոխական շարժումները ծաւալուեցին թիւրքահայ վիլայէթների մէջ և պատճառ զարձան հայ և թուրք ժողովուրդների յարաբերութեանց խզման:

«Հազար տարիէ ի վեր իսլամներուն և հազար երեք հարիւր տարիէ ի վեր թուրքերուն հետ ապրող հայերը, — կ'եզրակացնէ Սուլէյման Նազըֆ, — պէ՛տք ունին մեզի, ինչպէս նաև մենք պէ՛տք ունինք առնոնց»:

Հայոց Հարցի մասին թուրք զեկավարների մտայնութիւնը պարզող յայտարարութեանց մէջբերումները բաւական համարենք: Այս կարծիքները կարելի է ամփոփել հետևեալ ութ կէտերի մէջ:

Ա. — Հայերը մինչեւ իրենց ազգային յեղափոխական շարժումները շատ երջանիկ ապրած են թուրքերի հետ. սրանից վաթսուն տարի առաջ ամենքը եղած են գոհ ու երջանիկ:

Բ. — Հայկական յեղափոխութիւնը ո'չ թէ բնական հետեւանք է հայ ժողովուրդի ինքնազիտակցութեան և տաճիկ կառավարութեան հալածանքների և բանութեանց, այլ արհեստականորին մտած է գրսից. զիմաւորապէս Ռուսիոյ և ուուսական և պարսկական հայերի միջոցով:

Գ. — Հայկական Հարցի լուծումը հետապնդողները նպատակ են ունեցել հրաւիրել գլխաւորապէս Ռուսիոյ միջամտութիւնը թուրքիոյ ներքին գործերի մէջ և հաստատել ուուսական գերիշխանութիւնը հայկական նահանգներում, հայ փոքրամասնութեանց Կա-

մար առանձին բացառիկ դրութիւն ստեղծելով հանգէպ թուրք մեծամասնութեան :

Դ.— Հայերը պատճառ են դարձած Ռուսիոյ և եւրոպական պետութեանց միջամտութեան օսմանեան երկրի գործերի մէջ, այսպիսով քայքայած են իրքական պետութիւնը :

Ե.— Հայերը այս վերջին պատերազմին, դաւանելով տաճիկներին եւ անցնելով Ռուսիոյ եւ դաշնակիցների կողմբ, մեծ աւերռումների պատճառ են դարձած, որի հետեւանքով հարիւր հազարաւոր հայ և թուրք կոտրուած են :

Զ.— Վերոյիշեալ տրամադրութիւններով առաջնորդուելով, թուրք ղեկավարների մեծ մասը եղրակացնում է, որ պէտք է շարունակել Թալէաթէնս վէրի քաղաքականութիւնը և բոլոր հայերին կամ բնաջնջել և կամ ընդմիշտ հեռացնել թուրքիոյ սահմաններից :

Է.— Որպէսզի արեւելեան նահանգներում երկրի բաժանման հիմքը չդրուի և խառնակութեանց օճախուու միջամտութիւնների պատրուակ չստեղծուի, թուրք ղեկավարները գէմ են հայկական անկախ պետութեան կամ ինքնավար օճախի ստեղծման՝ այդ հողերի վրայ :

Ը.— Իսկ թուրք չափաւոր և աւելի հեռատես մասը ընդունում է, որ կարող է լինել անկախ հայ պետութիւն կամ ինքնավար հայկական մի տուն, բայց ոչ Տաճկահայաստանի հողամասերի, այլ Կովկասահայաստանի այն մասի վրայ, ուր այժմեան Խօրհրդային Հայաստանն է տարածուած :

Այդպէս մտածողները, որ վլաւորապէս կովկասի և Պարսկաստանի համաթուրանական կամ արեւելեան քաղաքական հեռանկարներ ունին, միաժամանակ հաշուի առնելով թուրք տարրի քաղաքակրթա-

կան, առեւտրական, արուեստի և երկրագործութեան մէջ ունեցած որոշ թերութիւնները և հայ ժողովրդի այդ ճիւղերում ունեցած ընդունակութիւնները, աւելի չափաւոր տրամադրութիւններով տարուած, թոյւլատրում են հայերին Տաճկաստանում ապրել, պայմանով որ նրանք չունենան բացառիկ առանձնաշնորհումներ :

Ահա այս վերջին մտածողներից են Ահմէտ Ճէվտէթ, Բէուֆ, Մուլէյման Նազիֆ պէյերը, որոնք առաջարկում են հայերին կամ գնալ Արժանթին և կամ վերադառնալ հայրենիք՝ հրէաների օրինակին հետեւուլով :

Ահա այս ուժի կէտերի մէջ կարելի է ամփոփել այսօրուայ յաղթական թուրքիոյ մտաւորականութեան տէսակէտները, Քանի որ մենք հայերս այդ տեսակէտներից օգտուողը և տուժողը պիտի լինենք, և որովհետեւ, ի ցաւ թուրքիոյ, հայերը բնաջնջ չեղան, այլ գեռ մնում են երեք միլիոնի չափ Մերձաւոր Արեւելքում և նրա սահմանակից վայրերում, որովհետեւ հայերը, չիրաժարուելով իրանց հայ եւ արենելցի լինելու գաղափարներից, անպայմանօրէն շփման մէջ ափտի լինեն թուրքերի հետ, որոնք նոյնպէս առաջաւոր Արեւելքում ունեն իրանց ազգային և արեւելեան ձգտումները, անհրաժեշտ է որ մի առ մի քննութեան առուտեն յիշատակուած տեսակէտները : Այս վերլուծութիւնը պիտի կատարել, նախ՝ զուտ ազգային շահերի, և, երկրորդ՝ ընդհանուր Արեւելքի հզօրութեան և խաղաղութեան տեսակէտից :

Պէտք է նկատել, որ հայ և թուրք ժողովուրդները, իրանց ազգային ձգտումներից զատ, ունեցած են նաև յատուկ գեր և առաքելութիւն Մերձաւոր Արեւելքի ճակատագիրը դարբնող հարցերի մէջ, մի

հանգամանք, որ աւելորդ պատճառ եղած է այդ ժողովուրդների յարաբերութեանց լարման։ Ուստի պարզ է ինքնին, որ քիչ վերը յիշատակած կարծիքների լուսաբանութեան ժամանակ, զուգընթացաբար քննութեան պիտի առնենք նաև այդ ժողովուրդների ձրգառումներն ու ցանկութիւնները։

Այցնենք մեր ջօշափած մտքերի վերլուծութեան։

Ծէուֆ, Ահմէտ ձէփոէթ և Սուլէյման Նազիփ պէյերը յայտարարում են, որ հայերը շատ երջանիկ են ապրած թուրքիոյ սահմաններում և, առաջնակարգ գիրք ունենալով երերի մէջ, միշտ գոհ եղած են թրքութենէն։ Այդ երաների ժամանակները ըստ թուրք հրապարակագիրների կարծիքին, սրանից միայն վաթսուն տարի առաջ եղած են։

Պէտք է խոստովանել սակայն, որ այս կարծիքները չեն համապատասխանում պատմական տուեալներին։ Թուրք գործիչները, եթէ լրջօրէն ուզում են մօտենալ հարցին, իրանց մատը պիտի դնեն ուզիղ վերքի վրայ։ Այդ անհրաժեշտ է ոչ միայն հասկանալու համար Հայկական Հարցի բուն պատճառները, այլ եւ բացատրելու թուրք երիտասարդութեան իսկ ծոցում առաջացած խմորումները։

Թրքութեան ղեկավարները մօռանում են, որ սրանից վաթսուն տարի առաջ, թուրք առողջ երիտասարդութիւնը, տեսնելով հազար ու հազար բարբարոսութիւններ երկրի մէջ, տեսնելով օսմանեան պիտութեան քայլայումը, կառավարութեան ապիկարութիւնն ու անարդարութեանց անվերջ շարանը, յեղափոխական միջոցների էր դիմում եւ սահմանադրութեան ծրագիրներ որոճում։ Զէ՞ որ էէնց այդ նոյն թուականներին էին ծնունդ առնում ՚եւ զըթքախտ Ալի Ֆուատ ու Միթհատ փաշաների ծլաղիր-

ներք։ Ուրեմն, Ներկայ ղեկավարների կարծիքով այդ մարդիկ առանց հրամայական պատճառի, սոսկ ուրիշներին նմանուելու ցանկութեամբ եւ կամ օտարների ճնշման առաջ էր, որ կ'ընդունէին Օսմանեան կայսրութեան ներքին բարեփոխութեան անհրաժեշտութիւնը, եթէ պատմական ճշմարտութեանց ինդադիւրումը չէ մեր նպատակը, եթէ պատմութիւնը հիմք ունենալով է, որ պիտի բացատրենք այժմեան և յետագային լինելիք աղէտները, ապա Միթհատ փաշային կուռք դարձնող Երիտասարդ Թուրքերն ու նրանց ժառանգորդ էնկիւրի գործիչներն պիտի ընդունեն, որ վաթսուն տարի սրանից առաջ թուրքերի մէջ առաջացած յեղափոխական խմորումները ծնունդ էին ոչ թէ անհատների քմահաճոյքի, այլ նրանք արդիւնք էին գարաւոր աղէտների, բարբարոսութեանց և անլուր անարդարութեանց։ Միթհատ փաշայի երկրագունդները պիտի խոստովանեն, որ մինչեւ Միթհատը Օսմանեան կայսրութիւնը այնպիսի պատրութակ ունէր, այնքան էր նեխուած ու քայլայուած, որ առանց ներքին բարենորոգչական հզօր փորձի՝ այդ կայսրութեան վերջնական փլուզումն ու կործանումը կը լինէր անխուսափելի։

Նրանք պիտի ընդունեն նոյն թուրք ղեկավարների կողմից հաստատուած այն բացարձակ ճշմարտութիւնը, որ սրանից վաթսուն տարի առաջ օսմանեան կայսրութիւնը ներկայացնում էր իրանից ենիշերական մի տիպար պետութիւն, որի բանակալութեան տակ հեծում էին բոլոր ժողովուրդները անխտիր, մէջն առնելով, ի հարկէ, նաև թրքութիւնը, այն տարբերութեամբ միայն, որ, օրինակ, հպատակ հայր շատաւելի էր տուժում, քան իշխող թուրքը։

Ահա այստեղ են թագնուած այն պատճառները,

որոնք երկրի օրինաւոր իշխանութեան դէմ յարատեւ-
աօրէն ըմբոստ վիճակի մէջ էին պահում թէ՛ հապատակ
հային և թէ՛ իշխող թուրքին . Այս ծշմարտութիւնը
պէտք է զիտակցեն բոլոր նրանք, որոնք իրենց հա-
կատագիրը կապել են Արեւելքի վերածնունդի հետ,
այս առաւել եւս պիտի զիտակցեն թուրք գործիչնե
րը, որոնցից կախուած պիտի լինի իրենց հայրենիքի
վերջնական կործանումը կամ փրկութիւնը . Այս ընդ-
հանուր զիտազութիւնից յետոյ այժմ անցնենք այն
մեղադրանքների քննութեան, որոնք ուղղուած են
յատկապէս հայ ժողովուրդի դէմ:

Թիւրիմացութիւններից խուսափիած լինելու հա-
մար յայտնենք կանխապէս . որ հայութիւնը թուր-
քիոյ տարբեր մասերի մէջ բնականորէն դատապարտ-
ուած է եղել միանգամայն տարբեր վիճակի:

Հայութիւնը, յրուած լինելով օսմաննեան կայ-
րութեան ամբողջ տարածութեան վրայ, գտնուել է
ոչ նոյնանման պայմանների մէջ և ըստ այնմ էլ են-
թարկուել է ոչ նոյնանման հալածանքների : Եթէ, օ-
րինակ, վերցնելու լինենք պոլսահայութիւնը, ապա
պիտի ընդունենք ծշմարտութիւնը Ահմէտ ձէվաէթի
և Բառու պէյի այն խօսքերի, ուր նրանք պնդու-
են, որ հայերը Թուրքիոյ մէջ մասնակի ճնշումների
ենթակայ չեն եղած . Աւելին, Պոլսահայութիւնը մայ-
րաքաղաքի մէջ ապրող միւս ժողովուրդների հետ մէկ-
տեղ վայելած է երկրի մէջ իշխող համեմատական ան-
դորրութիւն և եղած է խալիքանների յատուկ հոգա-
ծութեանց և ուշադրութեան առարկան . Այդ էր վի-
ճակը գաւառների մէջ . Այստեղ իշխողը՝ բռնութիւնն
էր, քմահաճոյքը . գաւառի ազգաբնակութիւնը են-
թակայ էր շարունակական հալածանքների ու ճըն-
շումների :

Պոլիսը սուլթանների հարազատ զաւակն էր, իսկ
գաւառը՝ խորթ: Գաւառը վաստակում էր, իսկ Պո-
լիսը՝ վայելում: Այս ակնբախ անարդարութիւնն
անշուշտ ունէր իր խոր հիմնական պատճառները . իսկ
այդ պատճառներից մինն ու զլխաւորն էլ այն էր,
որ րմբոստ գաւառի դէմ անհրաժեշտ էր գոնէ հրու եւ
հաւատարիմ մայրաքաղաք ունենալ . Սրանով պէտք է
բացատրել նաև այն չափազանց նշանակալից երեւոյ-
թը, թէ ինչպէս Պոլիսը երբէք փորձ չարաւ որ եւ է
արդար ըմբոստացումով հայրենիքը փրկել կորուսափի .
այս է պատճառը, որ թուրք յեղափոխութեանց որ-
րանը եղան՝ Սելանիկ, Մանաստիր, երզրում, Կիսա-
րիա, Գոնիա, Էնկիւրի, իսկ Պոլիսը՝ երբէք: Թուրք
յեղափոխանների բոլոր ցոյցերն ու ըմբոստացումները
մայրաքաղաքի մէջ գրեթէ միշտ նոյն արիւնոտ ու
եղերական վախճանն ունեցան, որովհետեւ մայու-
քաղաքի ժողովուրդին խորթ ու անհարազատ էին այդ
շարժումները: Ինչպէս Պոլսոյ թրքութեան բարօր ու
հանգիստ կենցաղով չի կարելի չափել թուրք ժողո-
վուրդի ընդհանուր վիճակն ու ծշտել թրքական յեղա-
փողութեանց բնոյթն ու նկարագիրը, նոյնպէս և պոլ-
սահայութեան վիճակով չի կարելի թուրքիոյ մնաց-
եալ հայութեան կացութիւնը պարզել և հասկանալ
հայկական շարժումների իսկական պատճառները: Քա-
նի մայրաքաղաքից հեռանալու լինենք և որքան մօ-
տենալ փորձենք դէպի երկրի ներսերն ու մասնաւո-
րաբար դէպի թուրքահայ վիլայէթները, այնքան ա-
ւելի ու աւելի յստակ ու որոշ պիտի զառնան այն
տարբերութիւնները, որ կային մայրաքաղաքի և բուն
հայրենիքի մէջ ապրող հայութեան հատուածների մի-
ջեւ: Գաւառի եւ մասնաւորաբար հայկական նա-
հանգների հայ ժողովուրդը յարատեւօրէն և շարու-

Նակարար ենթակայ էր ամէն տեսակ բռնութեանց ու հալածանքների : Մեր խօսքերի ճշմարտութիւնը հաստատող փաստ կարող է ծառայել հենց այս մէջ հատիկ հանգամանքը, որ այն ժամանակ, երբ մինչեւ 17—18 դար թոքաթիզ մինչեւ թաւրիզ ձգուող ամբողջ տարածութիւնը բռնուած էր հոծ հայ ազգարբնակութեամբ, այդ թուականներից յետոյ այդ ժողովուրդը՝ այլիւս այդ երկրամասի վրայ չկար :

Ո՞ւր գնացին արդեօք այդ հայերը և ի՞նչ վախճան ունեցան նրանց կրած տառապանքները ...

Սուլէյման Նազիֆ էֆէնախները . որոնք պնդում են, թէ Անատոլուն հինգ մատերի պէս ծայրից ծայր գիտեն, անշուշտ գիտեն նաեւ մեր հարցի պատասխանը : Այդ պատասխանը Նրանք կարող են ստանալ նաեւ արդէն պատմութեան սեփականութիւն գարձած բազմաթիւ յիշատակազրերից, կառավարական գաղտնի հազորդագրութիւններից եւ եւրոպական համբորդների այլ եւ այլ գրուածքներից, եթէ անհնար է տեսնել գարերի ընթացքում սրածուած հարիւր հազարաւոր հայ մարդկանց գիտկները, ապա բացարձակապէս անհնար է չնկատել հարիւրաւոր հայ վանքերի, մատուանների եւ եկեղեցիների աւերակները, որ ցցուած են երկրի ամեն մէկ անկիւնում, իւրաքանչիւր քայլափոխին . յաճախ թուրք ու քիւրդ գիւղերի մէջ : Սուլէյման Նազիֆսերը պիտի տեսնեն և կենացանի բեկորները նախկին հոծ հայութեան, երբ անցնեն Լազիստանի վրայով, երբ խօսեն համշենի «թուրքերի» հետ, որոնք նախկին հայեր են, այժմս էլ հայախօս, բայց բռնութեամբ խսլամացած, թուրքացած, Նրանք իսպիր, Թորթում, Կիսկիմ հովիտների մէջ պիտի գտնեն գիւղեր ու քաղաքներ, որոնց բնակիչները սպիտակ փաթթոցներ ունեն իրենց գլուխների վրայ

և մոլեռանդ թուրք են առաջին հայեացքից, բայց որոնք, սակայն, կամ կարապետ օղլու Հասան են, կամ Արքին օղլու Մէհմէտ, և այսպէս . . . գրեթէ ամենքը : Տաւրոսեան շղթայից գէափ Բաթման Սու իջնելով, նրանք պիտի հանգիպեն Բալագրի, Ռաշկօթանցի քիւրդ աշխրէթներին որոնք մինչեւ հայութիւնը այսորուայ գէկավարներինը, — և դուք Նրանցից շատերի մօտ հայկական ծագման հետքերը պիտի գտնէք :

Պատմութիւնը շատ է հարուստ մեր խօսքերը հաստատող հազար ու մի տուեախներով . որոնց յիշատակութիւնը աւելորդ կրկնութիւն պիտի լինէր միտյն : Բայց մի հանգամանք վերստին ևս պէտք է յիշատակել : Հայկական նահանգները . ուր 60—80 տարի առաջ կը բնակէո հայ ժողովուրդի մեծ մասը, ուր Յսմանեան պետութեան գոյութիւնը անոււանական էր, ուր քրդական տէրէպէյութիւնն էր իշխում, այստեղ կային խամբիրութիւնն և մարգեանց վաճառում, այստեղ իշխող գոյնում ո՛չ չէր աթի և ո՛չ էլ նիգամի որէ քները և այդպէս . էր մինչեւ վերջին օրերը : Սուլէյման Նազիֆը խօսում է Մշոյ աշխարհի և միւս նահանգների մասին, բայց եթէ ինքը մոռացել է . իր հայրը յիշում է անշուշտ, թէ ինչպէս միայն 1840 թուականներին սկսեցին քանդել քրդական Մշոյ Զառուրմէ բերդը, Մոկանց բերդը, Բոհղանի, Պիթլիսի, Գեւաւաշի, Խնուսի և Բայազիփիտի բերդերը, որոնք պահպանուում էին քիւրդ բէկերից՝ միայն խափիր . ըս-

տրուկ և ստոր ուայս ժողովուրդի վրայ իշխելու համար:

Մի՞թէ այդ օրերը երանելի օրեր կարելի է համարել: Անշուշտ, ո՞չ: Այդ կարգերի մնացորդները զեռմինչեւ այսօր գոյութիւն ունեն Տերսիմի և մի շարք ուրիշ շրջանների մէջ, որոնց գէմ եռանդուն կերպով պայքար են մղում: մէկ կողմից՝ իրենք էնկիւրիի գործիչները, իսկ, միւս կողմից՝ անխափիր բոլոր ուայաները, պայքարում են ճիշտ այնպէս, ինչպէս պայքարում են հայերը.

Պոլսոյ և մի քանի ուրիշ քաղաքուրի հայ ազգաբնակութիւնից բացի, մնացեալ բոլոր վայրերի հայերը խալամերի համար եղել են գեավուր, թուրքի համար՝ ստոր արարած, պաշտօնեայի համար՝ կթան կով, հառավարութեան համար՝ շահագործման աղքիւր, տերէ պէյի համար՝ իրաւազուրկ խափիր, իսկ այս վիճակի մէջ ընական է, որ հայը իրեն երջանիկ երբեք չէր կարող զգալ: Եթէ թուրքը հեծում էր երկրի մէջ իշխող անանեկութեան պատճառով, հայը հեծում էր եւ այդ, իսկ առաւելապէս նաև այն պատճառով, որ դըժբախտութիւն էր ունեցած հայ ծնուելու: Անշուշտ այդ ստրկական դրութեան հետեւանք պիտի համարել հայի խալամանալու, աղքատանալը, թուով նուազիլը, ջարդը, գաղթը, և պերջապէս, առողջ և տոկուն ժամանակացումը: որ հայկական շարժմանց անունն է երամ:

Սակայն անցեալի վրայ կանգ չառնենք երկար: Եա ծանօթ է բոլոր նրանց, որոնք զիտեն փաստերն ու դէպէրը տեսնել ճիշտ այնպէս, ինչպէս նրանք արձանագրուած են պատմութեան էջերի վրայ: Այդ աղեալը տառապանքների ու զարհուրանքի մի ամբողջ շրջանն է, որ դէպի մահ է առաջնորդել հայ ժու-

դովուրդը և քայքայման տարել Օսմանեան հարստութիւնը: Այսքանը բաւ համարելով, անցնենք թուրք մտաւորականութեան երկրորդ մեղաղբանքին:

Թուրք հրապարակախօսները պնդում են, որ հայկական յեղափոխութիւնը բնական հետեւանք չէ տաձիկ կառավարութեան և խամամութեան հալածանքների և բռնութեանց, ոչ էլ հայ ժողովուրդի ինքնազիտակցութեան արդինք է, այլ նա արհեստականօրէն մտած է հայ ժողովուրդի մէջ արտաքին գրգըռմանց չնորհիւ, գլխաւորապէս ցարական Խուսիոյ եւ յատկապէս ոռւսական ու պարսկական հայերի միջոցով:

Եթէ այսպիսի ըմբանումը երեւոյթների գիտակցական խեղաթիւրում չէ, ապա զարմանալ միայն կարող ենք այն պարզամտութեան վրայ, որ հանգէս են բերում թուրք գործիչները բա ու հնձոստ հարցերի լրւաբանութեան ժամանակ: Այս տիսուր փաստը մի աւելորդ անգամ ևս զալիս է ապացուցելու, որ յաղթական թուրքիան վերջնականապէս զատապարտուած է մահուան, որովհետեւ մի պետութիւն, մի ժողովուրդ, որ ընդունակ չէ իւր պատմութեան սեւ էջերը տեսնել, երբ նա, մի անորինակ ինքնաւաւանութեամբ ատրուած չարիքը շարունակ ոչ թէ իրեն, այլ ուրիշների մօտ է որուում, երբ նա որամազիր չէ իր վերքերը բուժելու, այզպիսի մի պետութիւն անխուսափելիորէն պէտք է կործանուի:

Փորձենք մի քանի պատմական փաստեր յիշատակել, ցոյց տալու համար ներկայ թուրք զեկավարների և մտաւորականների սխալ բացատրութիւնները: Այդ անհրաժեշտ է, որովհետեւ հայկական շարժումը բացատիկ երեւոյթ չէր թուրքիոյ մէջ, այլ նոյնանման երեւոյթների մի առանձին մասնիկն էր, հետեւանք

Թուրք պետական և հասարակական կեանքի : Շատ հեռուները չգնանք, բաւականանանք միմիայն 19րդ դարի Թուրքիայ պատմութեան մի քանի խոշոր անգամերը յիշառակելով :

19րդ դարի սկիզբները Եգիպտոսը սպառնալիքի
պէս կախուում է օսմանեան կայսրութեան գլխին, չնայելով, որ նա իսլամ էր և սինի աղանդին պատ-
կանոց։ Պոլսոյ սուլթանները ուսւական սուբյներով և
նախապէս Եգիպտոսի պահանջները բաւարարելով
միայն՝ կարողանում են այդ շարժումը խեղեկել։ Արդ-
եօք այս անկարողութիւնն էր թէ օտար գրգռմների
արդիւնք։

Նորից 19-ըդ դարի առաջին կէսին փոքրիկ եղիտի
ժողովուրդը, չտանելով եղած կրօնական հալածանք-
ները, նախատինքո և խորականութիւնը, բազո՞քի
գերի մէջ է մանում, որի հետեւանքով Ալի փաշայի
ձեռքերը կարմրում են այդ ժրածան ժողովրդի արիւ-
նով։ Եղիտիները գործի՞ք էին արգեօք օտարնե-
րի ձեռքին, թէ, ընդհակառակը, հարկադրուած էին
պայքարի ուղին բռնել, յուսալով, որ զէթ այդ ճա-
նապարհով պիտի կարողաւան իրենց գրութիւնը մի
քիչ բարւոքել։

՚ոյն 19-րդ դարի առաջի կէսին ուժի են կանգնում
խլամ պօշնակները, ըմբուտութեանց հունի մէջ են
նետուում նաև զարադարգիները, սերպերն ու յոյները :
Միթէ սրանք բոլորը գործիքնե՞ր էին օտար պետու-
թեան ձեռքում, միթէ սրանք չունէին գեգոհութեան
ներքին պատճառներ և միթէ այդ պատճառները վե-
րացնելը անհնար էր բացարձակապէս :

19-րդ գարի կէսերին Քիւրտափառնը նոյնպէս ոտքի է ելնում և հուրի ու սուրի է մատնում Քիւրտ ժողովուրդը։ Արգեօք Քիւրտիրը նոյնպէս գործիք էրն

ուեէ պետութեան ձեռքում. թէ՞ Նրանք ունէին իրանց ներքին վիշտը, հոգեկան պահանջները, որոնք չէին բաւարարուում:

Նոյն դարու կէսէրին մի փոքրիկ եւ քանակով
աննշան ժողովուրդ՝ Զուլամերիկի հողմերի ասորինե-
րը՝ բմբոստութեան են գիմում իրանց երած հարստահա-
րութիւնները մեզմելուն պատակով։ Էմբոստն երբ սրած-
ւում են ու ջարդուում։ Այստեղ նոյնպէս օտարի
գլաւադրութեանց հետքերը որոնենք։

Սուրբացիները, լինեն մահմետական գրուգներ
թէ քրիստոնեայ լիբանանցիներ, կտորուում էին շա-
րունակ: Նրանց ցա՞ւն ինչ էր: Նրա՞նք որ պետու-
թեան գործիքներ էին արդեօք:

Խարբերդի նահանգի զլկաց ժողովուրդը ինչո՞ւ
ըմբստ էր, բողոքող ու պայքարող։ Ո՞ր օտարի հետ
էր նա իր բախտը կապել։

Պուլկարական շարժումը պարզ հետեւանք չէր
թուրք պետական վարիչների ապիկարութեան և այդ
չէր պատճառը արդեօք, որ ուշ մնացած Միթհատ փա-
շան ցանկանում էր բարենորոգումներով դրութիւնը
փրկել :

Ո՞վ ստեղծեց ալրանական շարժումը։ Զէօ որ առնառւար իսալիքայութեան ամենահաւատարիմ պաշտպանը և ամենալաւ զինուորն էր։ Երիտասարդ թուրքի՞րը նրան ըմբռատ դարձրին, թէօ օտար պետութիւնները։

Եւ, Վերջապէս, վերօրէք արաք ժողովուրդը, որ
Թուրքիոյ ամենամեծ տուն է թէ՛ իր թիւով. թէ՛
անցեալով և Առաջապահութօնինամբ: Ի՞նչն էր
պատճառը, որ Սաման ու Եթէնը գերեզմաններ
դարձան թուրքինութէամար, և նչո՞ւ նրանք
ըմբուտացել են Կառավարութեան կեմ: Օտարներին

ծախուածնե՞ր էին նրանք, թէ, ընդհակառակը, աւելի քան օրինապահ քաղաքացիներ, մի պայտ մանով սակայն, որ յարգուած լինեն իրենց ամենատարրական մարդկային իրաւունքները :

Զշարունակենք սակայն, բաւականանանք այս քանով և ընդունենք, որ ժողովրդական այս բռնկումները չի կարելի ո՛չ խնդիրութեամբ, ոչ ծախուածութեամբ եւ ո՛չ էլ գաւաճանութեամբ բացատրել :

Այստեղ գրեթէ դեր չէին կատարում նաև ազգային ու կրօնական տարբերութիւնները։ Աղէտների պատճառը պէտք է որոնել թուրք կառավարութեան բարբարոսութեան և ժողովուրդներ կառավարելու անընդունակութեան մէջ։ Այս տողերը գրում ենք ոչ թէ յաղթական Թուրքիոյ արքանապատութեան գգացումները վիրաւորելու համար, այլ այն միակ ցանկութեամբ, որ յատակ ու որոշ լինեն օսմանեան կայութեան և քայլայումի խսկական պատճառները։ Երբ խալամութեան աչքում կեավուրի համբաւ ունեցող Անգլիան կարողանում է կառավարել Եգիպտոսը, իր ձեռքն ունենալ խալամութեան կեդրոն Հէճազը։ Մէքքով ու Մէտինէով, իշխել Միջազետքի մէջ, ուր շիաների սրբազնութիւն է Քերպարայով, ամուր պահել իր ձեռքերի մէջ հրէայ ժողովուրդի ողին՝ Պաղեստինն իր Երուսաղէմով, ըմբոսա Եէմէնն իր Սաանայ բերգով և լուսական միթէ սրա պատճառը այն չէ, որ Անգլիան գիտէ ոչ միայն գրաւել և իշխել, այլ և իր իշխանութեան տակ եղած ժողովուրդների իրաւունքները գէթ մի չափով յարգել։

Նա գիտէ այդ ժողովուրդները իւր ֆիզիքական ուժի, տնտեսական և զինական հզօրութեանց հիմք ծառայեցնել, առանց նրանց բնաջնջելու։ Միթէ այդ գործար էր անել խալամների խալիքայի կամ համբա-

լամութեան երազներով տարուած երիտասարդ-թուրքերի և կամ նրանց ժառանգորդների համար։ Եթէ նրանք ունենային կարողութիւն կառավարելու, եթէ կարողանային ըմբռնել զրութիւնը և ունենային խոհեմութիւն և լայնասրտութիւն, անջուշտ Թուրքիան այսօրուայ ողբալի վիճակը չէր ունենայ։

Նոյնը պիտի կրկնել և' միւս հողամասերի մասին մէմալ փաշայի կախաղանները Սուրբիայում, Երիտասարդ-թուրքերի ահոելի բռնութիւնները, հալածանքները Ալպանիայում, Սուլթանների կոտորածները, վայրագութիւնները Յունաստանում, Ղարադաղի, Պուլկարիոյ և Սերպիոյ մէջ խորթացրին այդ ժողովուրդները թրքութիւնից և նրանց մղեցին դէպի բաժանում, անջատում, ապատամբութիւն։

Շատերի մօտ գոյութիւն ունի նաև այն սխալ կարծիքը, որ իբրև թէ Թուրքիոյ մէջ եղած շարժումները կրօնական պատճառներ են ունեցած։ Ենթադրուում է, որ քրիստոնեայ պետութիւնները, տարուած լինելով հաւատքի և գաւանանքի խնդիրներով, այլևայլ առիթներով միջամտել են Թուրքիոյ գործերին՝ խալամական տիրապետութեան լծից ազատելու համար քրիստոնեայ ժողովուրդները։

Այս կարծիքը սխալ է սակայն հենց այն պատճառով, որ թէ՝ ժամանակագրական կարգի, թէ՝ ժողովուրդների թուի, թէ՝ ըմբռստ երկրամասերի տարածութեան և' թէ ըմբռստութեան ուժգնութեան տեսակէտից առաջին տեղը բռնում են ոչ թէ քրիստոնեայ, այլ խալամ հողամասերն ու ժողովուրդները։

Մի կողմ թողնենք միջին գարերից մինչև 19-րդ դարը ընդգրկող ժամանակաշրջանը, երբ Թուրքիոյ սահմանակից հեթումները գաշնակից էին թրքութեան, երբ Բիւղանդիանի մնացորդ ժողովուրդն ու Թուրքիոյ

հպատակ յոյները գինակցած էին թրքութեան հետ ընդդէմ քրիստոնեաների, երբ սերբերը թուրք իշխանութեան քաղաքակրթութեան և գինական ուժի հմը կը կազմէին, գարճնելով սերբ լեզուն գրականութեան, խալիֆաների և պաշտօնէութեան լեզու, չիշատակենք նաև տարբեր շրջանների մէջ բազմաթիւ խոլամ ցեղերի ըմբոստացումները թրքութեան դէմ և բաւականանանք միայն այն շարժումներով, որ սկսուել ու ծաւալուել են 19-րդ դարի ընթացքում։

Այդ շրջանի շարժումները ըստ ժամանակագրական կարգի և բար ազգային բնոյթի պիտի դասաւորել հետեւեալ ձեւով։

1.— Եգիպտոս (խոլամ), պօշնակներ (խոլամ), առաքներ (խոլամ)։ Շարժումները եղած են 19-րդ դարի սկիզբները։

2.— Ալբանացիք (խոլամ), յոյներ (քրիստոնեայ), զարադացիք (քրիստոնեայ), սերբերը (քրիստոնեայ), ուռմանացիք (քրիստոնեայ), զղլաշներ (աղանդաւորներ)։ Շարժումները եղած են մինչեւ 19-րդ դարի առաջին կէսը։

3.— Եղիստներ (աղանդաւոր), քիւրտեր (խոլամ), ասորիներ (քրիստոնեայ), սուրբացիք (քրիստոնեայ և խոլամ)։ Շարժումները եղած են 19-րդ դարի առաջին յիսնամեակի վերջերին։

4.— Պուլկարներ (քրիստոնեայ), մակեդոնացիք (քրիստոնեայ) և մի շարք ապստամբութիւններ։ Շարժումները եղած են 19-րդ դարի երկրորդ կէսին։

5.— Թուրքեր և հայեր։ Սրանց շարժումները եղած են 19-րդ դարի երկրորդ յիսնամեակի վերջերին։

Այսպիսով, յիշատակելով միայն մեծ շար ժումները և այդ շարժումների ոչ թէ կրկնութիւնները, այլ միայն նրանց սկզբնաւորութիւնները, պիտի տեսնենք

որ 19րդ դարի ընթացքին թուրքոյ սահմանների մէջ ապրող ժողովուրդներից ապստամբ վիճակի մէջ եղած են 17 ժողովուրդներ, որոնցից եօթը՝ խլամ, սիւննի աղանդին պատկանող, երկուուր խլամ աղանդաւորներ, իսկ ութը՝ քրիստոնեայ դաւանութեաւց պատկանող։

Այժմ, եթէ նկատի առնենք ապստամբ ժողովուրդների բուական մեծուրիննը, պիտի տեսնենք, որ քրիստոնեաները այս տեսակէտից բռնուր են շատ համեստ տեղերից մէկը։

Դասաւորենք այդ ժողովուրդները ըստ թուական մեծութեան, առանց ընթերգողի ուշադրութիւնը հինու հանրածանօթ թուանշաններով ծանրաբեռնելու։

Արաբներ, եգիպտացիք, թուրքեր, սերբեր, յոյներ, ուումէններ, պուլկարներ, հայեր, քիւրտեր, պօշնակներ, ալպաններ, զղլաշներ, զարադացիներ, մակեդոններ, լիբանանցիներ, բուզներ, ասորիներ և այլն։

Էստ երկրի տարածութեան, խլամները, ի հարկէ ասհամեմուտ շատ աւելի մեծ տեղ են բռնում։ Միայն արաբարնակ վայրերը հաւասար են կայրութեան մնացեալ բոյր վայրերի տարածութեան։

Իսկ բար յարանեւութեան և ապստամբութեանց ուժգնութեան շարժումների դասաւորութիւնը հետեւեալ պատկերն է տալիս։

Արաբներ, սերբեր, զարադացիներ, յոյներ, պօշնակներ, զղլաշներ և յետոյ արդէն գալիս են ուրիշները։

Երբ պատմութեան էջերը քրքրելով համոզուենք, որ մեր յայտնած մտքերը անխախտ ճշմարտութիւններ են, այդ ժամանակ նաև նրանցից բղխող հետեւեալ եղրակացութիւնները կը դառնան միանգամայն պարզ և անառարկելի։

Ա. — Թուրքիոյ վարչութեան և խալիֆայի դէմ ամենից առաջ և ամենից շատ և ուժեղ կերպով ապստամբած են ամենամոլեռանդ իսլամները, գլուխ ունենալով արաբները:

Բ. — Շարժումների պատճառներն ու առիթները միայն կրօնական հակամարտութիւնները չեին: Դըժգոհութեան գլխաւոր ազգիւրը ի՞նքը թուրք վարչութիւնն էր, իր պետական, ազգային և տնտեսական յոռի քաղաքականութեամբ: Թուրքիոյ հովանի տակ ապրող ժողովուրդները՝ գրեթէ բոլորը և գրեթէ միշտ՝ ապստամբ վիճակի մէջ էին, որովհետեւ նրանք ամենքն էլ յարատեւօքէն և ամենուրեք ենթակայ էին ամեն տեսակ զրկանքների ու հալածանքների:

Գ. — Թուրք պետական վարիչները չըմբռնեցին կամ չցանկացան ըմբռնել այս շարժումների իսկական պատճառները եւ այդ իսկ պատճառով, յենուելով միմիայն թուրք ժողովուրդի վրայ, փորձեցին այս ապստամբութիւնները բռնութեամբ խեղզել: Նրանք ձախողեցան և օսմանեան կայսրութիւնը աստիճանաբար մասնատուելով ու ջլատուելով, այսօրուայ վեճակին հասաւ:

Եւ յանկարծ այսօր, պատճական այս անողոք փաստերից ու ճշմարտութիւններից յետոյ, երբ թուրք վարիչները փորձում են ներշնչել իրենց և ուրիշներին, որ օսմանեան կայսրութեան մէջ ապրող ժողովուրդների դգոհութեանց և ըմբռստացումների պատճառները պիտի որոնել օտար պետութիւնների գաւադիր խալերի մէջ, դրանով նրանք ամենէն առաջ գալիս են վկայելու, որ թուրք պետութեան քայլայումի եւ կարծանման բնթացքը բնաւ չէ գաղրած, այլ նա, ընդհակառակը, մնում է իր ուժի մէջ և պէտք է շարունակուի: Որովհետեւ, վերջապէս, չի' կարելի հար-

ցերը խեղկատակութեան հասցնել և ենթադրել, թէ ամբողջ ժողովուրդներ, վտանգելով հայրենիք, տուն եւ ունեցուածք, կեանք ու պատիւ, կաշառքի գնով դաւերի ու դաւադրութեանց զոհ են դառնում և կուրօրէն՝ ապստամբութեանց արիւնոտ ճանապարհը բըռնում: Եւ այն էլ Թուրքիոյ պէս մի պետութեան մէջ, որի դաժանութիւնն ու բարբարոսութիւնը յայտնի է ամենքին:

Այն ինչ՝ այդ ըմբռստութեանց պատճառները աւելի քան պարզ են ու որոշ: Ապստամբում էին, որովհետեւ անկարելի էր դժոխքի մէջ ապրել, անկարելի էր հաշտուել մի կեանքի հետ, որ յաճախ մահուանից վատ էր:

Թողնենք հանգիստ ուրիշներին և մեր մտքերը աւելի պարզած լինելու համար մի քանի խօսք ասենք նաև Ազգային Մեծ ժողովի պետի արիւնակիցների մասին:

Սրանից մօտ վաթսուն տարի առաջ կովկասի ազգատական լեռնականները Բառով պէյի հօր կամ պապի հետ թողնում են Կովկասեան լեռները և ուստական բարբարոսութիւններից ու Երմօլովյների գաժանութիւններից ազատուելու համար անցնում են Թուրքիա, յուսալով կրօնակից երկրի մէջ զանել երազած ազտառութիւնն ու հանգստութիւնը: Ի՞նչ տեսան սակայն այդ գժբախտ լեռնականները իրենց նոր հայրենիքի մէջ: Մեր խօսքը անշուշտ բուն լեռնցի ժողովրդի մասի է և ոչ Ռէուֆ պէյերի: Նրանք այստեղ միայն հարեմներ տեսան և միայն արցունք ու ստրկութիւն գտան: Եւ միթէ էնկիւրի մէջ նստած չերքեզները, արթազներն ու ինգուչները իրապէս համոզուած են, թէ իրենց այն ազգակից եղբայրները, որոնք կապեցին իրենց բախտը յունական զէնքի հետ և յոյն բա-

Նաևի հետ էլ թողին Անստովուն ու գաղթեցին, իրօք քրիստոնեաներին վաճառուած դաւաճաններ էին։ Հստիս, դաւաճանները Ազգային Փողովի մէջ նստած Բէուփ պէյերը կարող են լինել, որոնք, թրքութեան հաւատարիմ մնալու գնով, վաճառքի են հանել իրենց հարս զատ ժողովրդի շահերը, տեղային պահանջներն ու ազգային արժա ապատուութիւնը։ Խսկ ըմբռատ չեր քեզներ՝ ժողովրդասէր և անձնազոհ մարդիկ են, որոնք, Թուրքիոյ բարբարոսութիւնների գէմ մաքառելով, Նպատակ ունեն հալած ական ազգակիցների համար գէթ մի քիչ տանելի վիճակ ստեղծել։ Այս պարզ և ակնրախ ձշմարտութիւնը եթէ էնկիւրին գիտակցէր, անշուշտ այսօր ո՛չ թէ իր գէմ, այլ իրեն հետ կ'ունենար քաջ և արի չերքեզ ժողովուրդը։

Սակայն Թուրքիոյ մասին այսքանը բաւ համարելով, մօտեն անք հայկական շարժումների պատճառների լուսաբանութեան։

Մենք տեսանք, որ հայկական շարժումը բացարիկ երեւոյթ չէր Թուրքիոյ մէջ, այլ նա, ըստ Ժամանակագրական կարգի, վերջին տեղն էր բռնում նոյն անման երեւոյթների երկարածիդ շարանի մէջ։ Հայկական շարժումը զուգաղիպւում էր Թուրքական շարժման և ունէր նոյն պատճառները, ինչ յատուկ էր ընդհանրապէս Թուրքիոյ մէջ ծագում առած բոլոր շարժումներին։ Ենթաղրել թէ օսմանեան կայսրութեան հովանիի տակ ապրող տասն եւ վեց ժողովուրդների ապստամբութիւնները օրինաւոր հիմունքներ ունեն և միայն հայկականն է բացառութիւն կազմողը՝ իրեւ կաշառուած եւ վաճառուած չարժում։ այդ, ի հարկէ, աւելի քան ծիծաղելի է։ Հայութիւնը օտար դաւազրութեանց զործիք համարել, այդ կը նշանակէ զիտաւորեալ կերպով ստել և մեղանչել բանականու-

թեան բոլոր թելադրանքների դէմ։ Հայութիւնը, այս' կարելի է մեղադրել, սակայն բոլորովին տարբեր ուղղութեամբ։ Հայ ժողովուրդը մեղաւոր կարող է համարուել այն բանի համար, որ սրանից 50—60 տարի առաջ, երբ նա իր ազգային-քաղաքական զարթնութիւնը թիւնը թեւեակուեց՝ իր ազատութեան տիրանալու համար, նա չխնայեց ո՛չ գոյք, ո՛չ ունեցուածք և ո՛չ էլ կեանք։ Ահա այս բանի մէջ Սուլէյման նազիֆնեները հայ ժողովուրդը կարող են մեղադրել։ Երբ նազիֆի հայրը Մշոյ գաշտի ամենայետամնաց Ալիբերուբուն գիւղի պարզ չինակի գրպանից հանում է «Ազատն Աստուած այն օրից, երբ հաճեցաւ շունչ փէել, իմ հողանիթ շինուածքին ազատութիւն պարգեւել, ես այն օրից ուխտեցի, ազատութիւնը սիրել», — այս բնաւ պատահական երեւոյթ չպիտի համարել, աւելին։ Նազիֆի հայրը եթէ իր խուզարկութիւնները շարունակէր, այդ նոյն շինականի մօտ պիտի գտնէր և՛ շատ ուրիշ երգեր, որոնց բոլորի իմաստն էլ նոյնն է — ազատութիւն, ազատութիւն, ազատութիւն։

Անշուշտ կարելի է հասկանալ, թէ Սուլէյման նազիֆի հայրը. «Ազատն Աստուած»ը տեսնելով, ինչո՞ւ պիտի սկսէր զառնօրէն լաց լինել։ Զէ՞ որ ինքնազիտակցութեան եկող հայ շինականին նա իրեւ «իսափիր», իրեւ հարձ, ծառայ և ստրուկ պիտի կորցնէր։ Այսպիսի կորուստի համար հարկաւ կարելի է արցունքներ թափել։ Բայց ինչպէս կարող է էնսիլրիի մէջ բազմած իրեւ յեղափոխական յործործող երիտասարդթուրքը մեղադրել հայ շինականին ազատասէր լինելու մէջ, — ահա այս է որ չի կարելի է հասկանալ։ Զէ՞ որ Մառլիք պէյերի կեանքի և գործունէութեան ուղեցոյցը նոյնպէս «Ազատութիւն», Հաւասարութիւն

և Եղբայրութիւնը աւետող նշանաբանն է։ Թէ՞ այս բոլորը մին խօսքեր են միայն, թուրք գործիչների յայտարարութիւնը քողարկելու մասհոգութեամբ հնարուած։ Բայց այդ զէպքում գոնէ արտաքին երեւոյթները փրկելու համար հայ շինականին պետք չէ որ մեղաղըն։ Սակայն, արդար լինելու համար, այնուամենայնիւ, յիշատակենք այստեղ, որ հայ ազատագրական շարժումը, լինելով հաւդերձ մաստմբ հայ ժողովրդի կուլտուր-քաղաքական և տնտեսական փարթամութեան արդիւնք, մի մասով էլ արդիւնք էր իր շրջապատի համանման ազգեցութիւնների։ Անժըխտելի է, որ մասնաւորաբար թրքական յեղափոխական շարժումները իրենց կարեւոր գերն են կատարած հայկ։ շարժումների խմբման մէջ։ Հայ և թուրք ժողովուրդները զրեթէ միննոյն ժամանակները ոտք են կոխած յեղափոխութեանց արիւնուա ուղին և փոխադարձաբար ազգած են մէկը միւսի վրայ։

Թուրքական սահմանազրութեանց մշակման գործում հայերը կատարած ունեն կարեւոր և նշանակալից գեր։ անմասն չեն նաև թուրքերո՛ հայկական սահմանազրութեան մշակման գործում։ Երիտասարդ թուրքերի նախահայրերը՝ յանձինս Մհթհատ փաշաների, եւ հայ յեղափոխութեանց նախակարագետները՝ յանձինս Խրիմեանների և Սերվիչեանների միաժամանակ, համագործակցաբար և նոյն պայմանների տակ յլացան ազատութեան գաղափարները։ Որոնել այս «յանցանքը» գրսի աշխարհում, օտարի մօտ, ի հարկէ, սիսալէ։ Էականն անշուշտ այն չէ թէ հայ ժողովուրդի ազատափրութիւնը յանցանք պիտի յամարել, թէ՞ առաջինութիւն։ Էականն այն է, որ այդ ազատափրութիւնը չէր ծագի ու չէր ծաւալուի, եթէ թուրքիոյ մէջ կարգ ու կանոն լինէր։ Այս հարցի մէջ երկու

կարծիք չի կարող լինել։ Այնտեղ, ուր բացակայում էր տարրական ազատութիւնը, համաստութիւնը, կեանքի ազանվովութիւնը, ուր իշխում էր բռնութիւնը, ստրկութիւնը, հարստահարութիւնը, խարականութիւնը։ ուր արհամարուում ու անարգուում էին տեղական բարքերը, սովորոյթները, կրօնն ու լիզուն։ ուր բացարձակ ալան թալան էր ամեն քայլափոխի, այնտեղ բնական է որ թեւ ու թափ առնէին յեղափոխական ազատասէր շարժումները։

Ինչպէս թուրք, այնպէս հայ յեղափոխութիւնը ծնունդ էր սուլթանների բռնակալ և դաֆան կարգերի, թուրք կառավարութեան բարբարոս վարչաձնիւ։ Մեզ թերեւս առարկեն, ասելով, որ հայը բացառութիւն պիտի կազմէր ինքնազիտակցութեան եկած ժողովուրդների մէջ և պիտի մնար միշտ «հնազանդ կաֆիր» և «ատոր ֆելահ»։ բաց այս աւելորդ ու անտեղի խորհուրդ է, որովհետեւ հայութիւնը բնաջնջող, երիտասարդ թուրքերն իսկ համոզաւեցին, որ հայը նախագասում է աւելի շուտ մեռնել, քան ապրել հարձի և ստրուկի անազատ կեանքով։

Այսպիսով հայկական շարժմանց երկու հիմնական պատճառները մնում են անխախտ և անխոցելի, այդ պատճառներից մէկը՝ հայ ժողովուրդի ազատափրութիւնն էր, իսկ միւսը՝ թուրքիոյ մէջ իշխողը բռնակալութիւնն ու բարբարութիւնը։

Թուրք գործիչները այլեալլ առիթներով հոլովում են այն միտքը, թէ հայկական շարժումը ուստական զաւերի հետեւանք է, պատուաստած թուրքահայութեան՝ սուսահայերի և պարսկահայերի միջոցով։ Այս, ի հարկէ, գիտակցաբար յօրինած բացարձակ սուս է և կամ, լաւագոյն զէպքում, տգիտութեան ու խաւարամտութեան արդիւնք։ Զպէտք է շփոթել պատճառ

ները հետեւսնքների հետ : Երբ 1908-ին երիտասարդ՝ թուրքերը յեղափոխութեան դիմեցին . Նրանք դանով բոլորովին նպատակ չունէին Պալքանները գևպի եւ բոպական Թուրքիա հրաւիրել : Երբ Սութանները կոտորում էին առարներին և լիբանացիներին . Նրանք երբեք չէին մտածում այլ պահով եւ բոպական պետութիւնների միջամտութիւնը հրաւիրել Թուրքիոյ գործերի մէջ : Այդպէս նաև հայկական շարժումների ժամանակ : Այս բազմաթիւ միջամտութիւնները, որ, իրօք, եղած են հայկական ջարդերի ամբողջական ընթացքին, հետեւանքն էին կոտորածների և ոչ թէ ջարդերն էին պատճառը միջամտութեանց : Այս հարցին կ'աղքաղապնանք յետագային . իսկ առաջմ փորձենք պարզել, թէ թուրք գործիչները որքան արդարացի են պնդելով, որ հայկական շարժումները օտար պետութիւնների դաւադրութեան արդիւնք են :

Հայկական շարժումները ըմբռնելու համար նախապէս երեք հարգ պէտք է պարզել : Նախ՝ պէտի ճշտել այդ շարժումների ծրագրերն ու նպատակները, երկրորդ՝ պիտի ծանօթանալ այն գործունէութեան հետ, որ հայ գործիչներն ունեցել են հայրենի միջավայրի մէջ, և, երրորդ՝ պիտի պարզել այն կէտր թէ՝ ովքե՞ր էին գործակցում հայ գործիչներին՝ վերջիններիս մղած պայքարի ընթագքին : Թիւրիմացութիւններից խուսափելու համար հենց սկզբից խոստովաններ, որ հայկական յեղափոխական շարժումների զեկավարը, պատասխանատու և գործոն ուժը եղած է Հ. Յ. Դաշնակցութիւնը :

Ուրեմն երկու խօսք այդ կուսակցութեան մասին, որը, ինչպէս յայտնի է, գլխաւոր ցաւն է թէ՛ թուրքի և թէ՛ ոռուի :

Դաշնակցութեան հիմնադիրները ու զեկավարները եղած են երեք հոգի՝ Քրիստովոր, Սիմէօն ու Մոստոմ; Երեքն էլ մինչեւ թրքական բանտերը տեսնելը՝ նախապէս ճաշակել են ոռուական բանտերի և աքսորավայրերի քաղաքութիւնը : Եթէ սրանք ուսական գիւղանագիտութեան մէջ բարձիքներ լինէին, ապա, վոյսանակ բանտերի չէմքերը մաշելու, կ'առաջնորդուէին գէպի ոռուական պալատներն ու ապարանքները : Իսկ իրականութեան մէջ բարձրովին հակառակ փաստեր ու գործեր են տեղի ունեցել, 1893—1894 թուականներին, երբ Սիմէօն իրեւ գաշնակցան գործիչ Տրավիզոն էր գտնուում : Ոռուական թելադրութեամբ ձերբակալում և քշում է Խուսաստան, ուր և տարիներ շարունակ բանտարին կեանք է մաշում :

1904ին, երբ Օլթիի գծով սահմանն էր անցնում Թորգոմը (Թուրման Թումաննեան), նոյն ոստների ճեռքով հրացանի է բռնուում և ոռուական զնդակներով սահմանային հողերի վրայ ընկնում են վարսունից աւելի քաջարի յեղափոխական զննուորներ : Իսկ նման փաստերի շարանը գրեթէ անվերջ է : Անկարեւի է մատնաշել մէկ գաշնակցականի, որ, քաղաքական կեանք ունենալով այդ երկու երկիրների մէջ, միաժամանակ հետապնդուած ու հալածուած չլինէր թէ՛ թուրքիայում և թէ՛ Թուսաստանում : Եւ քանի որ այսոր ցարական գաղտնի գիւտնները պոլչեւիկների տրամադրութեան տակ են, իսկ հին թուրքիոյ դիւանները՝ Էնկիւրիի գործիչների . և որովհետեւ այդ երկուոն էլ ուխտեալ և ոխիրիմ թշնամիներն են Դաշնակցութեան, ուստի հետաքրքրական պիտի լինէր ցոյց տալ մի փաստաթուղթ, մի գէպք, օֆանդակութեան ամենահամեստ մի քայլ, որ եղած է Խւախոյ Կողմից հայ մեծ քաղաքական կազմակերպութեան՝ թուրք

պետութեան դէմ ուղղուած։ Այդպիսի փաստ, ի հարկե, բացարձակապէս անկարելի է ցոյց տալ։ Թէ ուռւեթէ թուրք կառավարութիւնները ինչպէս այսօր, այնպէս և երէկ, սուլթանների և շարերի ժամանակ, հաւասարապէս իրենց հակառակորդ և թշնամի են նըկատած Դաշնակցութիւնը և պայքարած են նրա դէմ ամենայն գաֆանութեամբ։ Եւ պարզ է թէ ինչու։ Հ. Յ. Դաշնակցութեան հետապնդած նպատակներն ու ծրագրերը, այն է՝ 1) ազատագրել հայ ժողովուրդը ստրկական վիճակից, տալով նրան լայն իքնավարութիւն, առանց սահմանները (ոռւս և թուրք) ձշտելու։ 2) հիմք դնել Մերձաւոր Արեւելքի մէջ ազգերի համերաշխութեան և ժողովուրդների դաշնակցային պետական կազմի և 3) դասակարգային պայքար մղել հանդէպ կեղեքիչների և շահագործողների։ Ահա այս նպատակներն ու ծրագրերը՝ արդարութէն ոռւս և թուրք բռնակալ կառավարութիւնները պիտի զինէին Հ. Յ. Դաշնակցութեան գէմ։ Կայ մինչեւ իսկ աւելին, եթէ թուրք պետական վարիչները գէթ մի քիչ խոհեմ ու հեռատես լինէին և ընդունէին, որ քայքայուող թուրքիոյ վրկութիւնը թերեւս հենց այդ նոյն սկզբունքների յաղթանակի մէջ պէտք է որոնել, ասա Ռուսաստանը, իբրև աշխարհակալ և վերածնուող դրամատիրական պետութիւն, այդպէս մտածել երբեք չէր կարող։ Իր հիմքի մէջ Ռուսիան շատ աւելի մեծ թըշնամի էր Դաշնակցութեան, քան թէ թուրք պետութիւնը, Նա զգում և գիտակցում էր, թէ լայն ինքնապարութեամբ թուրքահայ վիլայէթների մէջ ոտքի կեցած հայ ժողովուրդը՝ իր շարժումները պիտի ծառալի նաև Անդրկովկասի մէջ և հայկական ինքնավարութեան պատնէները ցցի Ռուսիոյ առաջխաղացութեամբ առջեւ։ Այսպիսի հեռանկարներ անշուշտ չեն

կարող ժպտալ Ռուսաստանին, որին անհրաժեշտ էին թուրքահայ հողերը, բայց միայն... առանց հայերի։ Այս նորութիւն չէ նամանաւանդ թուրք զեկավարների համար, որովհետեւ, նախ այս նոյն խօսքերը նըրանք լսել են Լաբանով Ռաստովսկիների անունից եւ երկրորդ՝ հայկական կոտորածներից մի քանիսը կատարուել են թուրքական ձեռքերով և ուռսական ներշընչումով։ Այսպիսվ, ինչպէս տեսնում էք, Ռուսաստանը հայ յեղափոխականներին գործիք դարձնել երբեք չէր կարող։ Սակայն կար մէկը, որին նա իրօք գործիք էր դարձնում և որի մասին արժէ մի քիչ խօսել։

Պարզեցինք թէ ինչո՞ւ ուռսական կառավարութիւնը անկարող էր Հայ Յեղափոխութեան լծակցած քաղաքական հոսանքները և մասնաւորաբար Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը գործիք դարձնել եր ձեռքին։ Կար մէկ այլ ուժ, որին նա գործիք էր դարձնում, և այդ թրքական իշխանութիւնն էր։

Նա այդ իշխանութեան միջոցով, առանց իր ձեռքերը արիւնոտելու, հարուածում, թուրացնում և կոտորում էր հայերին, և այսպիսով, իր թիկունքն ապահովելով Անդրկովկասում, ճանապարհ բանում գէպի հայկական ամրող բարձրաւանդակը, գէպի Մեջերկական։ Այդ ծրագրի առաջին մասն այսօր իրագործուած լինելով, թուրք զեկավարները բախտ պիտի ունենան վաղը իրագործուած տեսնելու նաև նրա երկրորդ մասը, երբ կարմիր հագած ուռսը իր զրօնը կը պարզի էրզրումի և Տաւրոսի բարձունքների վրայ։

Սակայն գուշակութիւնների ծառումը ապագային ձղելով այժմ մի քանի խօսք այն մասին, թէ ի՞նչ էր ներկայացնում իրենից Դաշնակցութեան հետապնդած երկրորդ նպատակը։

Ազգերի համերաշխութիւնը, ապակենտրոն պետականաձեւը, ինքնօրինութեան սկզբունքը, որ այն քան շատ է խրանքեցնում թուրք վարիչներին՝ պատճառն այն է, որ նրանք Թուրքիոյ փրկութիւնը միշտ էլ տեսել ու տեսնում են հպատակ ժողովուրդների երկպառակութեանց և երկրի շնչերակները խեղդող կերպուացման մէջ: Օրինակներն աւելորդ են միանդամայն, քանի որ ամենափայլուն ապացոյզը հրապարակի վըրայ է, ամէնքի աշքերի առջեւ:

Երբեմնի հզօր, հսկայածաւալ ու բազմացեղ Թուրքիան՝ այսօր՝ յենուած հինգվեց միլիոն թրքութեան վրայ՝ ատուած է բոլորից, մեսակ ու չէզոքացուած, շրջապատուած թշնամիներով, որոնք պատեհ վայրկեանին պատրաստ են իրեն պատառ-պատառ անելու: Թուրքիան, փոխանակ շաղկապելու և միացնելու հըպատակ ժողովուրդները, և նրանց թէ՛ բարոյական, թէ՛ տնտեսական եւ թէ՛ ֆիզիքական ուժերը ի նպաստ Թուրքիոյ օգտագործելու՝ ջլատում, թուլացնում եւ վանում էր իրենից հպատակ ազգերը, իսկ այս քազաքականութիւնը օգտուազը, ի հարկէ, Ռուսատանն էր լինում: Որովհետեւ Թուրքիոյ թուլացումը համազօր է Ռուսաստանի ուժեղացման: Այս է պատճառը, որ Լաբանովները խրախուսում էին Թուրքերի մոլեռանդութիւնը և թոյլ չէին տալիս, որ քայլայող Արեւելքը կազդուրուի և ոտքի կենայ:

Այս է պատճառը նաև, որ թէ՛ երէկուայ ցարերն ու թէ՛ այսօրուայ կարմիրները, որ նոյն աշխարհակալ ձգտումները ունեն, իրենց իբրև թշնամի են նկատում Դաշնակցութիւնը, որովհետեւ վեռջինս նպատակն է՝ Արեւելքը կազդուրելով վերապահել արեւելքիներին և ո՛չ թէ՛ նուրբարերել աշխարհակալ ուռամին, պատուարենք կառուցանել Ռուսիոյ առաջիա-

ղացման առջեւ՝ և ոչ թէ այդ առաջիսաղացումը դիւրացնել, Մեր միտքը աւելի յստակ դարձնելու համար բերենք մի օրինակ հայերի երերորդ հայրենիքի, մեր սիրելի Պարսկաստանի անցեալից: 1908—1909—1910 թուականներին պարսկական յեղափոխութեանց շրջանն էր: Պարսկահայերն ու Դաշնակցութիւնը, որ Պարսկաստանի մէջ ո՛չ ազգային նպատակներ ունէին, ո՛չ սեփական հեռանկարներ եւ ո՛չ իսկ ուրոյն ազգային շահեր, այնուամենային, իրենց ուժերը ի սպաս բերին պարսկական յեղափոխութեան և ջանացին, որ այդ երկիրը ոտքի կենայ և վերակենդանութեան ու վերածնունդի շրջանը թևակոփի:

Պարսկաստանի յաղթական յեղափոխութիւնը պիտի դիւրացնէր ընդհանրապէս Արեւելքի վերածնունդը և մասնաւորաբար Արեւելքի մէջ ապրող ժողովուրդների համերաշխութեան ու համագործակցութեան գըժուարին գործը: Դաշնակցութիւնը փայլուն կերպով իր գերը կատարեց և չնորհիւ Եփրեմի, Քեռիի, Նիկոլի, Խեջօի, Սաթթմար և Բաղրը Խաների ու Սարգար Սսատների: Պարսկաստանն իր սահմանադրութիւնը ստացաւ, արտաքունց երկրից ուռա կառավարութեան վարձկան Մեհմէտ Ալի շահը, Լեախովները չէզոքացան և Ռուսիոյ գերիշխանութիւնն ինքնին նըւազեց: Այս նոյն ընթացքն ունեցաւ Դաշնակցութիւնը նաև Թուրքիոյ մէջ, որ բնաւ հաճելի չէր կարող լինել ուռա կառավարութեան:

Եթէ՛ թուրք զեկավարները ընդունակութիւն ունենային լուրջ զատելու և անաշառ լինելու, նրանք մի հանգամանք ևս ինկատի պիտի առնէին. այդ այն է՝ որ հայ կազմակերպութիւնները և մասնաւորաբար Դաշնակցութեան քաղաքական պահանջները չեին առնամափակուում միմիայն Տաճկահայստանով, այլ

տարածուում էին նաև Ռուսահայաստանի վրայ, եւ
այդ պահանջները ճիշդ նոյնն էին թէ՛ մէկ և թէ՛ միւս
կողմը, նոյնն էին և տնտեսական պահանջները:

Եթէ երկրի մէջ Հ. Յ. Դաշնակցութիւնը կռուում
էր բէկերի, խափիրութեան, անորակելի տուրքերի,
վաշխառութեան դէմ, Անդրկովկասում նաև հանգէս էր
դալիս իրեւ ընկերվարական կուսակցութիւն և մեն-
շեւիների, բոլցեւիների ու էս-էրների կողքին վա-
րում զասակարգային պայքար: Եւ նա շատ մեծ մտա-
հոգութիւններ էր պատճառում ուսւ կառավարու-
թեան, որովհետեւ Փիզիքարական և բարոյական ամե-
նամեծ ուժ էր ներկայացնում Անդրկովկասի մէջ:

Սխալ է նաև այն, թէ հայկական շարժումները
կատարուած են քացառապէս ուսւահայերի և պարսկա-
հայերի միջոցով: Հայկական շարժումը կրում էր ո՛չ
թէ տեղական, այլ համազգային ընոյթ, ազգային
գիտակցութեան զարթօնքը վարակած էր հայ ժողովր-
դի ո՛չ թէ այս կամ այն հատուածը միայն, այլ նրա
ամբողջութիւնը: Բայց, վերջապէս, ի՞նչ մեղազրանքի
նիւթ կարող են ծառայել նման խօսքերը, ինչու լեռ-
նական արխազը կարող է ենկիւրի Ազգային Մեծ ժո-
ղովի նախագահը լինել, ինչու Թալէամ, Ռառք,
Ճեմալ, Ճավիտ, Վեհրպ, Ահմէտ Ռիզա ու Մուսթա-
ֆա Քէմալները, լինելով ծագումով պուլկար, արխազ,
քիւրդ, հրէայ, առնավուտ կամ լին, կարող են թուրք
ժողովրդի ճակատագիրը որոշել, իսկ զտարիւն հայն ու
նոյն հայրենիքի և ժողովրդի զաւակը չի կարող իր աղ-
դի, իր ամբողջութեան ցաւերով տառապել: Միթէ՞
նրա համար միայն, որ բռնաւորները սահմաններ են
գծել նրա կենդանի մարմնի վրայից:

Սակայն այդքիչ է հայութիւնը բաժանելու համար:
Այժմ մի քանի խօսք էլ թուրքերի չորրորդ մե-

դադրանքի մասին, Հայերը, ըստ թուրք գեկավարնե-
րի, իրեւ թէ պատճառ են դառցած Ռուսիոյ և օտար
պետութեանց միջամտութեան Թուրքիոյ ներքին գոր-
ծերի մէջ, և այդպիսով քայլքայած են Օսմանեան պե-
տութիւնը: Այս մեղազրանքի մէջ չմարտութիւններ
անշուշտ կան: Անգլիան Հայկական Հարցը պատրուա-
կելով, Կիպրոսը գրաւեց: Ռուսիան Արեւելեան նա-
հանգների մէջ երկաթուղային և այլ մենաչնորներ
ստացաւ: Նորէն նոյն հարցը պատճառ բռնելով, այդ-
պէս վարուեցին նաև մնացեալ պետութիւնները, դէպ-
քից-դէպք մասնատելով Թուրքիան յանուն Հայ Դա-
տի և միշտ էլ այդ Դատը անլուծելի թողնելով: Բայց
ո՞վ է սակայն այդ միջամտութեանց իսկական յան-
ցաւորը՝ հա՞յը, ո՞ւ ուսը, օտա՞րը, թէ՞ ինքը՝ թուրք գե-
կավար գործիչը: Եթէ թուրք մտաւորականը մի կողմ
թողնի իր կոյր ատելութիւնը դէպի շրջապատը և պա-
զարինութեամբ մօտենայ գէպքերի լուսաբանութեան,
պիտի տեսնի, որ բռնը գէբախտութեանց միակ պա-
տասխանատուն միմիայն ինքն է: Որովհետեւ, ինչ-
պէս մի անգամ արդէն ասացինք, հայկական շարժ-
մանց նպատակը այն չէր, որ կիպրոսը՝ անգլիացաւն
տրուի, երկաթուղիները՝ ուսւին, մենաշնորհեները՝ օ-
տարին, որոնք այդ բռնը պիտի ստանային, չպիտի
օգտագործէին կամ պիտի օգտագործէին յօդուտ իրենց
շահերի, այլ շարժումների նպատակն այն էր, որ ինքը
հայ ժողովուրդը իր բռն հայրենիքի մէջ մարգկային
իրաւունքների տիրանայ, որ Արեւելքը քնից արթնա-
նայ, որ արեւելքիները և ո՛չ թէ օտարները ստա-
նան և վայելեն իրենց հայրենիքի բարիքները: Եթէ
մի կողմ թողնելու լինենք գաղութաբնակ հայութեան
մի որոշ մասը, ապա պիտի տեսնենք, որ զանգուածօ-
րէն հայ ժողովուրդը երկրի մէջ գաղափար չունէր ո՛չ

Կիպրոսի, ո՞չ երկաթուղագծերի և ո՞չ ել մենաշնորհների մասին, այլ նրա միակ պահանջն ու նպատակն էր ստրկութիւնից ազատուել և մի քիչ ազատ շռւնջ քաշել: Եւ երբ օտարը, շահագործելով հայութեան արդար գֆոռութիւնները, միջամտում էր Թուրքիոյ գործերին և իր հաշիւները շտկում, միթէ՝ յանցաւորը հայն էր և ոչ թէ ինքը՝ Թուրք կառավարութիւնը:

Պիտի ընդունել՝ որ կառավարութիւնը: Արովէնտեև եթէ պահանջուի ստրկութեան լուծի տակ հեծող Ալիս գլբոնցի խափերից, որ նա համաձայնուի ստրուկ մնալ, չբողոքել, չապտամբել, որպէսզի դժւրսը սպասող գագանները ներս չը մտնեն բոլորին լափելու, այդ պահանջը աւելի մեծ իրաւունքով կառավարութեանը պէտք է մնել, որ նա իր տունը կարգի ու կանոնի բերի, հանգստութիւն և ազատութիւն տայ իր հպատակներին և ոչ թէ նրանց ստրկութեան լուծը ծանրացնէ, օտարներին իբր կաշառք ծախելով արեւելեան նահանգների իրաւունքները, կիպրոսները ևլն.. Այսաեղ ոճիրը և գաւաճանութիւնը կատարուում է և կատարուել է Թուրք կառավարութեան կողմից: Եւ եթէ Թուրք կառավարութիւնը կարող էր անհեռատեսու ու ուրագործ լինել, ինչո՞ւ պիտի զարմանալ ուրեմն, որ հայերից էլ ոմանք, յուսահատ թրքական վարչութիւնցից, երբեմն ցանկացած լինեն Թուրքիոյ կործանումը: Բայց այդ ցանկութեան ազբիւրը պէտք է ուրոնել թրքական մտայնութեան, նրա կարճատեսութեան, նրա հիւանդ և յամառ եսամոլութեան մէջ:

Մի էական ինդիր ևս հաշուի պիտի առնեն Թուրք ղեկավարներն ու մտաւորականները:

ԶԵ՞ որ Ռուսիոյ և եւրոպացիների միջամտութիւնների միակ պատճառը հայերը չեն, չէ՞ որ զիս մինչեւ հայկական հարցը թէ եւրոպացիք և թէ ուսւ-

ները 18-րդ դարից սկսած իրաւունք էին համարում միջամտել Թուրքիոյ գործերին և առիթը եղած դէպ-քում յօշտել Թուրքիան: Անշուշտ Ռառվագ պէյերը սրանից մօտ 60 տարի առաջ եղած Թուրքիոյ քայ-քայման պատճառներն էլ չպիտի որսնեն հայերի մէջ, քանի որ հէնց իրենք են պնդում. որ 60 տարի առաջ հայը Թուրքից տարբերելը շատ գժուար էր: Ուրեմն ո՞րն է այն հիմնական պատճառը, որ լայնօրէն բացել է Թուրքիոյ գոները օտար միջամտութեանց առ-ջեւ, առաջ՝ ոուսի և մեծ պետութեանց, իսկ այժմ՝ նաև փոքրերի: Արգեօք մեղքը այդ տէրութեանց մէջ պիտի որսնել, թէ՞ Թուրք պետութեան, նրա ներքին ցաւերի և կարծես անբուժելի հիւանդութեան մէջ:

Ռուսին եւ եւրոպացիներին հայեցելուց շահ չու-նեն ո՞չ հայը և ո՞չ էլ Թուրքը, Իրականութիւնն այն է, որ այդ պետութիւններն ուզում են մեծանալ Թուրքիոյ հաշուին, այսօր հային պատրուակ բռնելով, իսկ վաղը՝ Փիւրտին և արարին: Եւ նշանակալիցն այն է, որ նրանք Թուրքիոյ մէջ իշխող անարդարու-թիւնը տեսնում են, երբ Թուրքիան տկար է. միջա-մտում են, երբ կարելի է յօշտել, և լուռ հանդի-սաւաս են մնում, երբ Թուրքիան քիչ կազմուրած ու ոտքի է կեցած: Այս զժբախտ երեւոյթի մեղաւորը ո՞վ է արգեօք: Լեռան ծայրին դարձան մտած դա՞յլը: որի իրաւունքն է յափշտակել: թէ՞ իսելքից զուրկ հո-վիւր, որի պարտականութիւնն է գուրգուրանքով հո-ար ինսամել ու պահել:

Խրատներ են կարդում հայերին առ երեւոյթն յաղ-թական համարուող Թուրք մտաւորականները: Բայց թող բարի լինին լսելու մի իրատ, որ գալիս է հին, շտա հին ժամանակներից: Այդ խրատը, ի միջի այլոց, սրբագործուած է Թիւրքիոյ մէջ նահատակուած միլիո-

նաւոր զոհերի արիւնով , մի խրատ , որ Ռիզա Նուրիները օդ պիտի անեն և իրենց ականջներին կախեն , եթէ միայն , ի հարկէ , նպատակ չունեն Թուրքիան դէպի խորակում մղելու . Այդ խրատն այն է , որ ժողովուրդների բնաջնջումով չի կարելի ուսեղ եւ ազատ Թուրքիա ստեղծել . Չի կարելի Հայաստանի խորակաման գնով՝ Ռուսիոյ եւ օտար պետուրքանց միջամտութիւնների պատճառները—Թիւրքիան քայրայող ու մասնատող— վերացնել : Միջամտուրքեանց համար Հայաստան չի լինի , սակայն միշտ է կը լինին ու կը գտնուեն յայտնի ու անյայտ ուրիշ շատ միջոցներ , քանի դեռ չի գտնուել այն արդար նիմունքը , որի վրայ պիտի կառուցնի բոլոր արեւելքցիների համար ստեղծուած Արեւելքի ազատուրքեան նրաշակերտ շենքը :

Թուրք մտաւորականները ընդհանրապէս աւելի ծանրանում են վերջին պատերազմի ընթացքում հայերի բռնած գիրքի վրայ , նրանք ամեն կերպ ուղղում են ցոյց տալ , որ հայերը այս պատերազմին դաւաճանեցին օսմանեան հայրենիքին և պատճառ եղան , որ հարիւր հազարաւոր հայեր և տաճիկներ կոտարուեն և քաղաքներ ու գիւղեր աւերռուեն : Այս խնդրի մի քիչ լուրջ և անաշառ վերլուծութիւնը որքան թուրքերի , նոյնքան եւ հայերի համար շահեկան և խրատական պիտի լինէր :

Երբ ցանկութիւն կայ խնդիրներին մօտենալու+ ապա նախ պէտք չէ ամբողջ հայութիւնը առնել մի չափանիշի տակ : Անհրաժեշտ է հաշուի նստել այն փաստի հետ , որ բռնակալների չնորհիւ հայութիւնը բաժանուած էր երեք զինաւոր մասերի :

Ա .— Օսմանեան երկիրների մէջ ապրող հայութիւն .

Բ .— Ռուսիոյ սահմանների մէջ ապրող հայութիւն .

Գ .— Բազմաթիւ գաղութների մէջ ապրող հայութիւն :

Այս տարրական փաստը ստիպուած եմ յիշեցնել , քանի որ մէկ երկրամասի հայութեան բռնած ընթացքը յաճախ վերագրուում է միւս աշխարհի հայութեան կամ , այլ խօսքով , ընդհանրութեան : Եթէ հաշտուելու լինենք այն մսքի հետ , որ ամբողջ հայութիւնը պարտական էր յօգուտ օսմանեան կայսրութեան աշխատելու եւ նրա յաղթանակներով ոգեւորւելու , այդ պարագային ձիշդ է այն մեղադրանքը , որ հայութեան խոչըր մասը հակառակ է եղած օսմանեան պետութեան : Ակներեւ է որ Ռուսիոյ մէջ գտնուող հայութիւնը , որի թիւը մօտ երկու միլիոն էր , 19 տարեկանից մինչև 43 տարեկան հասակ ունեցողները , զօրակոչ ենթարկուելով , առնուազն 150—200 հազար զինուոր է տուած ուուսական բանակին : Իսկ որովհետեւ գրեթէ ամբողջ աշխարհը պատերազմ էր յայտարարած Թուրքիոյ և միջին Եւրոպայի դէմ , այդու այդ երկրամասերում ապրող հայութիւնն էլ իր թուի համեմատութեամբ ուժեր էր զուրս հանած ընդդէմ Թուրքիոյ և իր գանակիցների : Բացառութիւն էր կազմում Տաճկաստանից դուրս գտնուող հայութիւնից միմիայն պարսկահայութիւնը , որը չէզոք էր , որովհետեւ չէզոք էր և իր կառավարութիւնը , և պուլկարահայութիւնը , որ աշխատել է յօգուտ Թուրքիոյ : Այնպէս որ ձիշդ է այն փաստը , թէ Տաճկաստանից դուրս գտնուած հայութիւնը գործել է ընդհանրապէս ընդդէմ Թուրքիոյ , հանելով նրա և նրա գաշնակիցների դէմ առնուազն 200 հազար զինուոր : Ճիշտ է , որ այդ ուժը մի հուժկու բռունցք էր , հաւասար Թուրքիոյ արեւելեան և հիւսիս արևելեան սահմանների վրայ կենտրոնացած բոլոր օսմանեան ուժերին , սակայն միւ-

թէ՞ այս պատճառ է, որ հայերը մեղաղրուեն դաւանութեան և ուխտաղրժութեան մէջ.

Կարծում եմ, թէ բանականութիւն ունեցողները այս ածականներով հայերին չպէտք է որակեն, որովհետեւ Ռուսիոյ և զաղութների հայութեան հարիւրին իւսուուը դաշնակիցների և Ռուսաստանի հպատակներ էին, ենթակայ, համաձայն այդ երկիրների մէջ գործող օրէնքների, պարտադիր՝ զինուորական ծառայութեան։ Դատողութիւն ունեցողները պիտի հասկանան, որ այդ պետութեան աչքին դաւաճան պիտի համարուէր զօրակոչին չմասնակցող և ո՞չ թէ մասնակցող կայը, թէկուզ այդ լինէր և Թուրքիոյ դէմ, որի զօրաբանակների մէջ բազմահազար հայեր կային։ Եւ մի՞թէ միայն հայերն էին այդպէս։ Նոյնը չէ՞ր անում արգեօք ուսւահպատակ գերմանացին Գերմանիոյ դէմ, գերմանահպատակ ուուը՝ Ռուսաստանի։ Դրիմի. Վոլգայի, Անդրկովկասի թաթարը՝ Թուրքիոյ ևն. ևն.։ Միթէ՞ սրանք բոլորն էլ դաւաճաններ էին.

Մէկ հարց, անշուշտ, կարօտ է լուսաբանութեան։ Պէտք է պարզել, թէ, անկախ զօրակոչից, ինչո՞ւ հայերի համակրութիւնը աւելի շատ դաշնաեիցների կողմն էր, քան թուրքերի. ինչո՞ւ փոքրաթիւ տաճկահպատակ հայեր, դաշնակից երկրների մէջ մասնակցեցին իր կամաւորներ կամ զինուորներ. ինչո՞ւ հայերը նման զօրակոչներին արձագանգուին։

Այդ հարցումները կը պարզուեն, եթէ մենք գէթ հարեւանցիօրէն լուսաբանելու լինենք ումանեան երկրների մէջ եղած հայերի բռնած ուղղութիւնը և նրանց վիճակը։ Ռւստի անցնենք այդ խնդիրների քննութեան։

✓ Նախապէս ասենք, որ պիտի ծանրանանք ամենէն առաջ է. Յ. Դաշնակցութեան Թուրքիոյ մէջ կատարած դերի վրայ, որովհետեւ թուրք մտաւորականութեան կարծիքով այս հարցը իրենց յարուցած մեղաղրանքների ամենէն խոցելի կէտն է համարւում։

1914 Յուլիո 28ին յայտարւում է պատերազմ Աւստրիայի և Սերբիայի, իսկ Օգոստոս 2ին՝ Գերմանիայի և Ռուսաստանի միջև։ Նշանակալից է մի հանգամանք։

Օգոստոսի 5-ին Տանկատանի էրգրում քաղաքի մէջ բացուում է Հ. Յ. Դաշնակցութեան VIII Ընդհանուր ժողովը։

Օգոստոսին Դաշնակցութեան Գերագոյն ժողովը բացուում էր էրգրում, երբ արդէն Յունիս և Յուլիս ամիսների սկզբին որոշ չափով պարզ էին թէ՛ համաշխարհային պատերազմի խիստ հաւանականութիւնները և թէ՛ կոռուզ ուժերի և տէրութեանց դասաւորումները, իսկ Օգոստոսին, երբ Բելգրատի և Բրիւսելի պատերի տակ որոտում էին գերմանական թնդանօթները, իսկ ուսւական զօրքերը արշաւում էին զէպի Մազուրեան լճերը, ահա այդ նոյն ժամանակ Թուրքիոյ յետամաց քաղաքներից մէկում հաւաքուում էր հայ մեծ քաղաքական կազմակերպութեան Գերագոյն ժողովը։

Ինչո՞ւ արդիւնք էր այս։

Պատահական երեւոյթ չէր անշուշտ, որ Հ. Յ. Դաշնակցութեան գերագոյն կուսակցական ժողովը 1914-ի Օգոստոսին հրաւիրուել էր Թիւրքիոյ յետամաց քաղաքներից մէկում էրգրումում։ Հայ մեծ քաղաքական կազմակերպութիւնը, որ մինչեւ 1914 թուականը ունեցել էր ութը ընդհ. ժողովներ՝ բոլորն էլ գուրած, արտասահմանի մէջ՝ թրքական սահմանադրութիւնից յետոյ այդ համագումարներից երեք հրա-

ւիրել էր Թիւրքիոյ մէջ, մէկը՝ Պոլսում, իսկ երկուսը՝ էրզրումում:

1908-ին, սահմանադրութեան մեղրամսին, իթթիհատի կենտրոնը — Սելանիկից, իսկ Թալէաթը՝ կուսակցութեան հրահանգով՝ Պոլսից՝ յորդորում և խնդրում էին, որ Դաշնակցութիւնը իր ընդհանուր ժողովները գումարի Թիւրքիոյ ցանկացած քաղաքում, յայտնելով, որ այսպիսով աւելի ես կը դիւրանայ և կը խորանայ թուրք և հայ ժողովուրդների բաղձացեալ համերաշխութիւնը: Այս առաջարկները, սակայն, մերժուեցին Դաշնակցութեան կողմից այն յստակ պատճառաբանութեամբ, որ քանի գեռ չէ վաւերացուած, նախ՝ Դաշնակցութեան և իթթիհատի համաձայնագիրը, ստորագրուած երկու կուսակցութեանց ներկայացուցիչների կողմից, և, երկրորդ՝ կուսակցութեան կողմից չէ՝ իւրացուած: Օսմանեան կառավարութեան հետապնդած քաղաքականութիւնը, ապա մինչ այդ համագումարը Թիւրքիայում չի կարող գումարուել: Այս իսկ պատճառով սահմանադրութեան առաջին տարին կուսակցութեան V-րդ Ընդհանուր ժողովը գումարում է Վասնայում, իսկ համաձայնագիրը հաստատուելուց և կառավարութեան ընդհանուր քաղաքականութիւնը ճշտուելուց և Դաշնակցութեան վերապահ հաւանութեանն արժանանալուց յետոյ՝ ժողովի վերջին նիստերը և 9-րդ: Յանձնաժողովի աշխատանքները տեղափոխուում են Պոլս՝ ի մեծ ուրախութիւն իթթիհատի և թուրք կառավարութեան: Թէ ինչ էին համաձայնութեան կետերը, այդ Ռատուֆ պէյերը լաւ գիտեն: այսօր եւ այսօել տեղն ու ժամանակը չէ պատմական հին անցքերը քրքրել, սակայն մէկ բան կարելի է շեշտել: Դաշնակցութիւնը, որ կանգնած էր ընդհանրապէս Արեւելքի և մասնա-

որրապէս Թիւրքիայի վերածնունդի տեսակէտի վրայ, որ կողմանակից էր ազգերի համերաշխութեան և հզօր պաշտպանն էր հայ ժողովրդի չահերի, տեսնելով, որ իր և թուրք կառավարութեան միջեւ փոխադարձ հասկացողութեան լեզու է ստեղծուում, անմիջապէս օրինական կուսակցութիւն է զառնում Թիւրքիոյ սահմաններում և իր ընդհանուր ժողովները — VI-րդ, VII-րդ VIII-րդ — իրար յետեւից յաջորդաբար գումարում է Թիւրքիոյ մէջ: Այսպիսով, ինչպէս վերն ասացինք, 1914-ի Օգոստոսին էրզրում գումարուած ընդհանուր ժողովը բնաւ զիազուածի արդիւնք չէր: Նա Օսմանեան կառավարութեան կողմից թույլատըրւած մի ժողով էր: Կառավարութիւնը գիտէր, որ Ռուսիոյ, Անդրբուկասի, Ամերիկայի, Եգիպտոսի, Պարսկաստանի, Բալքանների, Թիւրքիոյ բոլոր մասերի և այլ վայրերի ներկայացուցիչները հաւաքուած են էրզրումում: թէ՝ նա և թէ՝ իթթիհատը գիտէին և օրակարգի մասին, գիտէին նաև, որ այդ ժողովում քննութեան պիտի Դաշնակցութեան բռնելիք դիրքը դէպի պատերազմը և մասնաւորաբար՝ դէպի Ռուսաստանն ու Թիւրքիան, իրեւ պատերազմիկ պետութիւններ:

Անհրաժեշտ է կատարուած փաստի իմաստն ու արժէքը հասկնալու հումար նախապէս մի քանի հարցեր պարզել: Այս անհրաժեշտ է թէ թուրք մտաւորականութեան շահերի տեսակէտից՝ ըմբռնելու համար անցեալի մէջ եղած սխալները, և թէ՝ հայ ժողովուրդի որոշ խաւերի մտքերը պարզելու տեսակէտից՝ ցոյց տալու համար այն հետեւողականութիւնն ու անձնազոհութիւնը, որ այդ պատմական օրերին հանդէս է բերել հայ մեծ քաղաքական կազմակերպութիւնը:

Ա. — Իսկապէս ի՞նչն էր պատճառը, որ Դաշնակ-

ցութիւնը, գիտնալով հանդերձ, որ ոչ միայն ընդհանուր պատերազմը սկսուելու է, այլ և այդ պատերազմին կարող է մասնակցել նաև Ռուսաստանը. — մի հանգամանք, որ առիթ պիտի տար նաև թուրքերին պատերազմին յարելու, իր ընդհանուր ժողովը չգումարեց արտասահմանեան ո և է երկրի մէջ, Զէ՞ որ նա օտարների ձեռքոք գործիք էր իսկապէս, ինչպէս թուրք զեկավարներն են պնդում, ապա այդ քայլը կը լինէր ամենէն նպատակայարմարն ու բանաւորը ամէն տեսակէտից, Եւ, վերջապէս, արտասահման գումարուելով, Դաշնակցութիւնը կ'ունենար թէ հաղորդակցութեան յարմարութիւններ, թէ ապրուստի դիւրութիւններ և որ ամենագլխաւորն է՝ ազատ կը լինէր ամէն մի վտանգից :

Բ. — Ինչո՞ւ այդ ժողովը չգումարուեց նաև Ռուսաստանում կամ Անդրկովկասում, Զէ՞ որ Ռուսիան արդէն մասնակցում էր պատերազմին, իսկ Դաշնակցութիւնը, գործիք լինելով ուստի ձեռքին, ինչպէս կրկնում են շարունակ թուրք գործիչները. պիտի կարողանար այդպիսով ազգել Անդրկովկասում նախապատրաստող անցքերի վրայ: Մանաւանդ, որ Թիւրքիոյ համեմատութեամբ հաղորդակցութեան և կեանքի մեծ դիւրութիւններ կային Խուսաստանում: Դաշնակցութեան պատգամաւորները հեշտութեամբ—ծովով, կամ երկաթուղիներով— պիտի կարողանային ժողովւել, փոխանակ էշերով ու ձիերով չարաթիւններ չարունակ խաւար թուրքիայում ճամբորդելու:

Գ. — Ինչո՞ւ այդ Գերագոյն ժողովը չգումարեց թուրքիոյ մայրաքաղաքի մէջ՝ Պոլսում, քանի որ այդպէս էր ցանկանում թուրք կառավարութիւնը եւ ի մասնաւորի ներքին գործոց նախարար Թալէաթ բէյը: Զէ՞ որ նաև Պոլիսը գաւառի համեմատութեամբ

ունէր շատ աւելի մեծ յարմարութիւններ հաղորդակցութեան և կեանքի տեսակէտից, իսկ վտանգի պահուն՝ աւելի դիւրին էր Էնուանալ:

Գ. — Ինչո՞ւ թնդա՞ օթների որոտի տակ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր ժողովատեղին ընտրում է ոռուսական սահմանին մօտ ընկած յետամեաց թուրքիոյ մէկ խաւար անկիւնը՝ կրզրում բերդը, ուր միաժամանակ չիային ո՛չ հաղորդակցութեան և ո՛չ էլ կեանքի տարրական դիւրութիւններ :

Միթէ՞ այս ամէնը իրօք դիպուածօրէն հէնց այսպէս եղաւ:

Եթէ այս հարցին բարեխղճօրէն մօտենալու լինենք, եթէ թուրք մտաւորականները նեղութիւն յանձնանեն, նախ՝ Վանի. իսկ յետոյ՝ կրզրումի կուսակալ Թահսին բէյի միջոցով Դաշնակցութեան բոնուած պատմական արխիւների մասին ծանօթութիւններ հաւաքելու. Եթէ Թալէաթ բէյի անձնական և ներքին գործոց նախարարի թղթերը քրքրելու լինեն, այն ժամանակ պիտի զտնեն այս հարցի պատասխանը, լուսաւորուած անկերքելի և համազեցուցիչ փաստերով:

Դաշնակցութեան Գերագոյն ժողովը արտասահմանի մէջ չեղաւ, որովհետեւ—

Ա. Հայ ժողովուրդի ամենապատասխանատու կուսակցութիւնը. Դաշնակցութիւնը, ո՛չ կապ ունէր դաշնակց պետութիւնների հետ և ոչ էլ ցանկութիւններանց ձեռքին գործիք դառնալու: Ընդհակառակո՞ր: Գտնելով, որ եւրոպական պատերազմին մասնակցելը կորստաբեր պիտի լինէր ինչպէս թուրքիոյ և Սրբեւելքի, այնպէս և հայութեան համար, նա ամենէն վրանգալից օրերին զոհում է ամեն ինչ և, արտասահմանի փոխարէն, հաւաքւում կրզրումում:

Բ. Նա չի հաւաքւում նաեւ Ռուսաստանում, ու

րովհետեւ Դաշնակցութիւնը ո՞չ մի կապ չունէր ոռւս կառավարութիւնան հետ, նրա քաղաքական դաւերի գործիքը չէ՛ր, պարզապէս թշնամի էր այդ կառավարութեան, մի կառավարութիւն, որ նպատակ ունէր ոչընչացնել և՛ Թուրքիան և՛ Հայաստանը ու տիրանալ նրանց հարստութեան :

Ահա այս տեսակէտներն ունենալով է որ հայ մեծ քաղաքական կազմակերպութիւնը, լինելով Թուրքիոյ օրինական կուսակցութիւնը, իսկ իթթիհատից յիտոյ՝ նրա ամենէն զօրաւոր կազմակերպութիւնը, որոշում է հաւաքուել Երզրումի մէջ և իր ազգեցութեամբ փորձել կանխելու վերահաս վտանգը : Օրուան լոյսի պէս պարզ էր, որ Թուրքիան, պատերազմած դէպում, պիտի քայլայուէր ու կործանուէր, վերածրնուող Արեւելքը պիտի խորտակուէր, չարաչար պիտի տուժէր նաև հայ ժողովուրդը, սահմանի թէ՛ մէկ և թէ՛ միւս կողմք : Այս ահաւոր վտանգը նկատի ու նենալով, Հ. Յ. Դաշնակցութիւնը հաւաքուում է Երզրումի մէջ : Նա իր համագումարը չի կայացնում մինչեւ իսկ Պոլսում, որպէսզի պատգամաւորներին ազատ պահի մայրաքաղաքի մէջ իշխող ռազմաշունչ մթնոլորտի ազդեցութիւնից : Դաւառում, Երզրումի մէջ, ժողովրդական զանգուածների մօտ ու հարազա վայրում ակնբախօրէն կարելի էր պատերազմի սպառնալից հետեւանքները տեսնել և բնազդով ու գիտակցորէն լինել չըճահայեաց և զգաստ :

Այս մտահոգութիւնները յետադայում, դժբախտաբար, մարգարէութիւններ դարձան : Այս պայծառորէն տեսնում ենք մենք այսօր, այս նոյն քան պայծառօրէն վազը նաև Թուրքերը պիտի գիտակցն : Սակայն գալիքը ապագային թողնելով, այսուեղ պէտք է յիշատակենք, որ անաչառ վերլուծողի համար ին քնին

պարզ պիտի լինէր, որ ոռւսական սահմանին մօտիկ տաճկական բերդաքաղաք Երզրումում հաւաքուած Դաշնակցութեան Գերագոյն ժողովը իրբե անվստահութեան և հակակրանքի փաստ պիտի նկատուէր հանդէպ Ռուսիոյ և դաշնակիցների, և, ընդհակառակը, իրբե ուղղամտութեան— չասելու համար վստահութեան կամ կողմնակցութեան— մէկ չափազանց կարեւոր քայլ հանդէպ Թուրքիոյ :

Ի՞նչ որոշում տուաւ Երզրումի Ընդհանուր Ժողովը : Ի՞նչ զիրք բռնեց նա գէպի Թուրքիան, Ռուսաստանը և միւս պետութիւնները :

Սյստեղ ես նոր յայտնութիւններ չպիտի անեմ : Այդ հարցերի քննութեան ընթացքում զուգընթացաբար բանակցութիւններ էին տարուում իթթիհատիներկայացուցիչների և միաժամանակ յիշեալ կուսակցութեան կենտրոնական Կոմիտէի երկու անդամների՝ Պէհակատին Շաքիրի և Նամիկի ու իթթիհատի Երզրումի ներկայացուցիչ Հիլմի բէյերի հետ, որոնք յատուկ յանձնարարութեամբ ուղարկուած լինելով երիտասարդ Թուրքերի մեծ կուսակցութեան և Թալէաթ բէյի կողմից, շարունակ տեղեակ էին ժողովի տրամադրութեանց և որոշումներին : Անշուշտ կառավարութեան և իթթիհատի ներկայացուցիչները ժամանակին ընդարձակ գեկուցումներ են տուել՝ ուր որ հարկ է՝ Դաշնակցութեան ընդհանուր ժողովի որոշումների մասին : Այսքան գաւերից և ոճիրներից յիտոյ կ'ուզէի հաւատալ, որ գոնէ նաջի բէյը ազնուութիւն կ'ունենայ, առանց խեղաթիւրելու, ճշաօրէն յայտնել և հրապարակել մեր միասին կազմած արձանագրութիւնները : Բայց եթէ յիշածս փաստական աղբիւրը ոչնչացրուած է, այդ պարագային Թուրք մտարականները թողքարի լինեն քրքրելու ներքին գործոց կամ Թալէաթ

բէյի անձնական արխիւները և հրապարակելու 1914-ի Սեպտեմբեր և Հոկտեմբեր ամիսներին ժողովի կողմից վռամեանի և Ակնունիի ստորագրութեամբ Պոլիս քաշւած երկու հեռագիրները՝ իսկ եթէ որ եւ է կերպ նաեւ այդ հեռագիրները ոչնչացրուած են, այդ դէպքում թող անցագրի պատրուակով ձերբակալուած Դագէսնեանի՝ Բուլղարիայից ներկայացուցիչ Ընդհանուր Ժողովում՝ յիշատակարանները քրքրեն և ժողովի նօթագրութիւնների հետ ծանօթանան, իսկ եթէ լիշեալն էլ դժուար է ձեռք բերել, ապա բարի պիտի մինեն էրզրումից 1915-ին ձեռք ձգած թղթերը թերթելու և Ընդհանուր Ժողովի որոշումները կարդալու, Անջրաժեշտ է, որ թուրք զեկավարները այս նեղութիւնը յանձն առնեն, որովհետեւ Անդօրայում միամիտների մի խումբ, ինչպէս թերթերում կարդացինք, նպատակ ունի պատերազմի պատասխանառուներին զատի յանձնելու, իսկ այս տեսակէտից մեր առաջարկները իրագործուած դէպքում բաւականին փառաեր ու նիւթեր կարելի է ունենալ, ես յուետես եմ, ես համոզուած եմ, որ այս պարզ կատակերգութիւն է, որովհետեւ եթէ լուրջ լինէր, ապա կոչնազիր պիտի ուղարկուէր ոչ միայն Խալիլ բէյին և Դաշնակցութեան, այլ շատ շատերին, իսկ եթէ արդարութիւն լինէր, այդ դէպքում Հ. Յ. Դաշնակցութիւնը պիտի հրաւիրուէր իրեն դատախազ՝ դատապարտենու նրանց, որոնք պատճառ զարձան թուրքիան պատերազմին մասնակից լինելու:

Եւ ահա թէ ինչու:

Հ. Յ. Դաշնակցութեան VIII-րդ Ընդհանուր Ժողովը հետեւեալ հիմունքներով գէմ էր Թուրքիոյ մասնակցութեան համեւրոպական պատերազմին:

Դաշնակցութեան համար պարզ էր, որ պատե-

րազմի պատճառներից մէկն ալ եւրոպական պետութիւնների խաչաձեւած շահերն են չնդհանրապէս Արեւելքի և մասնաւորապէս Թուրքիոյ մէջ, Այդ պետութիւններից ամէն մէկը ձգուում է տիրանալ օսմանեան հարստաթեան, իսկ Թիւրքիան, յարելով կուռող կողմերից որևէ մէկին, վերջ ի վերջոյ անպայման պէտք է տկարանար և տեղի տար:

Եւ ընդհակառակը, եթէ Թուրքիան չէզոք մնար և խելացիօրէն օգտագործէր իր զբաւած ուզմական կարեւոր գիրքերը, հանգիստ առնէր պատերազմի ընթացքին, կարգ ու կանոն մտցնէր երկրի մէջ, բուժէր ներքին վերքերը և իր ուժերը ամփոփէր, ապա պատերազմի վախճանին նա իրենից մի պատկառելի հզօրութիւն պիտի ներկայացնէր, որի վաստակած յաղթանակները շատ աւելի մեծ պիտի լինէին, քան յաղթական պատերազմները կարող են տալ:

Կար նաեւ այն— իսկ այս ամենէն կարեւորն էր Հ. Յ. Դաշնակցութեան համար— որ պատերազմի դէպքում Հայաստանն իր երկու հատուածներով ուղարկում պիտի դառնար, հայութիւնը պատերազմից մեծապէս պիտի տուժէր, իսկ նրա սաացուածքն ու հայրենիքը պիտի քայլայուէր: Հայ մեծ կազմակերպութեան աշքին սրանք չափազանց զօրաւոր պատճառներն էին՝ պատերազմին դէմ արտայայտուելու համար:

Ահա այս նկատումներով էր որ VIII Ընդհանուր Ժողովը հրահանգեց օսմանեան խորհրդարանի երեսփոխաններին:

Ա. — Հակառակ քուէ տալ պատերազմին և ջանալ արդեւել թրքական արկածախնդրութիւնը.

Բ. — Ընդհանուր Ժողովի արամադրութիւնները

յայտնել կառավարութեան, համոզելով վերջինին՝ յետ կենալ պատերազմի կործանարար մտքից.

Գ. — Համապատասխան ոգով բանակցութիւններ վարել իթթիհատի և կառավարութեան հետ:

Ահա ճշմարտութիւնը:

Եւ այսօր, այսքան փորձութիւններից ու աղէտաներից յնտոյ, պարզ չէ միթէ, որ թուժք դեկավար գործիչները եթէ 1914-ի պատմական օրերին լսէին Հ. Յ. Դաշնակցութեան խորհուրդները և հետեւէին այդ խորհուրդներին, ապա այսօր, 1923-ին, նրանք կ'ունենային մի հայրենիք, որ հզօր է, հարուստ եւ ամբողջացած և ոչ թէ այսօրուայ նման քայքայուած ու մասնատուած:

Այս ամէնը միթէ ապացոյց չէ այն բանին, որ հայ մեծ քաղաքական կազմակերպութիւնը ո՛չ գործիք էր և ոչ էլ կարող էր գործիք լինել ուեւ պետութեան ձեռքին, այլ, ընդհակառակը, տոգորւած էր թուրքիոյ և նրա մէջ ապրող ժողովուրդների լաւագոյն հեռանկարներով:

Այսպէս վարուեց մեր հարեւան իմաստուն, բայց թոյլ Պարսկաստանը, և, չեղոք մնալով, պատերազմի վախճանին նա տիրացաւ շահաւոր զիրքերի:

Եզրակացութիւնները թողնելով անաչառ դատողներին, այժմ տեսնենք թէ ի՞նչ ընդհանուր պահանջներ էր առաջադրում Հ. Յ. Դաշնակցութիւնը օսմանեան կառավարութեան: Թերեւս, ո՛վ գիտէ, այդ պահանջների մէջ կարելի է դանել «դաւաճանութեան» հետքեր:

Բերենք թուրքիոյ մասին տրուած որոշումները:

«Մեր դիրքը դեպի կառավարութիւնը. — Նկատ ունենալով պետական այն նեղ և տարամերժ քաղաքականութիւնը, որով կը քննորոշուի իթթիհատական

կառավարութիւնը. իր գործունէութեամբ, և որուն արդիւնք են տնտեսական, դպրոցական, վարչային եւ այլ մարզերու մէջ բոլոր ոչ-թուրք ազգութիւններու, հետեւաբար և հայ ժողովուրդի վերաբերմամբ գործ դրուող օրինական և հակաօրինական ճնշիչ միջոցներ:

Նկատի ունենալով մանաւանդ կառավարութեան հետապնդած խափանարար ուղղութիւնը բարենորոշումներու անշեղ գործադրութեան մէջ.

Ընդհանուր ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ կուսակցութիւնը պիտի շարունակէ մնալ անյողողող ընդդիմագրի և անաչառ քննադատի գերին մէջ հանդիպ իրքինատի, պայքարելով անոր ազգայնական վեասակար եւ հակապետական քայլաքանակութեան դէմ:

Ժողովը չի ժխտեր գործակցութեան սկզբունքը այն համապետական կարեւոր խնդիրներու համար, որոնք համապատասխան են կուսակցութեան ծրագրային պահանջներուն»:

Ռայուֆ բէյերը իրենց ընկերներով պիտի հասկանան, որ անհնար էր մի ընդդիմագրի կուսակցութիւնից աւելի ուղղամտութիւն սպասել, երբ պատերազմ է լինում, երբ թուրքերը իրը խոսուում աւելին էին առաջարկում: Այդ կուսակցութիւնը, որ: իրօք, տաճկահայ ժողովուրդն էր ներկայացնում, մնալով կանգնած համապետական հողի վրայ, իր իրաւունքները ցանկանում էր ձնուք բերել ներքին պայքարով և ոչ թէ հակապետական դաւադրութեամբ: Նա զգացմունքներով չէր առաջնորդուում, այլ պատրաստակամութիւն էր յայտնում լծուել ընդհանուր, համապետական գործի:

Ի՞նչ են կարծում թուրք գործիչները. միթէ Դաշնակցութիւնը, եթէ, իրօք, մտադրութիւն ունենար պատերազմից օգտունլու, կամ եթէ նա կապ ունե-

նար դրսի պետութեանց հետ, այսպիսի որոշումներ պիտի կայացնէ՞ր:

Որպէսզի աւելի պարզենք մեր միտքը՝ բերենք մի յօդուած բարենորոգումների հարցի մասին.—

«Ընդհանուր ժողովը լսելով բարենորոգումների մասին տրուած զեկուցումը և վիճաբանութեան հետարկելով առհասարակ կուսակցական բարենորոգչական գործունէութիւնը դիւնագիտական, քաղաքական ձանապարհներով, ընդունեց, որ կուսակցութիւնը սկզբունքով կարող է որդեգրել բարենորոգչական գործունէութիւնը, միաժամանակ պարտք դնելով ձեռնաս մարմիններու վրայ աւելի քիչ տարուի դիւնագիտական ուղղութեամբ եւ միշտ շարունակել գերակշռութիւն տալ կազմակերպական իրական ուժի հզօրացման»:

Սրժէ, սակայն, մի քիչ աւելի կանգ առնել այս հարցի վրայ,

Սնկախ հայ և թուրք ժողովուրդների կամքից, միանդամայն առևսգերմանական մրցակցութեան չնորհիւ, Հայկական Հարցը դիւնագիտական քննութեանց նիւթ է դառնում և Հոփն ու Վեստենենիը ոգեւորութեան սերմեր են ցանում այստեղ ու այնտեղ։ Սակայն Հ. Յ. Դաշնակցութիւնը, այնուամենայնիւ, հրահանգում է իր մարմիններին, գործակցել թուրք կառավարութեան և անգամ պատերազմի դէպում լինել նրա հետ նա միայն որոշ կէտերի նկատմամբ սրբագրութիւններ է առաջարկում, մի բան, որ պահանջում էր նաեւ թուրքիոյ շահերը և որ ընդունուած էր բովանդակ քաղաքակիրթ աշխարհում։

Բաւական համարելով 1914-ի Օգոստոս 5-ին երգումում բացուած Ընդհանուր ժողովի մի շարք որոշումների յիշատակումը, մենք կարծում ենք, որ այլևս պարզ է բոլոր նրանց համար, որոնք անաշառօքն տեսնել, լսել ու դատել գիտեն, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը եղել է այն միակ կուսակցութիւնը Թիւրքիոյ մէջ, որը, նախատեսներով պատերազմի աղէտաւոր հետեւանքներն ու Թիւրքիոյ և հայերի փրկու-

«Ընդհանուր ժողովը միշտ կանդնած մնալով այն տեսակէտի վրայ, թէ երկիր մը արտաքին վտանգներէ պաշտպանելու հաստատուն և նպատակայարմար միջոցը համաժողովրդական բանակն է՝ միլիուը, և հետեւարար, դէմ ըլլալով ներկայ գինուորական շարք մը ձնչիչ պայմաններուն».

Ընդունելով դարձեալ, որ ամեն որ պարտաւոր է կատարել իր քաղաքացիական պարտականութիւնը իր երկրին հանդիպալ.

Կը յայտարարէ մարմիններուն՝ հետամուտ ըլլալ ապահովելու՝

Ա. — Մուկնարգների ազատագրումը.

Բ. — Ռւսուցիչներու ամառնային ծառայութիւնը.

Գ. — Մինչեւ 31 տարեկան (99 թուականը) քրիստոնեաներու զինուորագրութիւնը վճարովի կատարել տալու սկզբունքը»։

Ուրեմն, դէմ լինելով թէ՛ պատերազմին եւ թէ՛ զինուորագրութեան, Դաշնակցութիւնը, այնուամենայնիւ, հրահանգում է իր մարմիններին, գործակցել թուրք կառավարութեան և անգամ պատերազմի դէպում լինել նրա հետ նա միայն որոշ կէտերի նկատմամբ սրբագրութիւններ է առաջարկում, մի բան, որ պահանջում էր նաեւ թուրքիոյ շահերը և որ ընդունուած էր բովանդակ քաղաքակիրթ աշխարհում։

Բաւական համարելով 1914-ի Օգոստոս 5-ին երգումում բացուած Ընդհանուր ժողովի մի շարք որոշումների յիշատակումը, մենք կարծում ենք, որ այլևս պարզ է բոլոր նրանց համար, որոնք անաշառօքն տեսնել, լսել ու դատել գիտեն, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը եղել է այն միակ կուսակցութիւնը Թիւրքիոյ մէջ, որը, նախատեսներով պատերազմի աղէտաւոր հետեւանքներն ու Թիւրքիոյ և հայերի փրկու-

թիւնը փափաքելով, ամէն կերպ ձգտել է զարկ տալ օսմանեան պետութեան վերածնունդին և նրան հեռու պահել բոլոր փորձութիւններից :

Այս պատճառով է որ նա իր գործունէութեան ընթացքին ո՛չ գործիք էր և ո՛չ էլ կարող էր գործիք լինել որևէ պետութեան ձեռքին ընդդէմ թուրքիոյ:

Տեսնենք սակայն, թէ ի՞նչ էր թուրք գործիչների կարծիքը :

Մենք արդէն ծանօթացանք Հ. Յ. Դաշնակցութեան թէ՛ ընդհանուր ուղղութեան և թէ՛ մասնաւորաբար էրզրումի Ընդհանուր ժողովի այն որոշումների հետ, որոնք հմաք ծառայեցին կուսակցութեան անունից բանակցութիւններ վարելու իթթիհատի և կառավարութեան լիազօրներ՝ նաճիր, Բենաէտախն Շաքիրի և Հիլմի բէյների հետ,

Ի՞նչ էր նրանց պատասխանը :

Անշուշտ էնկիւրի եւ Պոլիս նստած մտաւորականներն ու պետական մարդիկ ունեն իրենց ձեռքի տակ յիշեալ լիազօրների առաջարկները, որոնց մասին, նըրանք, այնուամենայնիւ, ոչինչ չեն խօսում:

Այդ առաջարկների բովանդակութիւնը համառատակի ձեւով հետեւեալն էր:

Պատերազմի մասին. — Տաճկաստանն իր մեծութիւնից ընկել է եւրոպայի դաւազրութեանց չնորհիւ, մէջն առնելով նաև Գերմանիան, Սակայն Թուրքիոյ ամենէն հետեւողական ու ոխակալ թշնամին միշտ էլ Ռուսաստանը եղած է: Նաեւ այս պատերազմը, ասում էին նրանք, պէտք է լիրջանայ Արեւելքի ստրկացումով, մի բան, որին մենք սառնասիրա ու անտարբեր ականատես չենք կարող լինել: Տաճկաստանը լինելով թուրանական ժողովուրդների յառաջապահը, և Սուլթանը, որպէս խալամութեան խալ-

ֆան, պէտք է օգտագործեն այն բոլոր ուժերը, որոնք դէմ են Ռուսաստանին: Ռուսաստանը պէտք է կլանի ամբողջ թուրքիան, եթէ միայն չյաղթուի: Ռւստի պէտք է նրա դէմ դուրս գալ և պայթեցնել Ռուսիան, թէ՛ ներսից, ուր մենք մտ 40 միլիոն ցեղակից թըրքութիւն ունինք և թէ գրաից, ուր նա բաւականին թշնամիներ է շահած: Հիւսիսի արջը դէպի հիւսիս պիտի երկարի, Կովկասիան լեռնաշղթայից գէպի այն կողմը, Կասպիան ծովից գէպի վեր: Եւ որովհետեւ Գերմանիան է միակ հզօր պետութիւնը, որ իրապէս գէմ է Ռուսաստանին, գէմ լինելով միաժամանակ նաեւ Անգլիային՝ մեր երկրորդ կարեւոր թշնամուն, ապա պարզ է, որ մենք Գերմանիայի հետ պէտք է զինակցենք զաշնակիցների: գէմ գուրս գալու պայմանով: Այս բանակցութիւնները տեղի ունեցան «Գէօրգէնի» պատմութիւնից շատ առաջ:

Օգոստոսին արդէն պարզ էր իթթիհատի որոշումը պատերազմի մասին: Օգոստոսին Իթթիհատը արդէն գործում էր և ոչ միայն խօսում: Այդ ժամանակ էր որ Դաշնակցութեան հետ բանակցութիւններ վարող թուրք գործիչները, բերելով իրենց հետ քարոզիչների մի ամբողջ քախումք, սեպտեմբերին երեք ուղղութեամբ և միանդամայն որոշակի հրահանդներով մըտցրին Ռուսաստան: Այդ քարոզիչներից մէկ խումբ Ոլթիի գծով անցաւ Աջառիա, միւս խումբը Ալաշկերտի վրայով մտաւ Բագու և Դաղստան, իսկ երրորդը՝ Վանի և Մակուի գծով Պարսկաստան անցաւ: Անշուշտ իպրահիմ էֆէնտի (Ալեքսանդրապոլի) չի մխտի այս փաստը, որովհետեւ նա մասնաւորաբար մեր գիտութեամբ իր հայրենիքն անցաւ: Այս բոլորից յետոյ պարզ չէ՝ արգեօք, որ սուտ են ու անհիմ այն բռուր լուրերը, որ իրեւ թէ Թուրքիոյ մասնակցութիւնը

պատերազմին՝ ամբողջապէս էնվէրի արկածախնդրութեան գործն է :

Տուեալ դէպօռում մեր յարուցած հարցի մէջ հետաքրքրականը այն չէ անշուշտ, թէ ո՞վ էր պատերազմի պատասխանատուն : Այս հարցի պատասխանը թող տան Պոլիսն ու էնկիւրին, կարեւորն այն է, որ Դաշնակցութիւնը, դէմ լինելով պատերազմին և դէմ լինելով իթթիհատի կառավարութեան քաղաքականութեան, այնուամենայնիւ, որոշում է յորդորել հայ ժողովուրդին՝ կոռուի դէպօռում անթերի կերպով իր պարտականութիւնները կատարել Թիւրքիոյ հանդէպ: Եւ այդ մասին նաև նախապէս յայտնում է Բեհաէտատին Շաքիրներին: Միայն աղնիւ յեղափոխական կուսակցութիւնը այսպէս կարող էր վարուել. սակայն . . . աղնիւ մարդկանց հետ: Այս վերջին կէտք մոռացուեցաւ Հ. Յ. Դ. Կողմից և այս մոռացումը անշուշտ ձակատագրական մեծ սխալ էր:

Դաշնակցութիւնը պիտի խաբէր, պիտի դաւաճանէր, գաւազրէր Թուրքիոյ դէմ, գուցէ այդ պարագային բարբարունները այլ կերպ վարուէին հայ ժողովուրդի հետ և այնքան անմեղ արիւն չհոսէր:

Պիտի խոստովանել, որ իթթիհատն ու կառավարութիւնը պահանջում էին Դաշնակցութիւնից փոխել իրենց հայեացքները, փոխարէնը գայթակղալից խոստումներ տալով նրան:

Անաչառ լինելու համար կը յայտարարենք, որ նրանք այս կէտում չափից աւելի առատածեռն էին: Միծալելիութեան չափ համեստ էին գտնում մեր պահանջները և յայտարարում, որ մենք իրաւունք չունենք լինել աւելի համեստ, քան Առնաւուտներն են և չպահանջել ազգային բաղձանքների առաւելագոյնը: Նրանց տարօրինակ էր թուում, որ Դաշնակցութիւնը իրհոգածութեան զիմաւորն

առարկան համարում է ընդհանրապէս Արեւելքի և մասնաւորապէս Թուրքիոյ անդորրութիւնը և հայ ժողովուրդի գիզիքական գոյութեան պահպանումը: տարօրինակ էր թուում, որ հայութեան քաղաքական պահանանչների իրագործումը նա յետաձգում էր պատերազմի վախճանին, համարելով այն պետական ներքին հարց:

Ես չեմ կարող կասկածել իթթիհատի և կառավարութեան լիազօրների անկեղծութեան վրայ:

Էրգուումի մէջ պարզ ու յստակ ձեւով նրանք մեզ հետեւեալն էին յայտնում: —

«Ինչպէս թուրքերը, նոյնպէս եւ հայերը պատերազմի հետեւանքով ստեղծուած բացառիկ հանգամանքների չնորհիւ, իրաւունք ունեն ազգային իրենց գերագոյն նպատակներին հասնելու: Պէտք է ստեղծել Հայաստան, կենարոնն ունենալով էջմիածինը: Հայաստանի մէջ պէտք է մտնեն Ռուսական: Հայաստանի հայկական մասերը, զրան պէտք է կցել Տաճկահայաստանից էրգուում նահանգի որոշ մասերը, առանց էրգուում քաղաքի, և վան ու Բիթլիս նահանգներից որոշ հողամասեր: Այդ Հայաստանը պատուար պիտի կազմէ Հիւսիսի դէմ, միանալով Անգրիկովկասում ստեղծուելիք այլ պետութեան հետ: Ի՞նչ վերաբերում է կարսին, ուա, հայկական լինելով մէկտեղ, Թուրքիան զինուորական առանձնայատուկ իրաւունքներ պիտի ունենայ այդ բերդաքաղաքի մէջ, և այդ էլ պարզ այն պատճառվ, որ Հայաստանը, լինելով նորաստեղծ ու փոքր պետութիւն, առայժմ անկարող պիտի լինի այդ կարեւորագոյն ռազմակինորոնը ըստ արժանույն օգատագործել Ռուսիոյ դէմ: Պէտք է ստեղծել և Վրաստան, Ասրբէջան ու Դաղստան, և այդպիսով, եթէ այդ ազգերը կը ստանան իրենց անկարսութիւնը,

Թուրքիան այն ժամանակ վերջնականապէս կ'ապահովուի Հիւսիսի իր գարաւոր թշնամուց» :

Ինչպէս նկատում էք, իթթիհատի և թուրք կառավարութեան պաշտօնական լիազօրները մեզ առաջարկում էին ստեղծել Միացեալ, Անկախ և Ազատ Հայաստան, այսինքն մի բան, որ ոչ Դաշնակցութեան ծրագրի և ոչ էլ նրա այդ օրերի տրամադրութիւնների մէջ կար: Ի հարկէ, այս առաջարկները գայթակեցուցիչ պիտի լինէին ոմանց համար, և քանի որ աղբիւրներ մատնանշեցի, ապա պիտի խոստովանեմ, որ այդ աղբիւրների մէջ հետաքրքրութները պիտի տեսնեն, որ գայթակղութողներից մէկն էլ ես էի: Բայց այդ չէ էականը, ի հարկէ. էականն այն է, որ ընդհանրութիւնն ու Դաշնակցութեան ճնշող մեծամասնութիւնը հակառակ էին գայթակղութողներին: Նրանք գտնում էին, որ ստեղծուած պայմաններում չափազանց եսականն ու վտանգաւոր է նման արկածախնդրութիւնների ետներց ընկնել, վտանգելով թէ՛ հայութիւնը և թէ՛ Արեւելքը: Որովհետեւ իրը փոխարինութիւն այդ զիջումներին՝ թուրք լիազօրները պահանջում էին մեզնից: —

1.— Ընդունել սկզբունքով, որ պատերազմին մասնակցել անհրաժեշտ է և պատերազմի գէպում լինել այն պետութեանց հետ, որոնք գէմ են Թուսատանին:

2.— Քանի որ Անդրկովկասում ասանց հայ զեկովարութեան և գործօն մասնակցութեան ապստամբութիւն չի կարող լինել, և որովհետեւ ուստահայերի առաջնորդը Դաշնակցութիւնն է, ուստի նա Կովկասում անելիք ապստամբութեան նախաձեռնութիւնը իր վրայ պէտք է վերցնէ:

3.— Հայերը պարտաւորւում են՝ Դարսում զին-

որական առանձնաշնորհութիւններ տալ Թուրքիոյ:

4.— Հայաստանը անկախ է, վերը յիշած սահմաններում, մանրամասնութիւնները յետագային ճշշտելու պայմանով:

5.— Հայաստանը Անդրկովկասում կազմուելիք միւս պետութեանց հետ մէկտեղ գէմ պիտի լինի Թուսատանին:

6.— Թուսական ուղղութիւն ունեցող մարդիկ, ինչպէս, օրինակ, Գէորգ Կաթողիկոսն է, ասպարէցից պէտք է քաշուեն և պէտք է փոխարինուեն հայկական անկախութեան կողմակիցներով»:

Այս կէտերին Դաշնակցութիւնը հետեւեալ ձեւով է պատասխանում:

1.— Թուրքիոյ մասնակցութիւնը պատերազմին արկածախնդրութիւն է և ոչ թէ անհրաժեշտութիւն. Թուրքիան չէզոք պէտք է մնայ և չէզոքութեամբ իրաւունքներ ձեռք բերի:

2.— Անդրկովկասի հայութիւնը դեռ եւս չէ տես սած թուրք կառավարութեան բարեացակամութիւնը, իսկ Թուրքիոյ մէջ ցարդ կը ժխտուի քաղաքացիական տարրական իրաւունքների անհրաժեշտութիւնը հայերի համար. Անդրկովկասի հայութիւնը չափական հաւատայ ոչ Թուրքիոյ և ոչ էլ Դաշնակցութեան ծայրակեղ խոստումներին: Զալիսի մոռանալ նաև այն, որ Դաշնակցութիւնը, լինելով հալածուած կուսակցութիւն Ռուսաստանում, զուրկ է հեղինակութիւնից ժողովրդական լայն զանգուածները ապստամբ վիճակի մէջ զնելու Ռուսիոյ գէմ: Դաշնակցութիւնը միասնական նաև այն կարծիքին է, որ Անդրկովկասի ժամանակ նաև այն պարծիքին է, որ զանգովորդներից և ոչ մէկը, ոչ վրացիները, ոչ զանգովորդներից և ոչ իսկ Թաթարները զէնք չպիտի ըստանցիները և ոչ իսկ Թաթարները զէնք չպիտի ըստանցիների և այս ժողովուրդների լայն բարձրացնեն Ռուսիոյ գէմ և այս ժողովուրդների լայն

խաւերը, բացառութեամբ որոշ շերտերի լոյեալ պէտք է մնան ոռուսական պետականութեան հանդէպ։ Այս պիսի պայմաններում Դաշնակցութեան նախաձեռնութեամբ սկսած ապստամբութիւնը պատճառ պիտի դառնայ նոր հայ-թաթարական, հայ-վրացական ու հայդաղաստանցիական կոփւների։ Իսկ Ռուսաստանը պատրուակ բռնելով այս երեւոյթը, պիտի բնաջնջի հայ ժողովուրդը։ Ահա այս նկատումներով, Դաշնակցութիւնը յայտարարում է, որ ապստամբութեան նախաձեռնութիւնը իր վրայ չի կարող վերցնել. աւելացնելով միաժամանակ, որ անկախ իր կամքից, եթէ այդպիսի մի ապստամբութիւն ծագի, ինքը, ի հարկէ, արգելքներ չպիտի հանի, մանաւանդ եթէ մեր գոյութիւնն ապահովող լուրջ հաւաստիացումներ լինեն։

3.— Ընդունելով, որ Հայաստանի սահմանների վերջնական ճշտորոշման հարցը մտնում է կուսակցութեան ոչ այսօրուայ նպատակների մէջ, Դաշնակցութիւնը յայտարարում է, որ ինքը, ստեղծուած պայմաններում, չպիտի հետապնդի քաղաքական նպատակներ, այլ պիտի տարուի բացառաբար հայ ժողովուրդի փիզիքական դոյութեան հարցով։

4.— Դաշնակցութիւնը խոստանում է հրահանգել հայութեան երկու հատուածներին, որ պատերազմի դէպուամ երկու հատուածներն էլ մնան լոյեալ հատուածներ իրենց պետութիւնների հանդէպ և ուղղամտօքն կատարեն ՚իրենց քաղաքացիական պատականութիւնները։

Իթթիհատի ներկայացուցիչները դժգոհ էին մեր պատասխաններից, Նրանք բնական էին գտնում, որ թրքահայը Թուրքիոյ հանդէպ լինի լոյեալ և սակայն չին ուզում հասկանալ, թէ ինչո՞ւ ոռուսահայը նոյնպէս լոյեալ պիտի լինի Ռուսիոյ հանդէպ։ Նրանք պահան-

ջում էին, որ բովանդակ հայութիւնը միայն իրենց գէն-քի յաշողութեանը ծառայի։ Նրանք յայտարարում էին, որ հակառակ պարագային իրենց գործը պիտի վիճի, որի միակ պատասխանատուներն են՝ նախ՝ Դաշնակցութիւնը և ապա՝ հայութիւնը։

Գաղափնիք չէր Դաշնակցութեան համար, որ «պատասխանատու» խօսքի տակ թագնուած էին հայկական կոտորածների սարսափելի պատկերները։ Բայց միթէ նա, ով չէր հաւատում թուրք վարիչների անկեղծութեան։ պայծառորէն տեսնում էր պատերազմի հետեւանքները, գիտէր, որ Թուրքիոյ մասնակցութիւնը պատերազմին համազօր է հայ ժողովուրդի բնաջնջման, պատերազմին համազօր է հայ ժողովուրդի բնաջնջման, ոնա պէտք է թէ՛ ինքը գործիք գառնար և թէ՛ բովանդակ հայութիւնը գործիք գարձնէր թուրք վարիչներին։

Եթէ թուրք մտաւորականները եւ հայերից յետին թուրք իմաստունները ինձ հակասութեան մէջ բռնելու ցանկութեամբ փորձեն ինձ վերադարձնել 1914 թ. իմ թրքասէր ճառերը, գրանով նրանք քիչ բան ապացուցած պիտի լինեն, գրավիետեւ ես գտնում եմ, որ իմ նահատակ ընկերները եղան մեզնից աւելի իմաստուն և աւելի հեռատես և կարողացան ըստ արժանելոյն գնահատել Թալէսաթների մին հրապոյըններն ու իսոստումները։ Նազիմները չկարողացան և ոչ մէկ ճաթար, քիւրտ կամ պարսիկ շարժման մէջ դնել և համիլամութեան կամ պան-թրքութեան գաղափարներով ոգեւորել։

Խալիլ փաշայի զօրաբանակները առաջին անգամ ծեծ կերան հէնց պարսկական և տաճկական քրտերի կողմից։

Ատրբէջան ու Դաղստան գնացող գործակալները ոչինչ չարեցին. բնդհակառակը. տաճկական զօրքերը հարուածող ոռուական պատկառելի բռունցքներից մէկն

էր նաև կամաւորական «Դիկայեա Դիւիզիան» (վայրենի զօրամաս), որ կազմուած էր բացառաբար թաթարներից, լէզգիներից և չըրքէզնէրից :

Առաջամաս տուում վրացիները տեղից չարժուեցին և վրացական սին յոյսերով և խոստումներով ոգեւորուած էնվէրը, որ արշաւում էր զէպի Ղարս ու Թիֆլիս, և ոչ մէկ ապստամբութիւն չտեսնելով, իր բանակները թաղեց ձիւների տակ և ձեռնունայն ու դագագած վերադարձաւ Պալիս :

Դաշնակցութիւնը, հետեւաբար, նաև հայ ժողովուրդը, իրաց առեալ մասնակի խմբակների, նախատեսելով այս ամէնը, իրաւամբ որոշեց մնալ չեզոք և լինել լոյեալ թուրքիոյ և Ռուսիոյ Հանդէպ :

Այս թուրքը այսպէս լինելով հանդերձ, գուցէ եւ կեանքը այլ ուղղութեամբ է լնթացել, իսկ որոշումները մնացել են միայն մեռած տառ։ Դա քննելը սոյնպէս կարեւոր է, որովհետև կենդանի գործը յաճախ դժուար է պարփակուում որոշումների նեղ սահմանների մէջ, եւ իրօք, կեանքի մէջ եղել են այնպիսի շեղումներ, որոնք որոշումներին չեն համապատասխանել, բայց եւ այնպէս մեր գործունէութեան ուղղութիւն տուազը եղել է ընդհանուր ոգին։ Կեանքի հրամայականի տակ եղած այդ շեղումները թուրք գործիչները մատի փաթթոց արած, ցանկանում են ապացուցել, որ հայերը գործիք են եղել ուրիշների ձեռքին, որ նրանք ձգտել են թուրքիան պայմեններից ու զրաից :

Քննենք, ուրիմն, հայերի ընթացքը երկու գլխաւոր վայրերում՝ Անդրկովկասում և Թուրքիայում։

Գաղութաբնակ հայութեան զիրքը երկրորդական պիտի նկատել և նրանց թեր ու դէմ լինելը այնքան էլ լուրջ քննութեան նիւթ չպէտք է դարձնել։

Վերցնենք նաև Անդրկովկասը :

1897 թուի համառուսական ընդհանուր վիճակագրութեամբ Անդրկովկասն ունէր 1,800,000 հայութիւն, Սրանք ամենքն էլ Ռուսահպատակ հայեր էին և տասնեակ տարիների ընթացքում ենթակայ ընդհանուր զօրակոչի։ Բնականորէն նաև 1914 թիւն այս նոյն հայութիւնը, նախ մինչեւ 35 տարեկանները ենթարկում են զօրակոչի։ Ամէն մէկ դաս տալիս էր 10,800 զինուոր, 19—43 տարեկանները, այսինքն 24 դասը պիտի տար՝ 10,800ը 24 անգամ, որ հաւասար է 259,200 զինուորի։

Թուրք մտաւորականները, որոնց մեծ մասը զինուորականներ են, պիտի իմանան, որ ուստի կառավարութիւնը իր զօրակոչի գործը գրած լինելով շատ ամուր հիմերի վրայ, հնարաւորութիւն չպիտի տար հայերին՝ խուսափելու իրենց պարտականութիւններից։

Այժմ, ենթադրենք, որ 259,200 հայ զինուորներից մի մասը, ասենք, 109,200ը՝ զբաղուած են թիկունքային և կամ այլ աշխատանքներով, հիւանդներ են կամ դասալիքներ, ընդհանուր քանակից զեղչելով հանդերձ 109,200ը, մենք նորից կ'ունենանք 150 հազարնոց հայկական զուէնների մի պատկառելի քանակ, որ Ռուսաստանը միշտ կարող էր դէմ հանել Տաճկաստանին։

Այժմ, այն թուրքերին, որ մեծազրում են հայ ժողովուրդը այն բանի մէջ թէ նա գործիք էր սուսների ձեռքին ընդդէմ թուրքերի, հետեւալ հարցերը պիտի ուղղենք։

1. — Զօրակոչի ենթարկուած 259,000 հայերը ո՞ւր էին ուղարկուում։

2. — Տաճկական ճակատում ընդամենը որքա՞ն հայեր կալին արդեօք։

Եթէ այս հարցերին՝ գործից անտեղեակ մարդիկ չկարողանան պատասխանել, կորիւները դեկավարող թուրք զօրականները և խնդիրների խորերը թափանցող հայ ու թուրք գործիչները անշուշտ ի վիճակի են պատասխանելու.

ա) Հայ զինուորները կովկասնան ճակատից փոխադրուում էին գէպի հիւսիս, տարածուելով կարպաթներից մինչեւ Բալթիկ ծով, իսկ նրանց փոխարինելու համար, Վոլգայի և Բալթիկի ափերից զօրամասեր էին փոխադրուում տաճկական ռազմաճակատը:

բ) Տաճկական ճակատում գործող ռուսական քորամասերի մէջ հայ զինուորների թիւը երբեկցէ 20—25 հազարից չէր անցնում:

Այս փաստերի վրայ անհրաժեշտ է, որ հայ եւ թուրք մտաւորականները մի քիչ կանգ առնեն, որովհետեւ դրանից շատ թիւրիմացութիւններ պիտի վերանան և գաժան շատ ճշմարտութիւններ պարզուեն:

Սուաջին միտքը, որ պիտի զբաղեցնէ մեզ մեղադրող Ռառուֆներին և նրանց նման հազարաւորներին, պիտի հետեւեալը լինի. Եթէ հայերը՝ ընդհանրապէս և Դաշնակցութիւնը՝ մասնաւորապէս, գործիք էին ուռւների ձեռքին բացառաբար Թուրքիոյ գէմ. Եթէ, իրօք, ուռւները նպատակ ունէին հարուածելու Տաճկաստանը. Եթէ Ռուսաստանը իրապէս հաւատում էր հայերին, և, եթէ, վերջապէս, Հ. Յ. Դաշնակցութիւնը հետապնդելիք քաղաքական որեւ է նպատակ ուներ Թուրքիոյ մէջ, հապա այդ գէպում ինչո՞ւ հայ զինուորները հեռացուում էին տաճկական սահմաններից և նրանք փոխարինուում էին օտարազգի զինուորներով. Ինչո՞ւ հեռաւոր տեղերից փոխադրուում էին կովկասուում և այլ ազգութեանց զօրամասերը, իսկ հայերը քշուում էին նրանց տեղը. Զէ՞ որ փոխադրութիւնները

կապուած են ծախսի և ժամանակի վատնումի հետ, որոնք պատերազմի ընթացքում շատ կենսական են: Գուցէ առարկուի, որ հայերը, իբրեւ զինուորներ, որակով ցած էին եկուորներից: Բայց չէ՞ որ գերման և աւստրիական ճակատներում աւելի մարտոնակ զինուորներ էին պէտք, քան տաճկական սահմանումը Ո՛չ, դրանք չեն կարող էական պատճառներ համարուել, մանաւանդ, որ հայ զինուորը, ծանօթ երկրին, լեռներին, թուրքի վարքին ու բարքին, իր հարազատ միջավայրում ու սովոր կիմայի տակ, աւելի մեծ յաջողութեամբ և նկատելիորէն քիչ զոհերով ու վասներով պիտի կորիւներ տանէր, քան Կազանի թաթարը, Բալթիկի լատիշը, Սիբիրի կիրկիզը կամ Զէրնիգովի ոռու մուժիկը:

Առաջին հայեացքից այս տարօրինակ երեւոյթի իսկական պատճառները հետեւեալներն էին:

Ա. — Ռուսաստանը ուզուում էր ունենալ Հայաստան, սակայն առանց հայի:

Բ. — Ռուսաստանը, եթէ հայկական այդ հսկայական ուժը կենարոնացն էր տաճիկների գէմ, նրա միշոցով գրաւէր Հայաստանը, այն ժամանակ, մէկ օր յանկարծ, այդ բանակը կարող էր առաջազրել իր ազգային պահանջները և անսախորժութիւններ պատճառել մինչեւ իսկ Ռուսաստանին:

Գ. — Բայց որովհետեւ թէ՝ Դաշնակցութիւնը եւ թէ հայ զեկավար միւս կուսակցութիւնները պատերազմի ընթացքում չեն հետապնդած որևէ քաղաքական նպատակ ոչ Թուրքիոյ և ոչ էլ Ռուսաստանի սահմաններում, այդ պատճառով էլ նրանք չեն ձգտել եւ չեն պահանջել հայ զօրքերի կենտրոնացումը տաճկական սահմանի վրայ:

Բոլեւիկները շատ փաստաթղթեր հրատարակե-

ցին, ցանկալի էր, որ ուստական զինուորական գաղտնի բաժանմունքի այդ փաստաթղթերն եւս հրապարակուէին, որով կը բացուէին գաղութաբնակ հայութեան և մանաւանդ թուրք վարիչների կարձատես աշխերը, տեսնելու և հասկանալու համար իրերի խսկական պատկերը: Այդ գէպքում նրանցից և ոչ մէկը մեզպէսներին քաւութեան նոխազ չպիտի դարձնէր, խակ յատկապէս թուրքերը թերեւս իրենց քաղաքականութիւնը, ով գիտէ, զնէին աւելի առողջ հիմների նրայ: Սակայն պիտի հաւատալ, որ բոլշեւիկները այդպիսի քայլ բնաւ չեն անի, որովհետեւ նրանք հաւատարիմ և հարազատ ժառանգորդներն են Նիկոլայ Նիկոլայեվիչների եւ Նիկոլայ ցարերի:

Ընդունենք սակայն, որ այդ փաստաթղթերի կարքը բնաւ չկայ. ամենամեծ փաստը — իրականութիւնն է. անառարկելն այն է, որ հայ զինուորները, փոխանակ Հայաստանում և տաճիկների գէմ լինելու քշում էին գէպի արեւմտեան ճակատները՝ գերմանացիների և աւստրիացիների գէմ:

Ընդհանուր գծերով, Անդրկովկասի հայութեան դրութիւնն ու որդեզրած ուղղութիւնն այս էր: Բայց չպիտի Ժիտել, որ եղել են շեղումներ, քաղաքացիական պարտականութիւններից զուրս աւելորդ եռանդ է թափել՝ միանգամայն հակառակ Դաշնակցութեան որոշումներին և հայութեան մեծամասնութեան կամքին:

Ինչպէս ամէն ժողովրդի, նոյնպէս և հայերի մէջ եղել են ու կան կենդանի գործից, կեանքից եւ ժողովրդական հիմքից զուրկ խմբակներ, որոնք, ուսուելով սին ու գատարկ խոստումներով, սպանիական դղեակներ են կառուցել և Մոսկուա, Պետրոգրատ ու Թիֆլիս՝ անկախ Հայաստանի մասին արտասահնուած

մառերով, զօրաւոր զէնքեր են աւելի թուրք մտաւորականների ձեռքը, Թողնենք գնահատականը. չխօսենք այն մասին, թէ որքան խելացի կամ անիմելք, աեղի կամ անտեղի էին այդ խմբակների գործերը: Կարեւորն այն է թէ՝ այդ խմբակները արդեօք կարողացան ազգել հայ զանգուածների վրայ, թէ նրանք մնացին իրեւեւ ոսոկ մասնակի երեւոյթներ:

Անչուշտ նրանք մնացին իրեւեւ այդպիսին, իրեւաննշան ու անարժէք գործեր, թէեւ այդ խմբակներին աջակցում էին նաև Դաշնակցական որոշ անհատներ:

Ռուս պետական մարդիկ գիտէին, որ այդ խըմբակների ետեւէից հայ ժողովուրդը չպիտի գնայ. նրանք ծանօթ էին: Հ. Յ. Դաշնակցութեան էրզրումի Ընդհ. Ժողովի որոշումներին:

Դաշնակցութիւնը յետին թուով կարելի է մեղադրել այն բանի մէջ, թէ նա ինչո՞ւ չնախատեսեց թուրքիոց քաղաքականութիւնը, ինչո՞ւ նա վճռական կերպով շնուրեց և չնետապնդեց թուրքիան ոչնչացընելու ծրագիրը յօդուր Ռուսաստանի:

Ճիշտ է, Ռուսաստանը ցանկանում էր Հայաստան ունենալ առանց հայերի, սակայն նկատի ունենալով նրա փափուկ վիճակը պատերազմի ընթացքում, պիտի ընկունել, որ Դաշնակցութիւնը, եթէ առանց քաղաքական նպատակներ հետապնդելու այն պահանջը միայն առաջազրէր, որ բոլոր հայերը պէտք է կենարոնանան տաճկական սահմաններում տաճիկներին ընկենալու նպատակով, ուսւաները տեղի պիտի տային եւ ընդունէին այդ պահանջը: Դաշնակցութիւնը այս պահանջը ընդունելի զարձնելու համար կարող էր սպառնալ հայկական ապատամբութեամբ և հայ զինուորների զասալքութեամբ: Այս սպառնալքները անարժէք

չէին կարող լինել ոռւս պետական մարդոց աչքում, որովհետեւ նրանք գիտէին, որ հայ ժողովուրդը լսում, հաւատում և կատարում է Դաշնակցութեան խօսքը: Այժմ, դէպքերից յետոյ, կարելի է այդ ճակատազբական սիմալը ափսոսալ, քանի որ 200 հազար հայ զինւոր աւելացնելով այդ պատկառելի ուժին, նաև ոռւսական հսկայ օժանդակութիւնները զօրքով, պաշառով և ճարտարարուեստով, բաւական պիտի լինէին մէկ վճռական հարուածով Թուրքիան ջախջախելու:

Այդ ուժի գիտակցութիւնը Դաշնակցութիւնը ունէր. բայց նա խուսափեց նրանից օգտուել, մնալով կաշկանդուած Ընդհանուր Ժողովի որոշումների սահմանների մէջ: Դաշնակցութիւնը գիտէր, որ նրա զոհողութիւններից օգտուողը ուրիշը պիտի լինէր և որ ինքը գործիք պիտի դառնար Խուսաստանի ձեռքին: Դաշնակցութեան հաշիւները ճիշտ էին մինչև 1917 թուրականը, որովհետեւ այժմս պարզ է արդէն, որ ըստ 1916 թուրի պայմանագրութեան, Ֆրանսան եւ Ռուսիան բաժանած էին իրենց մէջ Արեւելեան Նահանգներ՝ առանց մազաշափի իսկ մտածելու հայերի մասին: Յետազայ յեղափոխութիւնները և Ռուսիոյ կիմսական քայլայումը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը չէր նախատեսած ու թերեւս այս միակ պատճառով կարելի լինի ափսոսալ, թէ ինչու Դաշնակցութիւնը յանձն չառաւ գործիք լինել Ռուսիոյ ձեռքին, Թուրքիան ընդմիշտ ջախջախելու համար: Թուրք մտաւորականները, հանդէպ այս կացութեան, կարող են միայն միայն միամիտներ և Արեւելքի ազատութեան մոլեսանդ հաւատացեալներ համարել, ինչպէս և զուր տեղը թուրքի վրայ յոյս գնողներ, բայց բնաւ երեք զաւաճաններ կամ գործիք ուրիշի ձեռքին՝ ընդդէմ Տաճկաստանի:

Երբ այս իրականութիւնը պարզում ես, շատերը իսկոյն յիշեցնում են, — հապա կամաւորական շարժաւմը: Այդ յանկերգը թուրքերը շարունակ հոլովել ու հոլովում են, ապացուցանելու համար թէ ինչու նրանք բնաջնջեցին հայ ժողովուրդը և դատարկեցին Տաճկահայաստանը հայութիւնից: Քանի որ այդ խբութիրը շատերին մտատանջութիւն է պատճառում, արժէ այդ հարցի վրայ ևս մի քիչ կանգ առնել: Ցաւը, կիրքը մէկ կողմ թողած, պիտի խնդրէինք հարցին մօտենալ միանգամայն առարկայօրէն, մանաւանդ որ այժմ բանը բանից անցած լինելով, ոչ ցաւելու և ոչ ալ կրքոտելու կարիք կայ:

Յիշեցի արդէն, որ Ընդհանուր Ժողովը հրահանգում էր հայութեան երկու հատուածներին՝ ուղղամբ-տօրէն կատարել իրենց քաղաքացիական պարտականութիւնները թէ Թուրքիոյ և թէ Ռուսաստանի հանդէպ: Քանի որ այդ արամադրութիւնն ունէր Դաշնակցութեան Գերագոյն Մարմինը, ապա եւ կամաւորսկան շարժումը պէտք է նկատել իրեւ մէկ շեղում այդ սկզբունքից: Բայց այդ շեղումը ըստ արժանույն որակելու համար, պէտք է հասկանալ նրա պատճառները, գրգիչ հանգամանքներն ու չափը, պէտք է ձշտել նաև այն, թէ այդ շարժումը արդիօք մասնակի՞ բնոյթ ունէր, թէ, ընդհանուր:

Սակայն նախ քան կամաւորական շարժման գնանատական տալը և համապատասխան եղրակացութիւնները հանելը, պէտք չէ աչքաթող անել կամաւորական շարժմանց երեք տարբեր ժամանակաշրջանների տարբեր հարաւորութիւնները:

Ա. — Կամաւորական շարժմանց սկզբնաւորութիւնը և նրանց տեւողութիւնը մինչեւ թրքահայ Ժողովուրդի կոտորածներն ու տարագրութիւնները:

Բ. — Կամաւորական շարժումները սկսուելուց
մինչեւ էրզրումի գրաւումը :

Գ. — Էրզրումի գրաւումից յետոյ մինչեւ ոռւ-
սական յեղացրջումը :

Նրանք, որոնք կը ցանկանան թրքահայ ժողո-
վուրդի կոտորածների և տեղահանութիւնների կարե-
ւորագոյն պատճառը որոնել կամաւորական շարժում-
ների մէջ, նրանք անշուշտ քննադատութեան նիւթ
պիտի դարձնեն կամաւորական շարժմանց սկզբնաւո-
րութիւնը և նրանց գոյութիւնը մինչեւ կոտորածները :
Համատարած տարագրութիւնների և հայութեան բնա-
շնչման ընթացքում կամաւորական գնդերի ի յայտ բե-
րած գործունէութիւնը դատապարտելի կարող է չհա-
մարունը, ուստի կանգ առնենք այդ շարժումների
ոկզբնական լրջանի վրայ. իսկ կոտորածներից յետոյ
այդ շարժումների ուղղութիւնը չօշափենք այնչափով,
որչափով նրանք կը լուսաբանեն մեզ հետաքրքրող
հարցերը :

Կամաւորական շարժումների նախաձեռնութիւնը,
պատիւն ու փառքը չի պատկանում հայ կեանքի մէջ
գործող կուսակցութիւններից և ոչ մէկին, նա չի
պատկանում նաև Դաշնակցութեան : Միանգամայն
ի զուր այս կամ այն հասարակական մարմիններն ու
դաշնակցականներից ոմանք, գերագնահատելով այդ
շարժման արժեքը, փորձում են գափնեայ կարծուած
պատկը գնել իր կամ իր կուսակցութեան գլխին :

Այդ շարժումների նախաձեռնութիւնը պատկա-
նում է մի քանի մութ մարդկանց և գլխաւորապէս X.
դերասանին, որոնք ոչ մի կուսակցութեան ու հոսան-
քի չեն պատկանած և որոնք շատ հեռու եղած են
մասնաւորաբար Հ. Յ. Դաշնակցութիւնից :

Եւ ուշագրաւն այն է, որ հենց այն ժամանակ,

երբ դաշնակցականները տառապում էին ոռւսական
բանտերում և երբ էրզրումի Ընդհանուր Ժողովը իր
փակման արարողութիւններն էր կատարում, այդ նոյն
ժամանակ Թիֆլիսի փողոցներում և Վանքի բակում
ուղղմաշունչ ճառեր էին արտասանում, հրաւիրելով
հայերին զինուորագրուել կամաւորական գնդերի մէջ
և ոռւսական զօրամասերի կողքին գնալ Տաճկահայա-
տանը փրկելու :

Ո՞վեր էին արդեօք այս մարդիկ. նրանք թե-
լադրուած էին Փոխարքայի՛ սենեակներից, թէ ի-
րենց ներքին անկաշառ մղումներն էին գեր կատա-
րողը :

Այս հարցերին դժուար է պատասխանել, որովհե-
տեւ փաստերն ու տուեալները պակասում են առաջմ։

Արձանագրենք սակայն. ճիշտ այն օրերին, երբ
ուստ կառավարութիւնը, զինուորագրելով հայերին,
ուղարկում էր նրանց արեւմտեան ճակատ և մերկա-
ցընում հայերից տաճկական սահմանները, այդ նոյն
օրերին, որոշ անհատներ պղտոր մթնոլորտի մէջ մութ-
նաշնաբաններ էին պտաեցնում և կամաւորներ հաւա-
քում։

Պիտի ընդունել, որ այդ մարդկանց արածը գալիս
էր ոռւս կառավարութեան հաշուեին :

Նախ՝ կամաւորների զինուորագրումը ոչնչով չէր
խանգարում անդրկովկասեան ճակատներից հայերին
արեւմտեան ճակատը փոխաղրելու ծրագիրներին. Երկ-
րորդ՝ կամաւորական շարժումներով տարուելով, հայ
ժողովուրդը զրկուում էր նարաւորութիւնից լրջօրէն
Անդրկովկասում իր ճակատագրի մասին խորհելու. Եր-
րորդ՝ կամաւորական շարժումները առիթ էին դառ-
նում հայկական ուժերը ջլատելու և ճեղքուած ա-
ռաջացնելու ազգային ներքին ճակատի վրայ, որով-

հետեւ Դաշնակցութիւնը վերապահ դիրք ունէր գրաւած դէպի այդ շարժումները և, վերջապէս, թուրքերը, իրենց անհեռատես քաղաքականութեան հետեւանքով, անկարող լինելով կարեւորը անկարեւորից, անլուրջ ձեռնարկը լուրջ ձեռնարկից տարբերելու, տնտեղի պիտի գրգուէին, հալածանքներ սկսէին հայութեան դէմ, լոյեալութիւնից հանէին Դաշնակցութիւնը և, իրենց ուժերի մէկ նկատեի մասը զբաղեցրնելով ներքին ճակատների վրայ, գիւրացնէին ոռուսական զօրքերի արշաւը դէպի թիւրքիոյ խորքերը։

Ոռուսաստանը ձգտում էր մէկ ձեռքով երկու նապաստակ բանել, մի նապատակ, որին նա գրեթէ հասաւ, կամաւորական շարժումներն ունեցան իրենց համակիրները՝ յանձինս այն երիտասարդութեան, որ երկրից զաղթած ու ապաստանած էր Անդրկովկաս. այն հայ ծնողների, որոնց զաւակները, փոխանակ հեռաւոր գերմանական ճակատները քշուելու, պիտի մնային տաճկական սահմանների վրայ և այն մի խումբ մարդկանց, որոնք ինչ ինչ նկատումներով՝ նետուել էին ասպարէզ։ Եւ իրապէս օրը՝ օրին կամաւորական շարժումները ծաւալուեցին ու մի քանի շաբթուայրնաթացքում միմիայն թիւրքիզում մօտ հազար հոգի արձանագրուեցին իրեւ կամաւորներ։

Ահա այսպէս եղաւ կամաւորական շարժման ըսկըզնաւորութիւնը։ Պէտք է ընդունել, որ այդ ձեռնարկը դէմ էր մեր ազգային շահերին և միանդամայն ձեռնտու։ ոռուս կառավարութեան։

Բայց նախ քան վերջնական գնահատական տալը, ճշտենք այն հարցը, թէ այդ շարժումները արդեօք միմիայն հայկական էին թէ նրանք, ընդհակառակը, յատուկ էին և ուրիշ ժողովուրդների։

Անշուշտ ո՛չ վրացիք և ո՛չ էլ թուրքերը չպիտի

կարողանան ժխտել, որ նաև իրենք ունեցել են իրենց ուրոյն կամաւորական գնդերը։

Թէև վրացիք հայերի նման ենթակայ էին Ընդհանուր զօրակոչի, սակայն եւ այնպէս վրացական յատուկ զօրամասեր (կամաւոր) կռւում էին Նազիների գէմ։

Անդրկովկասի թաթարները կրօնով մահմետական էին, իսկ ցեղով՝ թուրանական և ենթակայ չէին ընդհանուր զօրակոչի. սակայն նաև նրանք, Ալիխան Մակինսկիների, Խան Նախիջևանսկիների և այլոց գլխաւորութեամբ կազմակերպւելով՝ կամաւորական յատուկ զօրամասերի մէջ կռւում էին տաճկական զօրքերի գէմ։

Լեռնական մահմետականները, որոնք նոյնական ենթակայ չէին զօրակոչի և որոնց մէջ վազուց ի վեր աշխատում էին համբաւամական զօրծիչները, նրանք նոյնական ունէին իրենց կամաւորական «Դիկայեա Դիւրիզիա»ն (վայրենի զօրամաս), որ զործում էր տաճկների գէմ և որ թւով գերազանցում էր հայկական գնդերը։

Այս օրինակները միմիայն Անդրկովկասից բերելով, ես յանցանք մեղմելու պատճառներ չեմ որոնում և ոչ էլ նպատակ ունեմ ունէ ժողովուրդ իրեւ յանել նկատել։ Եթէ վրացին կամաւոր է տալիս Տաճակաստանի գէմ։ Եթէ աղբբէջանցի թաթարը, զաղթատանցին, լեռնական չըրքեղն ու ինգուշը կամաւորներ են տալիս թուրքիոյ գէմ։ Եթէ հայը կամաւորապէս կռւում է նոյն տաճկի գէմ, այդ գեռ չի նշանակում, թէ բոլոր թաթարները իսլամութեան ու թըրկութեան գէմ են, թէ ամբողջ լեռնականները, վրաքութեան գէմ են, թէ ազգանցիք ու հայերը պատասխանատու են, ցիք, զաղացանցիք ու հայերը պատասխանատու են, իրենց հայրենիքի, կրօնի կամ ազգութեան գաւաճանները հայրենիքի։

ներ են։ Սեւ ակնոցներով զինուած սահմանափակ ուղեղները միայն կարող են այսպիսի դէպքերում այսպիսի հրէշային եղբակացութեան գալ և յայտարարել, թէ այդ ազգերը յանձինս մի քանի գնդերի, ամբողջութեամբ դէմ են թրքութեան և իսլամութեան, ործիք են Ռուսաստանի ձեռքին և այդ պատճառով էլ արժանի են ջարդուելու և սրածուելու։

Փաստերի իրական պատկերը այլ էր սակայն։

Կովկասի բոլոր ժողովուրդները, մէջն ունենալով նաև հայերը, պատերազմի սկիզբին միանգամայն լոյեալ էին դէպի Ռուսաստանը։

Անշուշտ տարրեր կային, որոնք պատրաստ էին առաջին իսկ արկածախնդրական կոչին արձագանգ տալու և յատուկ գնդերի մէջ արշաւելու դէպի Տաճկաստան։

Կային նաև այնպիսի խմբեր, որոնք, ինչպէս ասացինք, հալածուած էին Թուրքիայից և այդ իսկ պատճառով յատուկ ատելութիւն ունէին դէպի տաճիկն ու Տաճկաստան։

Ահա այս տարրերից էլ կազմուեցին կամաւորական գնդերը։

Ռուսաստանը կարիք ունէր փոքրիկ և անվնաս կամաւորական խմբերի։

Ռուսաստանը պիտի օգտուէր ոչ թէ այդ չնչին ուժերի զինական կարողութիւններից, այլ պիտի օգտագործէր առաւելապէս նրանց բարոյական նշանակութիւնը։ Շարունակ այդ խմբերի անունից խօսելով, նա պիտի մթագնէր անզրկովկամեան ժողովրդների մտքերի յստակատեսութիւնը, և որ ամէնից էականն է, շփոթութեան պիտի մատնէր Թուրք դեկափար լըս ջանակները, և նրանց կենտրոնացած ուշադրութիւնը ցլ'էր ամէն ուղղութեամբ։

Լեռնականների Դիկայլա Դիվիզիայով (վայրենի քօրամաս) նա պիտի թուլացնէր այդ նոյն ժողովրդի միութիւնը, միաժամանակ հարուածելով համիսլամութեան գաղափարները։ Թաթարական կամաւորական գնդերով նա պիտի քանդէր Աղաւեմսերի ծրագիրը, միաժամանակ ամլութեան գատապահութելով համաթուրանական քարոզչութիւնը։ Վրացական գնդերով վրաց ժողովրդի ազատագրական պայքարի թափը պիտի իջեցնէր, զուգնթացաբար անարժէք դարձնելով նախապէս կնքուած թուրքօվրացական գաղտնի դաշնագիրը։ իսկ հայ կամաւորական գնդերով նա պիտի գրգռէր Թուրք տարրը հայութեան դէմ, հանէր Դաշնակցութիւնը լոյեալութիւնից և ուսւ տաճկական ճակատներին զուգնթաց ստեղծէր ներքին հայ-տաճկական ճակատներ։

Ահա այս զրգապատճառները անհրաժեշտ էին դարձնում— անշուշտ ուսւական շահերի տեսակէտից—նման գնդերի կազմակերպումը։

Անուրանալի է, որ Ռուսաստանը կամաւորական շարժման համախոններ պիտի գտնէր անդրկովկասեան բոլոր ժողովուրդների մէջ, որովհետեւ ստուգուած փաստ է, որ պատմական նման բոլոր դէպքերում, ժողովուրդները միշտ և ամէն ժամանակ ունեցել են մի փոքրամասնութիւն։ Ենթակայ դրսի ազգեցութիւններին։ Երբ Թուրք զեկավարները, այս մասնակի երեսներին արժէքը գերագնահատելով, կորցրած իրենց լոյթների արժէքը գերագնահատելով, մի քանի փոքրաթիւ խմբերի հաւասարակշռութիւնը, մի քանի փոքրաթիւ խմբերի համար պատասխանատու են համարում ամբողջ ժողովուրդներ և հալածանքներ սկսում այդ նոյն ժողովուրդների դէմ, այստեղից պարզ չէ՞ր միթէ, թէ նման քաղաքականութիւնից ո՞վ պիտի լինէր օգտուողը եւ ո՞վ վնասուողը։ Բնական է, որ օգտուողը միմիայն

ոռւս կառավարութիւնը պիտի լինէր, որովհետեւ նա այդպիսով երկպառակութիւն էր սերմանում բոլոր ժողովրդների մէջ Տաճկաստանի դէմ, թուլացնելով, այսպիսով, թրքական բանակների ֆիզիքական և բարոյական ուժը:

Վերադառնանք բուն խնդրին:

Ի՞նչպէս ասացի, հայ կամաւորական շարժումը իր սկզբնական շրջանում թերեւս անխուսափելի, սակայն մի չծրագրուած և պատահական դէպք էր, որ քաղաքակիրթ երկրներում և իմաստուն առաջնորդների համար պիտի նկատուէր իբրեւ մի չնչին և արժէքաղուրկ երեւոյթ: Ատայն Արեւելքու դժբաղդութիւն ունի յանձնի փոքրացնելու միծ արժէքները և, ընդհակառակը, փոքրիկ արժէքները ծաղկեցնելու և նրանց մեծութիւն տալու: Այսպէս էլ եղաւ հայ կամաւորական շարժման հետ:

Թէեւ թուրք զեկավար դէմքերին, Ֆէվզի փաշայից սկսած, յայտնի էր, որ զօքակոչի ենթարկուած Հայերից մօտ 200,000 հոգի ուղարկուած են գերմանական ճակատները, թէեւ նրանք շատ լաւ գիտէին, որ 300,000—400,000 սուբնների հասնող ուռսական Անդրկովկասեան բանակի կողքին կան ընդամէնը 2000—3000 հայ կամաւորներ, բայց և այնպէս, մինչեւ այսօր էլ, նրանք ամբողջ հայ ժողովուրդը պատասխանատու են համարում այդ շարժումների համար և հայկական կոտորածները նկատում իբրև պարզ՝ հետեւանք այդ պատահական ու մասնակի ձեռնարկի:

Խնդրի ամէնից ցաւոտ կողմն այն է, որ թուրք զեկավար դէմքերից և ոչ մէկը այդ շարժումների իսկական արժէքը ճշտորոշելու համար երբէ՛ք հարց չը տուաւ իրեն՝ թէ ի՞նչ էր մտածում Հ. Յ. Դաշնակցութիւնը: Զէ՛ որ անաշառ վերլուծողների համար ա-

մէնից էականը այս հարցը պիտի լինէր: Զէ՛ որ հայ ժողովուրդի բռնած դիրքի արժէքաւորումը կախում ունէր այս հարցի պատասխանից, և ոչ թէ այն անպատասխանատու միտինգներից, որ տեղի էին ունենում թիֆլիզի փողոցներում:

Տեսնենք, ուրեմն, թէ հայ քաղաքական մեծ կազմակերպութիւնը, որի կամ քին և որոշումներին համապակ զէպքեր էին կատարուում հայ կեանքում, կառակ դէպքեր էին կատարուում հայ կեանքում, ի՞նչ դիրք ունէր բռնած հանդէպ այդ շարժումների:

Նա, նախ՝ յայտնում է թուրք լիազօրներին, որ այդպիսի ժամանակ շարժումները անխուսափելի են և դրանք չպէտք է վերագրել ո՛չ կուսակցութիւններին եւ ո՛չ էլ հայ ժողովուրդին, աւելացնելով միաժամանակ, որ Դաշնակցութիւնը որոշել է պայքարել այդ շարժումների դէմ: Այս մասին գիտէին էրզը մոււմ, Պօլսում, Վանում և Մուշում գտնուող իթթիւատի և թուրք կառավարութեան ներկայացուցիչները:

Սկզբներում, էրզը մի ներկայացուցիչ Հիլմին, Վանի ներկայացուցիչ Թահսիմ կուսակալը և Մուշի ներկայացուցիչ Սերվէթ միւթասարը Փը, ըստ երեւոյթին, տեսնում էին, որ այդ շարժումները ժողովրդական բնոյթ չունեն և պարզ մասնակի երեւոյթներ են:

Եւ այդ պատճառով էլ նրանք պահանջում էին, որ Դաշնակցութիւնը, հաւատարիմ մնալով իր որոշումներին, պայքարի այդ շարժումների դէմ, և եթէ անսերող է նրանց առաջն առնել, գոնէ այնպէս անի, կարող է նրանց առաջն առնել, գոնէ այնպէս անի, որ նրանք չտարածուեն ու չկընեն համաժողովրդական բնոյթ:

Պիտի խոստովանել, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը և ի մասնաւորի նրա թուրքահայ մարմինները ամէն դանք ի գործ դրին արգելելու և կամ սահմանափակեցութիւնը, լու համար այդ շարժումները:

Դեռ էրզրումի ժողովի նիստերը չփակուած, կառավարութեան գիտութեամբ և թոյլտուութեամբ, իւրաք ետեւից Անդրկովկաս էին ուղարկուում կուսակցութեան երկու անդամները՝ յայտարարելու կուսակցութեան կամքը և ջանալու՝ արգելել սկսուած շարժումը, իսկ եթէ այդ անհնար է, տալու նրանց որոշուղղութիւն:

Ի վերջոյ էրզրումից պետական փոստով ճանապարհ է ընկնում Դաշնակցութեան իսկական զեկավարը և նրա ոգին՝ Ռուստոմը՝ որը, անցնելով Պոլիս, այնտեղ զեկուցում է Ըսդհ. ժողովի որոշումների մասին եւ կառավարութեան թոյլտուութեամբ մեկնում է արտասահման՝ իր ազգեցութիւնը գործազրելու նաև այնտեղ, Նոյն նկատումներով Վանի նահանգից Արամը և տեղի կենարոնական Կոմիտէն ուղարկում են Քաջազնուուն, իսկ նրա ետեւից անմիջապէս նամակներ են ուղարկում Գալուստ Ալոյեանին՝ կտրուկ կերպով հրահնգելով նրան, որ այդ շարժումների առաջն առնի:

Եւ այս բոլորը կատարուում էր Ծնկիւրիի այժմուայ գործիչներից Թահասիմ ըէյի գիտութեամբ։ Ու թերեւս այս նամակների ու հրահանգների իսկութիւնը թադինելու համար է, որ իթթիհատի ներկայացուցիչ Հիլմին սպանել տուեց Գալուստ Ալոյեանին, որի մօտ գտնուում էին այս բոլոր զրութիւնները։ Այս նամակներով պիտի ճշտուէին իմ բոլոր ասածները, պիտի պարզուէր, որ Վանը ճիգ էր թափում այդ շարժումների առաջն առնել, նոյնը և Մուշը։

Իմ ձեւքով գրուած նամակներից մէկը, որ նամակատարի ձերբակալման հետեւանքով անցել է Թահասին ըէյի ձեռքք, մեծ գոհունակութիւնն է պատճառել նրան, որովհետեւ նա տիսել է, որ մենք, իսկապէս որոշել ենք լոյեալ մնալ եւ հակառակ ենք կամաւրական շարժման։

Հ. Յ. Դաշնակցութիւնը, ինչպէս տեսանք, դէմ էր կամաւրական շարժման։

Թուրք զեկավարները եթէ պետական հասունութիւն ունենային, գոհ պիտի մային ստեղծուած կացութիւնից և բաւարարուէին նրանով, որ կամաւրական շարժումը համաժողովրդական բնոյթ չի ստանում, Այս բոլորից յետոյ պատասխանատու ճանաչել հայ ժողովուրդը և մասնաւորաբար նրա թրքահայ հատուածը և Դաշնակցութիւնը, այդ միեւնոյնն էթէ՝ համաթուրանական գաղափարներով տարուած Բէհաէտտին Շաքիրներին, էնվէրներին և Ազահեներին պատասխանատու թուել այն բանի համար, որ չէրգները կամաւրական «Վայրենի Զօրամաս» (Դիկայնականից Դիվիզիա) են կազմակերպել Տաճկաստանի դէմ և կամ թաթարները Ալի Խան Մակինսկու գլխաւորութեամբ՝ թաթարական գնդեր։

Այս, ի հարկէ, տիմարութիւն կը լինէր, անիմաստ և յիմարական մի քայլ։

Անկարելի է Ազահեին պատասխանատու ճանաչել ցեղակից Ալի Խանի արարքի համար, կամ Ռաուֆ Հաշիւ պահանջել՝ կրօնակից լեռնականների ձեռնարկների համար։

Այդպէս վարուեցին թուրքերը, սպանելով, ի միջի այլոց, Գալուստ Ալոյեանին թայապէտում, իսկ իշխանին՝ Վանում։

Եզրափակենք մեր ասածները։

1.— Հայ կամաւրական շարժումը, ինչպէս եւ Անդրկովկասի կամաւրական շարժումները հանդէպ թուրքից, եղել են չծրագրուած, իրենց սկզբնական շրջանում կրել են մասնակի, պատահական բնոյթ։

2.— Ո՞չ հայերը և ո՞չ էլ Անդրկովկասի միւս ժողովուրդները, այդ շարժումների միջոցով ո՞չ Անդր-

Կովկասում և ո՞չ էլ Անդրկովկասից դուրս, թուրքիոյ մէջ, չեն հետապնդել ո՞չ քաղաքական եւ ո՞չ էլ վըրէժխնդրական նպատակներ.

3.— Այդ շարժումները հրահրել է ռուս կառավարութիւնը, ցանկանալով, մէկ կողմից՝ Անդրկովկասեան ժողովուրդների ուշադրութիւնը կենտրոնացընել իրենց անմիջական շահերի հետ կապ չունեցող խնդիրների վրայ, իսկ, միւս կողմից՝ դէպի սխալներ և յիմարութիւններ մղել թուրք զեկավար շրջանակները:

4.— Հայ կամաւորական շարժման դէմ է եղել— նրա սկզբնական շրջանում— Դաշնակցութիւնը և նա ամէն միջոց ձեռք է առել այդ շարժումը կասեցնելու և անվտանգ դարձնելու. Դաշնակցութեանը յաջողուել-է այդ շարժումները սկզբնական շրջանում սահմանափակել և նրանց չտալ համաժողովրդական բնոյթ:

5.— Հայ կամաւորների սկզբնական քայլերի համար, իրեւ մէկ մասնակի երեւոյթի, թուրք կառավարութիւնը չէր կարող անվստահութեամբ վերաբերուել դէպի հայ ժողովուրդը և ի մասնաւորի դէպի նրա թրքահայ հատուածը և թրքահայ Դաշնակցութիւնը:

6.— Այդ շարժումները պատրուակ էին միայն տաճիկ զեկավար շրջանակների ձեռքում իրագործելու համար, իր 1912—1913 թուականներին, նախապէս ծրագրուած հայկական կոտորածները:

Ահա այսպէս էր կամաւորական շարժումը իր սկզբնական շրջանում, սակայն, այսպէս չմնաց նա յետագայում:

Եետագայում փոխուեցին նրա թէ՛ բնոյթը ու թէ՛ ուժն ու թափը:

Երբ հայ ժողովուրդի եւ Դաշնակցութեան հա-

մար վերջնականապէս պարզուեց, որ բնաւ պարապի խօսքեր չեն ջէմալ փաշայի և Թալէաթ բէյլի գեռ 1914 թուի սկզբներին ասած այն խօսքերը թէ՛ Հայկական Հարցի լուծման հիմնական միջոցը հայերի բընաջնջումն է. երբ պարզուեց, որ 1912—1913 թուականներին նախագծուած կոտորածները ցանկանում էին պատերազմների աղմուկների մէջ գործադրել. երբ լուրեր հասան մասնակի սպաննութիւնների և զօրակոչի ենթարկուած ու թիկունք տարուած հայ զինուորների կոտորածի մասին. երբ պատահականորէն մահների կոտորածի մասին. կոտորածի գալիս ու ուանից ազատուած հատ ու կենտ մարդիկ գալիս ու պատմում էին թիկունքում տեղի ունեցող աւարառութիւնների ու ջարգերի մասին,—ահա այդ ժամանակ է, որ կամաւորական շարժումը առնում է համազգային բնոյթ և Դաշնակցութիւնը, թէեւ ուշացած, ակամայ վճռում է իր ձեռքն առնել շարժումների զեկը:

Այս վայրկեանից սակայն կամաւորական շարժումը ձիշտ է որ ճակատագրական նշանակութիւն է ստանում պատերազմի ելքի տեսակէտով:

Կամաւորական շարժումները, ինչպէս ժողովուրդն է ասում, ցանեցին թուրք զեկավարները և նրա արդիւնքներն էլ իրենք պէտք է հնաէին:

Նրանք իրենցից վանեցին հայ ժողովուրդը, խաբեցին Դաշնակցութիւնը, դաւեցին հայութեան դէմ, ամէն տեղ հուր և սուր տարածեցին, իսկ հետեւանքները, Ահմէտ ձէվտէթների խոստվանութեամբ իսկ, եղան աւերակներ և միայն աւերակներ:

Եւ այդ բոլորը յանուն մէկ գաֆան ծրագրի, այն է Հայկական Հարցը լուծել, հայերին բնաջնջելով:

Այս ծրագրի նպատակայարմարութեան մասին— թուրք պետականութեան շահերի տեսակէտից— մենք պիտի խօսենք յետագային. այստեղ եւ այս—

առայժմ մենք արձանադրեցինք այն փաստը միայն, որ կամաւորական շարժումները պարզ, անմիջական և բնական հետեւանքն էին հայկական կոտորածների եւ ոչ թէ հակառակը:

Կամաւորական շարժումները կոտորածների պատճառ չէին կարող լինել, որովհետեւ ջարդերը ծրագրուած էին և գործադրուում էին մինչեւ այդ շարժումները :

Սի քանի խօսք էլ ասենք կամտւորական շարժ-
ման վախճանի մասին։ Այդպիսով աւելի ևս պարզած
պիտի լինենք այն ինքնասապան քաղաքականութիւնը,
որ վարում էին թուրք վարիչնոր։

Այդ անհրաժեշտ է ինչպէս թուրքերին, այնպէս և հայերին, ըմբռնելու համար այն գաւաղիր նպաստակները, որ հետապնդում էր Թուսաստանը Մերձաւոր Արեւելքի մէջ:

1916 թւին, երբ Թիւրքիոյ մէջ հայկական կոտառածները և տեղահանութիւնները վերջացած էին, երբ Ֆրանսայի և Դաշնակիցների հետ Ռուսիան կնքած էր իր այն համաձայնութիւնը, ըստ որի անվերապահօքն իրեն պիտի պատկանէին Տրապիզոնի, Վանի, Երզրումի եւ Բիթլիսի նահանգները, երբ ոռուս յաղթական զօրքերը ձեռք առած Փոքր Ասիոյ բանալին՝ Երզրումի բերդը՝ իրենց զրօշակը ծածանեցնում էին հայկական վիլայէթների վրայ, երբ նոյն Ռուսաստանը, տիրացած Տաւրոսեան լեռնաշղթային, իր հայեցքը յառել էր գէպի հարաւ, զէպի Միջերկրականի ջրերը, ցանկանալով օր առաջ իր իրաւունքները, ըստ պայմանների, պարտադրել թէ՛ թուրքերին, թէ՛ ֆրանսացիներին եւ թէ՛ անգլիացիներին, —ահա այդ թուականնին Փոքր Ասիոյ զրաւած հողամասները իրենցից ներկայացնում էին աւերակներով ծածկուած մի

հակայ գերեզմանոց, որ հաւասարապէս անմարդաբնակ էր դարձած եւ հայի, եւ քրտի եւ թուրքի համար։

Այդ թուականին է . որ ռուս կառավարութիւնը
յղանում է Եփրատեան կողակութեան յայտնի ծրա-
գիրը , ձգտելով միաժամանակ ոչնչացնել հայ կամա-
ւորական գնդերը :

Արդեօք սա մի պարզ պատահական գուգաղիպութիւնն էր, թէ սա բնական հետեւանք էր Ռուսիոց որդեգրած քաղաքականութեան և ստեղծուած պայմանների :

Ե հարկէ, այս վերջինն էր:

Նրան մտահոգող մի խնդիր ևս կար և այդ—Հայ-
կական Հարցն էր :

Հայութիւնը, որ քաղաքականապէս հասունցած և
ազգային ինքնազիտակցութեան հասած մի ժողովուրդ
էր, սպաստաւոր պայմաններում կարող էր խոչընդու-
ներ յարռցանել ուսւական առաջխաղացութեան առ-
ջեւ և այդ պատճառով անհրաժեշտ էր Հայստան ու-
նենալ, սակայն առանց հայերի: Իսկ այս ծրագիրը
անյարմար էր, որ Ռուսաստանն ինքն անմիջականո-
րէն գործադրէր. ուստինա իրադործեց այդ՝ իթթիւստի-
ձեռքով:

Ռազմեկը գիտակցօրէն խեղաթիւրում է փաստերը յայտաբարելով. թէ թրքահայերի բնաջնջումը պետ-

կան անհրաժեշտութիւն էր թուրքիոյ համար : Հայ-
կական կոտորածները պետական անհրաժեշտութիւն
էին Ռուսաստանի համար, ի վեաս թուրքերի և հայե-
րի : Այս պատճառով է, որ գեռ անթաղ հայ, թուրք
և քիւրդ դիակների վրայ Եփրատեան կողակութեան
ծրագիրներն էին որոճում, յար եւ նման այն կողա-
կութեանց, որ հիմնուեցին ափխազ, լեզզի և չերքէղ
ժողովուրդների դիակների վրայ՝ Տերեկում, Կուբա-
նում և Սեւ_Ծովեան նահանգում:

1916թուին, իր աւանդական ծրագիրների խոչընական մասը իրագործած լինելով, Ռուսաստանը իրեն զգում էր ուժեղ և հաստատուն հարաւային ճակատների վրայ և ձգում էր իրագործել այդ ծրագրների նաև այն մասը, որ վերաբերում էր Հայկական Հարցին։ Ճիշտ այս նկատումով, պատերազմի վախճանին, նա ցըւեց հայկական կամաւորական գնդերը, որ այդ շրջանին իրենցից չօշափելի ուժ էին ներկայացնում։ Այս պետական անհրաժեշտութիւնն էր, իսկ այսպիսի անհրաժեշտութեան առջեւ անարժէք էին ամէն տեսակի բարյական հասկացողութիւններ ու պարտաւորութիւններ։

Եփրատեան կողակութեան ծրագիրը հապճեպօրէն
առաջ էր քչում նաև այն պատճառով, որ թէ՛ Դաշ-
նակցութիւնը և թէ՛ հայ ժողովուրդը այդ օրերին դէմ
էին հայկական հողամասերի կցման Ռուսաստանին, մի
հանգամանք, որի դէմ Ռուսաստանը փորձում էր օր
առաջ զինուել:

Ով որ հասկանալու չլինի այս ծրագիրը, Խառնք
բէյերը, այնուամենայնիւ, պէտք է որ հասկանան :
Նրանց պապերը, նոյն կողակային ծրագրների հետեւ-
անքով, մօռհաճիբների վիճակին դատապարառուեցին .
Կուլ գնացին Շիրվանն ու Շաքին, պարսկական մի

շարք նահանգներ, անկախ վրաստանը և Թրքական-
հոգամասերը:

Եփրատեան կօզակութեան ծբագիրը պիտի գար
ամբողջացնելու Ռուսիոյ դարաւոր երազները, կլա-
նելով Սրեւելքն ու Սրեւմուտքը մինչեւ էնկիւրի, ուր
թուրք ցնորատեսների մէկ ամբողջ խումբ, ռուսական
քանցի մէջ առնուած, համաթուրանականութեան ե-
րազներն էր որոճում:

թողնենք այս չափազանց ուշագրաւ փաստերի լի-
շատակութիւնը, որ մէկ օր, թերեւս, նիւթ ծառա-
յեն թուրք վարիչների համար, իրենց քաղաքական
վարկագիծը ճշտելու, և անցնենք բուն խնդրին. այ-
սինքն, սորից խօսենք այն մեղադրանքների մասին,
որոնք ուղղուած են հայութեան դէմ:

Մենք աեսանք, թէ ինչ որոշումներ էր տուել էր-
զըրումի Ընդհանուր Ժողովը, ծանօթացանք նաև Ան-
դըրկովկասիհայութեան Ծնթացքի հետ, այժմ տեսնենք,
թէ ի՞նչ զիբք ունէր բռնած Թրքակայ ժողովուրդը:

Տաճկական կայսրութեան մէջ, մեծ պատերազմը
բովանդակ ընթացքում, և ո՞չ մէկ ժողովուրդ չէ ե-
ղած այնքան ուղղամիտու ու պարտաճանաչ իր քաղա-
քացիան պարտականութիւնների կատարման մէջ
հանդէոլ թուրք կառավարութեան, որքան թրքահայ
ժողովուրդն էր: Բայց և ո՞չ մէկ ժողովուրդ այնքան
չէ մեղադրուած ու հալածուած, որքան թրքահայու-
թիւնը: Ընդհանրապէս ցանկութիւն կայ համոզում
դոյացնել տարու, գուրսն ու ներսը, որ հայութիւնը
տուժել ու հալածուել է, որովհետեւ անլոյնեալ, ա-
պստամբ և գաւաճան զիրքի մէջ է եղել հանդէպ թուր-
քիոյ, սակայն փաստն այն է, որ իրականութեան մէջ
եղել է բոլորովին հակառակը: Ահա նա՛կ այսեղ է
հարցի ողբերգութիւնը, ահա նա՛կ այս պատճառվ է:

որ հայ ժողովուրդը իր աղէտի ցաւը ապրում է կըրկնակի ուժգնութեամբ։ Իմ յայտարարութիւնները ապացուցանելու համար պէտք չկայ յիշատակելու այն բազմաթիւ հայ անհատների հաւատարմական ծառայութիւնները, հերոսութիւններն ու անձնազոհութիւնները, որ կատարուել են յօդուտ թրքական բանակի։ Նաև հակառակ միտքը ապացուցելու համար անիմաստ է յիշատակել այն մասնակի գէպքերը, որ մի խումբ անհատների կողմից կատարուել են յօդուտ ուստական բանակի։

Պատմական արժէք ունեցող անցքերը գնահատելիս պէտք է մի կողմ թողնել մասնակի երեւոյթները և խոսել ընդհանուր պատճառների մասին։

Այսպէս, օրինակ, երբ Արմէն-Գարօին մեղադրում են այն բանի մէջ, որ նա, իր նահատակուող ժողովուրդին օգնութեան հասնելու համար, կամաւորական գնդերի գլուխն անցած մտել է Թուրքիա, ապա այդ նոյն մարդկանց պէտք է յիշեցնել, որ նոյն Գարօն եղբայր Վահան Փաստրմանեանը, ճիշտ այդ նոյն օրերին, իբրև Օսմանեան բանակի սպայ, Քէօփրի-Քէօյի տակը սուլինամարտով խլում էր ուստական խրամատները, պատռում նրանց ճակատը, յաղթութիւն բերում թուրքերին, արժանանալով զինուրբական շքանշանի բարձրագոյն իշխանութեան կողմից։ Այսպիսի մասնակի գէպքերի թիւը շատ է, բայց նրանք բոլորն ել անարժէք են որեւէ ժողովուրդի քաղաքական վարկագիծը ճշտելու և գնահատելու տեսակէտից։

Ասացինք, որ մէկ որ եւ է ժողովուրդի ընդգրկած քաղաքականութեան մասին դատելու համար, պէտք չէ՝ դեկավարուել մասնակի գէպքերով։

Այս նոյն մէթուուր պէտք է կիրառել նաև հայ ժողովուրդի նկատմամբ։ Օրինակ, պէտք է վերցնել

հայ կրօնական հիմնարկութիւնները, որ ահագին կը և աղղեցութիւն ունեն հայ կեանքի մէջ, պէտք է վերցնել քաղաքական կուսակցութիւնները, որ զեկավարել են հայ ժողովրդական զանգուածները, պէտք է վերցնել ի մասնաւորի Հ. Յ. Դաշնակցութիւնը և նրա կոմիտէնները, որ տարածուած էին Թուրքիոյ բոլոր անկիւններում, և ահա այս կազմակերպութիւնների և հասարակական հոսանքների կեանքից ու գործունէութիւնից փաստեր պէտք է բերել՝ մեղադրանքները հիմնաւորելու հիմար, մի բան, որ, դժբախտաբար, չի կատարուում։

Եղածը մեղադրական բամբասանքներ են միայն և ուրիշ ոչինչ։

Այդ հոսանքների և կազմակերպութեանց, առաջնորդների և հետեւորդների առնուազն իննառևն տոկոսը, առանց դատի ու դատաստանի, նահատակուել են, երբեւ թուրքիոյ դաւաճաններ։ Գոնէ ասուէ՞ր նրանց յանցանքը, գոնէ դատուէի՞ն նահատակուելուց առաջ։

Այսպէս չէ եղել, որովհետեւ նրանց միակ մեղաք— հայ լինելն էր։ Էստ իթթիհատի և կառավարութեան որոշմանց, հայութիւնը պէ՛տք է սրածուէր։

Սակայն նրանց աշխատանքը կատարենք մենք, փորձենք մեղադրանքները ինքներս ճշտել։

Տեսանք, թէ ինչ որոշումներ էր տուած Հ. Յ. Դաշնակցութիւնը իր ութերորդ Ընդհանուր ժողովում՝ պատերազմի և թուրքիոյ մասին։ Այժմ տեսնենք, թէ Դաշնակցութիւնը թուրքիոյ մէջ հաւատարիմ մնաց արդեօք իր տուած որոշումներին, թէ, ընդհակառակը, որոշումները մէկ կողմ թողած՝ ընթացաւ բոլորովին ուղղներով, պատճառ դառնալով հայկական եղեռնին։

Սկսենք Պօլսից։

Անշուշտ իթթիհատի և թուրք կառավարութեան անդամները պիտի ընդունեն, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը, 1914—1915 թուականներին, Պոլսոյ մէջ թէ՛ բարոյական մեծ հմայք ունէր և թէ՛ մարտական ուժ։ Նրանք ասում էին միաժամանակ, որ Դաշնակցութիւնը Պոլսոյ մէջ ունի խոչոր զինապահուաներ։ չէին ժխտում նոյնպէս, որ հայ մեծ քաղաքական կազմակերպութեան շարքերում քաղմաթիւ անձնադոհ մարդիկ կան, որոնք սովոր էին մեռնելով՝ մեռցնել։

Այս ամէնը շատ լաւ գիտեն իթթիհատի և էն-կիւրիի այն գործիչները, որոնք 1909 թուի Հայրիտան ռեակտիվնի օրերին, Հ. Յ. Դաշնակցութեան փէշերի տակ մտած՝ իրենց յոյսերի իրականացումը նրա ուժից և հմայքից էին ակնկալում։

1895 թուականներին, երբ Դաշնակցութիւնը գեռ նոր էր սկսել իր գործունէութիւնը Թուրքիայում, երբ նա դեռ չունէր գործող մարդիկ, երբ Տաճկաստանում տիրում էին դժոխային պայմաններ, ահա այդ ժամանակ նա կարողանում էր կազմակերպել Բանկ Օտօմանի ցոյցը, կարողանում էր ուղած մարդկանց գետին գլորել և նոյնիսկ ավատամբութիւններ առաջացնել։

Ի՞նչ էր պատճառը, որ այդ նոյն կուսակցութիւնը այդպէս չվարուեց նաեւ պատերազմի ընթացքում։ Եթէ ապատամբութիւնը գտուար էր և վտանգաւոր, միթէ դժուա՞ր էր մատի վրայ համրուող թուրք քաղաքական ղեկավարներին ահաբեկման ենթարկել։ չէ որ դա շատ հեշտ էր և հնարաւոր Թալէաթը, չնայած իր փաշա դասնալուն, միշտ լինում էր Դաշնակցութեան և նրա ղեկավար անդամների հետ և չէր խուսափում նրանց ժամադրութիւնները յարգել։

Միթէ դժուար էր նրան պատժել։

Այդպիսի քայլեր չառնելու պատճառը մարդկանց

պակասը չէր և ոչ էլ անկարելիութիւնը, այլ միայն է միայն, այն որ Դաշնակցութիւնը չէր ցանկանում այդ ուղղութեամբ գործել։

Նա, որպէս հասունացած կուսակցութիւն, զգալով երկրի և պետութեան նեղ կացութիւնը, աջակցեց պետութեան, հրահանգներ յղելով գաւառները՝ լոյեալ մնալ Թուրքիոյ հանդէպ և իրեւ ուղղամիտ ժողովուրդ՝ իր քաղաքացիական պարտականութիւնները կատարել։ Վարդպէսի (Օսմաննեան պարլամէնտի երեսփոխան) հետ թալէաթ փաշան օգտագործում էր Դաշնակցութեան լոյեալ դիրքը, շարունակ հեռագիրներ ուղարկելով Վան, Մուշ և այլուր, յիշեցնելով։ որ ժողովուրդը պէտք է գիտակցի իր քաղաքացիական պարտականութիւնը, խուսափի ամէն տեսուկ թիւրիմացութիւններից և համբերութիւն ունենայ դառնութիւնները կրելու անմոռունչ։

Մինչ Դաշնակցութիւնը այս դիրքն ունէր բռնած հանդէպ Օսմաննեան կառավարութեան, Թուրքիան գաղտնի ծրագիր էր պատրաստում հայերին բնաջնջելու։ Դեռ աւելին։ Երբ Դաշնակցութիւնը՝ Գերմանիայից և Բուլգարիայից ստացուած սաոյզ ժամաների եւ տուեալների վրայ հիմնուելով եկաւ այն համոզման, որ ինչ զիրք էլ բռնելու լինեն հայերը, միեւնոյն է, ծրագրուած է բնաջնջել հայերին և ամենից առաջ սրբ քաշել մտաւորականներին։ Երբ մի քանի սրացաւ օքաշել մտաւորականներին, իմանալով այդ, նաւ ուղարկեցին Պոլիս, որ Դաշնակցութեան մտաւորականները թողնեն ու հեռանան (անխուսափելի մահուանից ազատուելու համար), այդ մտաւորականները, այնուամենայնիւ, մերժեցին դուրս դալ, և գաշնակցական ղեկավարները այդ դուրս դալ, և գաշնակցական ղեկավարները պարկարար առաջարկութեան հետեւեալ կերպով պատախանեցին։

«Մենք լոյեալ կը մնանք, ամեն ինչ կ'անենք՝ կոտորածների առիթ չը տալու համար, իսկ եթէ հայ ժողովուրդին վիճակուած է ամէն տեղ ողջակէզ լինել, կ'ողջակիզուինք նաև մենք»։

Նաւը երեք օր ապարդիւն սպասելուց յետոյ, հարկադրուած էր ձեռնունայն վերադառնալ։

Հայ յեղափոխական և մշակութային աշխատանքները իր ուսերի վրայ տանող մտաւորականութիւնը հարիւրներով, հազարներով առանց որևէ դիմադրութեան գնում է դէպի մահ, ո՛չ այն պատճառով՝ որ անկարող էր կամ վախենում էր զալիք փորձութեանց դիմագրաւելու, այլ միամիտ հաւատն ունէին՝ թէ անմեղն ու թուրքի անկեղծ բարեկամը չի կարող կոտորուել նոյն թուրքից։ Նրանք հաւատացին և առանց տրաունջի ու տատանման գնացին անմոռունչ մեռնելու, որպէսզի հեռաւոր չափով առիթ չտան կիրքերի բորբոքման և հիմք՝ մտածելու թէ իրենք ապստամբներ են ու դաւագրողներ թիւրք կառավարութեան դէմ։ Նրանք հաւատացին թուրքին և յետոյ միայն, իրերի ու դէպքերի ապագայ ընթացքին պարզուեց, որ չարաշար սխալուել էին։ Այդպէս էր Պօլիսը, որ կեզրոնն էր այն ժամանակուայ հայ քաղաքական մշակութային կեանքի և կուսակցութեանց գործունէութեան։ Կառավարութեան ըստ ամենայնի աջակցելուց, լոյեալութիւնից բացի, ո՛չ մէկ քայլ՝ դաւաճանութեան կամ ապստամբութեան։

Պոլսից յետոյ անցնենք երզումի վիլայէթի դէպքերի վերլուծման, Վիլայէթի հայ ընակչութիւնը անմիջական շփման մէջ էր գտնուում ուռսական զինուրական ուժերի և զօրքի հետ, ամենայն զիւրութեամբ կարող էին դասակել թուրք զինուրական շարքերը, անցնել թշնամու կողմը, լրտեսի կամ թուրք

զօրքի թիկունքում խոռվութիւններ յարուցանել եւ այլն։ այդ շրջանի թուրք զինուրական կամ քաղաքական իշխանութիւնները կարո՞ղ են մատնանշել դէթմի դէպք՝ բացի օտարահպատակ Սուրէնի փախուստը հայազիտից։ Այդ ժամանակի զինուրական ընդհանուր հրամանատար Ֆէվզի փաշան և կուսակալը պիտի վկայեն, որ երզումի վիլայէթի զօրակոչին ամբողջ հայերը ընդառաջ գնացին ամենայն պատրաստակամութեամբ, որ գասալքութեան դէպքերը հայերի մէջ անհամեմատ սակաւ էին, քան թուրքերի ու մանաւանդ քրդերի մէջ, որ բոլոր տեսակի պետական և արտակարգ զինուրական տուրքերը տալիս էին առանց դփուարութեան ու տրտունջի, տանում էին ամէն տեսակ զրկանքներ ու հարստահարութիւններ և անցեալ իրադարձութիւնների գառն փորձից խրատուած։ հրաժարում՝ որեւ է թէկուզ արդարացի ընդվզումից և դիմագրութիւնից։ Ամենահրէշային ստեր յօրինելու կարողութիւնն ունեցող թուրքն անգամ կարող չէ մատնանշել այս ուղղութեամբ մի դէպք, ցոյց տալ դէթմի գիւղ, որ թրքական զօրքի թիկունքում փորձած լինէր խռովութիւն կամ դժուարութիւններ յարուցանել։ Երզումի վիլայէթի հայ ժողովուրդի համար նորութիւն չէր սուսոթրքական պատերազմը։ Վերջին դարի ընթացքին չորրորդ անգամն էր որ նա ականատես էր լինում այդպիսի բազմութեամբ։ Եւ լծուած իր երկրագործական կուլտուրական աշխատանքներին, իր քաղաքացիական բազմազան պարտականութիւնները կատարելու խոր զիտակցութեամբ պատրաստակամ՝ անկեղծօրէն համախմբուել էր թուրք կառավարութեան և կանոնաւոր զօրքերի չուրջ՝ որպէսզի այդու գէթ կանխել կարողանար նոր Շէյս Զալալէտահինների ու բաշիբողուկների քօզաքների փորձու-

թիւնները : Բայց աւաղ... նա միամիտ էր , չափա-
զանցօքէն միամիտ և հաւատացող . և խարուեց՝ չա-
րաչարօրէն խտրուեց ու անմիջօրէն ողջակիզուեց : Նա
չգիտէր թէ ժամանակի կառավարութեան գլուխ կանդ-
նած Թահսին բէյը , որ Վանի նախորդ կուսակալն էր
և այնքան յարգուած հայերից՝ ընդունակ էր այն-
պիսի անսախսընթաց դաւադրութեամբ ու վար-
պետութեամբ մի ամբողջ ժողովուրդ տեղահան անե-
լու և Քիամախսի ձորում խողիսողելու :

Էրզրումի հայ ժողովուրդը չէր կարող ենթադ-
րել , թէ իր վերոյիշեալ՝ հաւատարմութեան , ծառա-
յութիւնների ու աշխատանքների համար պատմու-
թեան ու ժողովուրդների կեանքի մէջ չտեսնուած մի
այնպիսի անողոք վարձաարութեան պիտի արժանա-
նար՝ որպիսին ցուցադրեցին իթթիհատը և նրա կա-
ռավարութիւնը իրենց զիւային ծրագրով : Բացառու-
թիւն չէր կազմում այս տեսակէտից նաև Վանի վի-
լայէթը , որ , որպէս Պարսկաստանի սահմանակից եւ
հայ յեղափոխական ամենաշախքառու կենտրոններից
մէկը՝ ամենից շատ մտահոգութեան առարկայ է եղել
թուրք կառավարութեան համար : Բայց անշուշտ Վա-
նի կուսակալ Թահսին բէյը , որ 1914 թւի վերջերին ,
երբ պատերազմը վաղուց սկսած էր . իրը կուսակալ
էրզրում փոխարքուեց՝ պիտի վկայէ այն անկեղծ ,
անխարդախ գործունէութեան բազմաթիւ փաստերը ,
որ ցուցադրել էին թէ՛ պատերազմէն առաջ և թէ՛
նրա ընթացքին Վանի ժողովուրդն ու նրա հասարա-
կական յեղափոխական կեանքը զեկավարող Հ. Յ.
Թաշնակցութիւնը :

Նա պիտի վկայէ՝ որ Վանի նահանգի ժողովուրդը
և Հ. Յ. Եղել են կատարելապէս լոյեալ կառա-
վարութեան հանդէպ :

Նա չի կարող ժխտել , որ Վանի ժողովրդի ու
յատկապէս Հ. Յ. Թաշնակցութեան զործօն աշակ-
ցութեան և անսահման բարեացակամ վերաբերմունքի
չնորհիւ է . որ նրան յաջողւում էր վարել իր կուսա-
կալական այնքան ծանր և պատախանատու աշխա-
տանքները , Պատերազմից առաջ և մանաւանդ պատե-
րազմի ընթացքին չի եղել որեւէ լուրջ ձեռնարկ , որ
Թահսին բէյը ի կատար ածած լինի առանց Թաշնակ-
ցութեան գործօն աշակցութեան . թէ՛ զօրքի համար
պարէն հաւաքելիս , թէ՛ զօրակոչի հետ կապուած ծանր
հարցերը լուծելիս , թէ՛ դասաւիքների դէմ կոռւելիս ,
թէ՛ կարգ ու կանոն հաստատելիս , թէ՛ պետական ,
զինուորական առուբերը գանձելիս , թէ՛ զինուորա-
կան փոխադրութեանց գործը կազմակերպելիս և թէ՛
խռովարարներին զսպելիս . — Նա միշտ յենուել է Թաշ-
նակցութեան վրայ : Վերջապէս , Թահսին բէյը չի մո-
ռացել , որ վերոյիշեալ աշխատանքները վարելու ըն-
թացքին , Հ. Յ. Թաշնակցութիւնը իր մամուլի և թուու-
ցիկների միջոցով աշակցել է թուրք կառավարորթեան ,
որոնց օրինակներից անշուշտ կառավարութեան զիւա-
նում պահուած կը լինեն և այդ հարցով հետաքրքրուու-
զին կատարելապէս կարող են բաւարարել : Անպայ-
մանօրէն Թահսին բէյը չի մոռացել նաև այն՝ թէ ինչ-
պէս թրափական բանակի ճգնաժամային բովկներին նա
զիմում էր Թաշնակցութեան և ազգային այլ հիմնար-
կութեանց՝ օգնութեան հասնելու զօրքին : Այս կոչե-
րը անարձագանդ չէին մնում և Թաշնակցութեան ու
հասարակական հիմնարկութիւնների անձնազիր աշ-
խատանքով երբեմն մէկ օրուայ մէջ հազարաւոր երի-
տասարդներ զօրաճակատ էին ու զարկւում , գրութիւնը
փրկելու համար , իսկ Թաշնակցութեան զեկավարող
գործիչները , առանձնապէս Արամը , զաւուլ զուռնան

ետեւը ձգած ոգեւորում ու իրահանգում էր ժողովուրդին ճակատ մեկնելու, հարկաւոր աջակցութիւնը տաւ լու կառավարութեան և զինուորական իշխանութեան եւ, վերջապէս, Թահսին բէյը չի կարող մխաել նաեւ այն թէ ինչպէս վերոյիշեալ աշխատանքների և շարունակական կազմակերպուած պրոպականտայի հետեւանքով հազարաւոր հայ երիտասարդներ այնքան անխառն ոգեւորութեամբ գնացին ստուարացնելու տաճկական բանակի թիւը և ընկան ռուս ու արիւնակից հայ զինուորների գնդակներով։ Ո՞չ Թահսին բէյը եւ ո՞չ էլ Վանի հայ ժողովուրդը չեն մոռացել այդ համագործ աշխատանքի, անխառն ոգեւորութեան, ներդաշնակ գործունէութեան գեղեցիկ օրերը։ Այդ օրերին պարսկական ճակատը համարեայ ամբողջապէս հայ ժողովուրդի բարոյական, Փիղիքական ու տնտեսական ուժով էր պաշտպանուում, ի՞նչ պատահեց յանկարծ, որ ապագայի դէպքերն ու իրադարձութիւնները այնպէս գահավիժօրէն այլ ընթացք ստացան և հայ ժողովուրդին ու թուրք պետութիւնը իրարդէմ հանեցին։

Այն ժամանակ, երբ ռուսական զօրքը և կամաւորական գունդերը օր օրի վրայ տաճկական զօրքերի դիրքերը նուաճելով անցել էին Բաշկալէն ու Սարայը, իրենց թնդանօթների ձայնը լսելի գարձնելով Վանում՝ այդ նոյն ժամանակ Վանի ժողովուրդը խաղաղ ու հանգիստ, լարած իր բոլոր ուժերը, կառավարութեան էր օժանդակում։ նա ուրիշ հոգ ու մտահոգութին կարծես չունէր։ Սակայն յետագայում, երբ ռուսական նահանջող զօրքերը քաջուեցին Թաւրիզ, նոյն այդ ժողովուրդը, շրջապատուած Թրքական մեծաքանակ զօրքով, կատարելապէս զրկուած հնարաւորութիւնից՝ ուռւսական զօրքից ու կամաւորական գնդերից որեւէ

օժանդակութիւն ստանալու, կենաց ու մահու մի աննախընթաց կափւ սկսեց թուրք կառավարութեան դէմ, Սակայն միթէ տաճկական կառավարութեան դէմ դաւադրելո՛ւ, ալստամբելու ձգտումն էր պատճառը այդ անհաւասար կոռուկի. ի հարկէ, ոչ Պատճառը ձէվտէթ բէյի ստոր ու զաւադիր քաղաքականութիւնն էր։ Եա զաւաճանութեամբ բանտարկել և սպանել էր տուել իշխանին ու վկամեանին։ Ժողովուրդի ու Դաշնակցութեան համար այլեւս պարզուել էր կառավարութեան և իթթիհատի հայաջնջ հրէշային ծրագիրը։ Անդորր ու խաղաղ ժողովուրդն ու թուրք կառավարութեան այնքան խոչըր ծառայութիւններ մատուցած չ. Յ. Դաշնակցութիւնը՝ զգացին ահաւոր վտանգը և մի սրբազն վճռականութեամբ ինքնապաշտպանութեան զիմեցին։

Թուրք կառավարութեան դաւադրութիւնից պատճականօրէն միայն ազատուած Արամը, որ մինչեւ այդ թմբուկ էր զարնում, բազմատեսակ օժանդակութիւն ցոյց տալիս իշխանութեան, հազարաւոր հայ երիտասարդներ իր շուրջը հաւաքած ոգեւորում ու ուազմազաշտ էր ուղարկում, — անցաւ ժողովուրդի գլուխ և կոփւ յայտարարեց նենդ ու զաւադիր կառավարութեան, Արամը յաջողեց։ ո՞չ ձէվտէթ փաշայի կանոնաւոր զօրքերը եւ ոչ էլ թուրք խուժանը չկարողացան նուաճել, ընկճել Արամի ժողովը զական բանակը և հարկադրուած եղան թողնել թէ՛ Վան քաղաքը, թէ՛ նրա բերդը եւ թէ՛ ամբողջ նահանգը։

Պէտք է ընդունել, որ Արամի ու վասպուրականցիների տարած յաղթանակը ձէվտէթի ու նրա զօրքերի դէմ մի խոչըր հարուած էր թուրքաց կառավարութեան։ Մի կողմից՝ Թրքական զօրքը, պարտե-

Վանի նահանգը, վասպուրականցուն ու Արամին
էր թողնում ռազմական լաւագոյն դիրքերը պարս-
կական ճակատի վրայ։ Եւ իրօք, ձեւտէթի զօրքը
վասպուրականում պարտուելուց յետոյ՝ հարկադրուած
եղաւ մի դժուարին ճամբորդութիւն յանձն առնել եւ
Զըդիրէ ու Բոհատանսուի վրայով քաշուել մինչեւ Բիթ-
լիսի մօտերը։ Ի հարկէ, թուրքերը ամէն կերպ աշխա-
տեցին վասպուրականցու ինքնապաշտպանողական այս
կոիւը ներկայացնել, որպէս ապստամբութիւն ու դա-
ւաճանութիւն թուրք կառավարութեան դէմ՝ կազմա-
կերպուած ոռւսերի զրդումով ու աջակցութեամբ։ Սա-
կայն պետական եւ քաղաքական ամենատարրական
հոտառութիւն ունեցող բարեխիղճ մարզը, մեր վերը
յիշատակած դէպքերի ընթացքին անհրաժեշտօրէն այն
եղրակացութեան պիտի դայ, որ Վասպուրականի ժո-
ղովրդական շարժման միակ պատճառը իմթիհատի և
թուրք կառավարութեան հրէշաւոր, անմտածուած ծը-
րագիրն էր, որ այնքան տմարդի ձեւով ի յայտ բերեց
ձեւտէթը Վանում, խարիտելով ժողովուրդի ու Դաշ-
նակցութեան դէպի թուրք կառավարութիւնը ունեցած
հաւատքը։

Խալիլ փաշան, որ Արամի դէմ կռւողներից մէկն էր եղել՝ 1918 թուին Երեւանում իմ և այլոց ներկայութեամբ ազնիւ գտնուեց խոստովանելու Արամին. որ Վասպուրականի ըմբռատութիւնը և նրա հետեւանքով առաջ եկած մի շարք խոչոր գժուարութիւնները արդիւնք են իրենց տարած սխալ քաղաքականութեան և ձէվտէթ բէյի բարբարոսութեան ու գաւազրութեան:

Ի հարկէ կասկածից գուրս է, որ ժամանակի թուրք
կառավարութեան անհատ գործակալները, ինչպէս նաև
ձեզակիթը, ինքնազլուխ չեն գործում:

Նրանք կատարում էին կենտրոնական կառավա-
րութեան և իթթիհատի հրահանգներն ու որոշումները
և Խալիլ փաշայի մօտիկ ազգական էնվէրի պատուեր-
ները. Մենք ցարդ աշխատեցինք ամենայն սահնու-
թեամբ ու անաշաօրէն վերլուծել համաեւրոպական
պատերազմի նախօրեակին ու նրա ընթացքում տեղի
ունեցած տաճկահայ վիլայէթների ժողովրդական շար-
ժումները և չգտանք որ եւ է դէպք, որ ապացուցէր,
թէ այդ շարժումները դաւաճանութիւն էին թուրք կա-
ռավարութեան դէմ կամ ոռւսների օգտին կազմակեր-
պուած խլրտումներ. Տեսանք թէ ոռւսական սահմա-
սակից նահանգները՝ էրզրումն ու Վանը՝ և հայ մտա-
ւոր քաղաքական կենտրոն Պոլիսը ինչպիսի խանդա-
վառ վերաբերմունք ցոյց տուին կառավարութեան
մինչեւ կոսորածները, ինչպէս լոյեալ մևացին ու ինչ-
պէս իրենց քաղաքացիական պարտքը կատարեցին։
Երբ սահմանակիցնահանգների ժողովուրդն այսպէս էր,
ընական է ու հասկանալի, որ Տաճկաստանի խորն ըն-
կած հայկական նահանգներն ու կենտրոնները՝ Ցիգ-
բանակերտ, Կեսարիա, Գոնիա, Ուրֆա ևայլն՝ չէին
կարող ուրիշ ձգտումներ և մտածումներ ունենալ։

Նոյնիսկ եթէ այդպիսի ճգուռներ ունենային էլ
անհնարին էր որեւ է քայլ առնել, քանի ող նրանց թէ՛
աշխարհագրական գիրքը, թէ՛ հազարդակցութեան մի-
ջոցները և թէ՛ միջնեղային՝ յարաբերութիւններն ու
պայմանները միանգամայն աննպաստ էին, Բայց թուրք
մամուլի և պետական ու հասարակական զանազան
գիրքի ու աստիճանի տէր գործիչների համար դժուար
չէր ահաւոր ստեր յերիւրել՝ շապին-գարահիսարցուն,
ուրֆացուն, կեսարացուն ներկայացնելու համար որ-
պէս ոռւսական, անդիմական գործակալներ, որպէս
թուրք պետութեան դէմ գաւաճանածներ ու ապստամ-

բածներ : Այսպէս ներկայացրին , երբ նրանք միայն եւ միայն ինքնապաշտպանութեան բնազդից մղուած զէնք վերցրին ու կռուով ընկան՝ իրենց հետ գերեզման տաւ ներով նաև իրենց հայրենակից թուրքերին :

Թուրք ականաւոր գործիչներից մէկը՝ Սիւլէյման Նազիֆը՝ բազմից յայտարարել է , թէ ինքը լւաւատեղեակ է Անատօլիայի բոլոր իրադարձութիւններին : Նա՝ անշուշտ նրա հետ նաև ուրիշները՝ պիտի հարցնեն ինձ . ի՞նչ ունիս ասելու Սասնոյ և Մշոյ դաշտերի շարժումների մասին . չէ՞ որ այնտեղ ինքդ առաջին անգամ ըմբոստացար . չէ՞ որ տեղահանութիւնները ու կոտորածները դեռ չսկսած , հայութիւնն ու Դաշնակցութիւնը դեռ լոյեալ՝ գուլք ու կորիւնն էիք , որ 1914 թուի Դեկտեմբերին , Մշոյ Գոմս գիւղում կոտորեցիք թուրք ոստիկաններին և այնուհետեւ , մինչեւ 1915 թուի Դեկտեմբերը , ամրացաք Սասնոյ լեռներում ապրատամբ վիճակի մէջ և թիկունքում զբաղեցրիք մեր մեծաթիւ զօրքերը :

Այս հարցումները չափազանց տեղին են և ժամանակն է , որ իրենց անաչառ պատասխանն ստանան : Այս անհրաժեշտ է թէ Սիւլէյման Նազիֆի ու թուրք պետական քաղաքական գործիչների մեղադրանքների հիմքն ու արժէքը սահմանելու և թէ ժամանակին մօտաւորապէս նոյն պատճառներով ինձ յանդիմանող հայ ազգային մարմիններին ու կուսակցական ընկերներին իրողութիւնները պարզաբանելու տեսակէտից : Այս աշխատանքի մէջ չքմեղ ձեւանալու կամ անձարդարացնելու զգացումը չէ , որ առաջնորդում է ինձ , մի բան , որի կարիքը երբէք չեմ զգացել , այլ հայ ժողովրդի ու թուրք պետութեան իրական փոխարարերութիւնները արձանագրելով՝ ուզում եմ մեր ու թուրքիոյ աղէտափ իսկական պատճառներն ու նրանց հեղինակները մատնանշել :

Թէ՛ ժամանակի ներքին գործոցնախարար Թալէաթ թէյը և թէ՛ կրզրումի և Բիթլիսի կուսակալները շատ լաւ գիտէին , որ Մշոյ , Սասնոյ ժողովուրդը տաճկահայկական վիլայէթների հայերի նման պատերազմի սկզբնական շրջանում եղել է միանգամայն լոյեալ և դիմազրելու կամ դաւագրելու որեւէ փորձ չի արել . ընդհակառակը , ամէն տեսակէտով չափազանց օգտակար է եղել կառավարութիւնը միւս հայկական զուեց , թէ թուրք կառավարութիւնը միւս հայկական շրջանների նման սասունցու ու մշեցու մահն է դաւում սասուցին ու մշեցին չցանկացան անմոռնչ մեռնել , չցանցան իւաբուած որսի նման դիւրութեամբ թակարդ ընկնել ուստի ապակինեցին հայրենի լեռներին և իրենց ինքնապաշտպանութեան կոիւը մղեցին : Այսինքն , Սասնոյ և Մշոյ շրջաններն էլ միւս հայկական շրջաններին նման . հիմնուելով Հ . Յ . Դաշնակցութեան 8-րդ ընդհանուր ժողովի որշումների ու հրահանգների վրայ , վճռել էին ամէն բանով օժանդակել ճգնաժամային գրութեան մէջ գտնուող թուրք կառավարութեան , Եւ իսկապէս . ամենայն ջերմութեամբ նրանք արձագանքեցին զօրակոչին , զինուորագրելոցին ու գնացին ուսւի դէմ կուուելու , պարենաւորման և այլ զինուորական պէտքերի մէջ իրենց լիարուոն մասնակցութիւնը հանդէս բերեցին : Ինչպէս տաճկահայկական միւս վիլայէթներում , այսպէս էլ Սասնոյ և Մշոյ շրջանում , յօգուտ կառավապէս էլ Սասնոյ և Մշոյ շրջանում , յօգուտ կառավարութեան և զինուորական իշխանութեան ձեռնարկած բազմազան աշխատանքներին ողի և ուղղութիւն տրողը Հ . Յ . Դաշնակցութիւնն էր՝ այն միակ քաղաքական կազմակերպուած ուժը , որին լսում ու որի յետեւից ընթանում էր հաւատով ու վստահութեամբ թէ տաճկահայ ժողովուրդը ընդհանրապէս և թէ սասունցին ու մշեցին մասնաւորաբար : Զպէտք է մոռանալ

այն հանգամանքը, որ Սասունն ու Մուշը Դաշնակցութեան ամենից կուտ կազմակերպուած շրջաններն էին, և գուցէ ո՛չ մէկ վայրում նա այնքան եռանդ ու կորով չի թափել, մարդկային ու նիւթական զոհողութիւններ չի ցուցաբերել, որքան Սասունոյ և Մշոյ մէջ։ Այս հանգամանքը քաջ յայտնի էր կառավարութեան, որը ժամանակի Միւթէսարիփ Սէրվէթ բէյի միջոցով քանի՛-քանի անգամներ դիմել է Դաշնակցութեան և խնդրել՝ իրեն օգնութեան հասնելու։ Դաշնակցութիւնը, ելակէտ ունենալով թէ Բ.-ըդ ընդհանուր ժողովների վճիռները և թէ կառավարութեան ըստ ամենայնի օժանդակելու բուռն ցանկութիւնը, եռանդով լծուել էր աշխատանք։

Հաւատում եմ, որ գէթ այս զառն օրերին ո՛չ Սէրվէթ բէյը, ո՛չ Բիթլիսի կուսակալ Մէհմէտը (Թալէաթի ազգական) և ո՛չ էլ ողջ մնացած մշեցիք, ինչպէս, օրինակ, Հաջի Իլիսարը, չեն ժխտի այն փաստը, որ թիկունքային աշխատանքները մինչեւ 1914 թուի գեկտեմբերի վերջերը բացառաբար հայերն էին տառնում իրենց ուսերի վրայ՝ Դաշնակցութեան հրահանգով ու զեկավարութեամբ։ Միայն այս չէր. Դաշնակցութեան գործոն միջամտութեամբ և նրա ականաւոր գործիչների անմիջական զեկավարութեամբ կազմուեցին զանազան յանձնախումբեր՝ ժամանակի պետական զինուորական կարիքներն ու պահանջները լրացնելու նպատակով։ Խմ նախագահութեամբ գործող յանձնախմբերից չորսի կատարած աշխատանքները առանձնապէս բնորոշ են. Հ. Յ. Դաշնակցութեան դէպի թուրք կառավարութիւնն ունեցած բարեացակամ վերաբերմունքի տեսակէտից։

1.— Զօրակոչի յանձնախումբը, որ շարունակ շըրշամ էր հայ գիւղերը, համոզում և ոգեւորում երի-

տասարդներին զօրաշարքերը մտնելու, դասալիքներին հաւաքում և ճակատ ուղարկում, և զինուորական հրամանատարութեան բազմատեսակ հրամանները ի կատար ածում։ Այդ յանձնախմբի ջանքերով հաւաքուեցին Մշոյ մըրգայի հայ զինուորները, որ Ֆըրդայի հարիւրէն 80 էին կազմում։ Այդ զինուորները ապագային նոյն Ֆըրգայի հրամանատար իհսան փաշայի նուուների դէմ տարած յաղթութիւնների մէջ այնքան վճռական դեր խաղացին ու նրան մինչեւ Գօլ-Օրտու կօմանտայի աստիճանին հասցրին։ Հետաքրքիր է գիտնալ, թէ այդ համարեայ թէ հայկական Ֆըրգայից քանի՞ հոգի գասուլիք եղան և քանի՞ սները ուուների սոււիններով ընկան։

2.— Երիւորդ յանձնախումբը, Կորիւնի ղեկավարութեամբ, զբաղւում էր խմբովին և անհատապէս ձերբակալութիւններ կատարելով և իշխանութեան յանձնելով։

Այս յանձնախմբերի և մասնաւորապէս Կորիւնի միջոցով էր, որ զինաթափուեցին ու կարգի հրաւիրւեցին պատերազմի դաշտից փախչող և ճանապարհին ամէն ինչ քանդող ու աւելող արագ գնդերը։ Կորիւնն էր որ՝ երբ ամբողջ Մշոյ միւթասէրիփութեան մէջ էր հատ ոստիկան անգամ չկար քիւրտ և հայ դասալիքներին պատժելու, նոյն դասալիքներին ճակատ էր կազմուում, եւ նոյն Կորիւնն էր, որ կառավարութեան թոյլատուութեամբ հայ կամաւորական բանակ էր կազմում ճակատ մեկնելու։

Երրորդ յանձնախումբը Կոտոյի Հաջու ղեկավարութեամբ փոխադրութեան գործն էր կանոնաւորում և թնդանօթներ ու պարէն հասցնում մինչեւ Լիդ, Կոփի, Ղըլճ-Կեատուկ։

Չորրորդ յանձնախումբը «Կարմիր Մահիկ» անու-

նով Գեղամի (Էրզրումցի) ղեկավարութեամբ գործի էր լծել բոլոր կանանց ու պատերազմելու անընդունակ տղամարդկանց, և մէկ խոշոր ապարատով պատերազմական դատարկ պահեստներն էր լցնում մթերքներով :

Բայց այս աշխատանքներից, ուրիշ շատ փաստեր ու դէպքեր կան մեր պնդումները հաստատող, բայց այսքանով բաւականանք այն գիտակցութեամբ թէ՝ թուրք անաչառ մամուլը, հասարակական կազմակերպուած կարծիքը և գործիչները (նթէ կան այդպիսիները) այսքան փաստերից էլ պիտի ընդունակ լինեն ըմբռներու ահաւոր ճշմարտութիւնը, Սասնոյ և Մշոյ հայ ժողովրդի լոյեալութիւնն ու թուրք կառավարութեան մատուցած ծառայութիւնները ապացուցող փաստերը անթիւ են ու անհամար, սակայն ցաւօք սրտի բոլոր փաստերն ու ծառայութիւնները անտեսուեցան և հայ ժողովրդի այս հատուածն էլ թուրքերի կողմից յայտարարուեց դաւաճան ու ապստամբ, ուռաների դըրդումով գործող եւ նրանց քաղաքական նպատակներին ծառայող, Այսքան անուրանալի ծառայութիւններ մատուցելուց, թուրք պետութեան դէմ այսքան լոյեալ լինելուց յետոյ ի՞նչ պատահեց արդեօք, որ ես, իմ կուսակցութեան ընկերներն ու ժողովուրդը զէնք բարձրացրինք թուրք կառավարութեան դէմ, Քանի տեղահանութեան և կոտորածների լուրերը չէին հասել սասունցուն, մշեցուն ու մեզ, ամենքն էլ լոյեալ էինք ու կառավարութեան աջակից։ Բայց երբ հետզհետէ մեզ ու ժողովուրդի համար պարզուեց, որ Սասնոյ և Մշոյ ոստաւոր շալակաւորները, որոնք Մուշից Էրզրում հաց էին փոխադրում գօրքերի համար՝ անջատում են շարունակաբար։ Եղան տեսանք, որ Դաշնակցութեան միջոցով ու աջակցութեամբ հաւաքուած

հայ գօրքերը անպատիւ ձեւով զինաթափւում են եւ անյայտ ուղղութեամբ տարագրւում. երբ համզուեցինք, որ մեր բնաջնջման սկիզբն է գրւում, ահա այդ բովելից այլեւս փոխուեցինքնաև՝ մենք, փոխեցինք մեր վերաբերմունքը, այլեւս դադարեցինք հաւատալ թուրք կառավարութեան և նրա գործակալների սին ու դաւադիր հաւասարիւմներին։ Այդ ժամանակ մենք էլ զէնք վերցրինք։

Կարելի՞ էր շալակաւոր սասունցիների, մշեցիների կորուսը տեսնել ու շարունակել հաւատալ թուրք կառավարութեան. հարաւո՞ր էր Մշոյ հայ երիտասարդներից կազմած գնդի (ֆոկայ) անպատիւ զինաթափման և կոտորածին ականատես լինել. և, վերջապէս, այնքան զոհաբերութիւններից ու պատրաստակամութիւնոց յետոյ երբ Սասնոյ և Մշի ժողովրդի համար պարզ էր կառավարութեան հայերը բնաջնջելու դաւադիրը՝ կարելի՞ էր տոկալ ու համբերել. կարելի՞ էր զապել ժողովրդական ցասումը, մանաւանդ սասունցու և մշեցու, որոնք իրենց քաղաքիական պարտականութիւնները ճշտութեամբ կատարելու գիտակցութեան հետ մէկտեղ գիտէին պատով մահը դերադասել անարդ ու սարկական կեանքից. Սկզբում, ժողովրդի բուռն դժգուութիւնները քապել փորձեցի, գիմումներով ու բողոքներով Սէրվէդ թէյին զգաստացնել և յետ կասեցնել տալու իր նենդ կորիւնին սպանելու, և, ի հարկէ, չարաչար սխալուեց. ոստիկանները բալորն ալ ընկան մեր գնդակներով՝ իրենց գաւագրութեան ճանապարհին. այդ օրուանից ահա փոխուեց իմ ընկերներիս ու ժողովրդի վերաբերմունքը դէպի թուրք կառավարութիւնը. մի քանի գա

ւառներ ինձ ու ընկերներիս հետ ապաւինեցին զէնքին , կառւեցին ու պաշտպանեցին , որքան ոյժ ունէին , իւրենց ապրելու անժխտելի իրաւունքը : Ճիշտ է որ ապրելու համար գործադրեցինք այն բոլոր միջոցները , որ սովորել էինք թուրքերից . այդ պատճառով էլ թուրք մտաւորականութիւնը մեզ կարող է մեղադրել , թէ ինչո՞ւ կոռւելու այդ միջոցները իւրացրինք իթթիհատից ու նրա գործակալներից : Բայց նոյն այդ թուրք մտաւորականութիւնը որեւէ հիմք չունի ասելու , թէ ժողովրդի և միմիայն ժողովրդի կամքով և ինքնապաշտպանութեան բնագով ցուցադրուած կոփւը՝ ոռւս սի յուսով , նրա թելադրանքով կամ նրա շահերի համար կազմակերպուած կոփւ էր : Այսպէս մտածել ու այսպէս կշուղադատել՝ կը նշանակէ ոչ միայն անտեսել արձանագրուած ապացուցող փաստերը , այլ և ուրանալ դարերի այն տժգոյն պատմութիւնը , որ կերտուել է թուրք պետականութեան յոփի յարկի տակ :

Մինչեւ այստեղ արձանագրուած փաստերը անհերքելիօրէն մեզ երուամ այն եզրակացութեան , որ թուրքերի և ուրիշների մեղադրանքները այն մասին , — թէ հայերը դաւաճանել են թուրք կառավարութեան , թէ նոքա ոռւսների ձեռքին գործիք դառած՝ ծառայել են նրանց քաղաքական ձգտումներին , թէ պատերազմի ընթացքում , հետապնդելով զանազան քաղաքական ու ազգային նպատակներ , ապստամբել են նրազէմ ևայլն ևայլն — միանգամայն անհիմն են ուանաւրդար : Մինչեւ այսօր էլ յամաօրէն յերիւրուղ այդ անհիմն մեղադրանքները մի գերազոյն նպատակ ունեն միայն՝ քօղարկել ու արդարացնել հայերը բնաջնջելու այնքան տմարդի ու դաժան ծրագիրը , որ յացել էր Սուլթան Համիտը և որ այնքան վայրագութեամբ կազմակերպեց ու իրագործեց իթթիհատը :

Այսօր էլ , երբ վերածնած թուրքիան իր ազգային արդար իրաւունքները պաշտպանելու գոյամարտն է մղում , երբ նա իր արիւնաքամ ժողովուրդի ուժասպառ հայրենիքի կատարեալ անկախութեան հիմերն է խարսիում , երբ իր երկրի ու ժողովրդի չորս հինգերորդը կորցրած ձգտում է վերականգնել , անգամ այս օրերին՝ Քէմալական թուրքիան՝ բոլորովին մոռացած անցեալի դառն փորձերը՝ շարունակում է հայկական հարցը հայերի բնաջնջումով լուծելու անմիտ քաղաքականութիւնը :

Տեսնենք սակայն , թէ սուլթան Համիտի , Իթթիհատի ու Քէմալականների վերոյիշեալ յոտի քաղաքականութիւնը որքա՞ն էր համապատասխանում թուրքիայի և Արեւելքի ժողովրդների շահերին :

Այդ քաղաքականութեամբ թուրքերը կարողացան արդեօք իրենց ցանկացած ձեւով լուծել ընդմիշտ հայկական հարցը :

Մեր խորին համզումով , թուրքերը թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ գէպքում չարաչարօրէն սխալեցան այդու ստեղծեցին այսօրուան ահաւոր աղէտը՝ թէ՛ հայ ժողովրդի ու նրա հայրենիքի և թէ՛ թուրքիոյ համար :

Պատմութեան բեմի վրայ իրենց պետական ազգային կեանքը բոլորած ժողովուրդներից և ոչ մէկի անցեալը այնքան հարուստ չէ քազմապիսի աւերածութեամբ , կոտորածներով , ինչպէս թուրք պետութեան՝ Այդ ամբողջ անցեալը , ինչպէս երբեմնի ասորական պետութեան անցեալը . կոփւների , ապստամբութիւնների , գերեվարութիւնների , ջարդերի ու աւերածութիւնների մի աննախընթաց շղթայ է : Այդ պատճառով էլ ահա երկու դարից ի վեր երբեմնի՝ օսմանեան կազմակերպեց ու իրագործեց իթթիհատը :

անկում, դէպի նուազում, ստրկութիւն և ոչնչացում։ Պարբերական բնոյթ ստացած այս ցաւագին ընթացքը թէ՛ թուրք մտաւորականութեան, թէ՛ մամուլի և թէ՛ օտար շահագրգոռուած պետութեանց լուրջ խորհրդակցութիւնների առարկայ է դարձել։ Ամենքը ցանկանում են օսմանեան պետութեան թաւալագլոր անկումի պատճառները գտնել։ սակայն բոլորն էլ թեք մակարդակի ու սխալ ճանապարհի վրայ են կանգնած։ Մեզ ամենաքից շատ հետաքրքրողը թուրք մտաւորականութեան մեկնաբանութիւններն են, որ այնքան պայծառութեամբ ցուցադրում են նրանց պետական հասարակական երեւոյթներն ըմբռնելու անկարողութիւնը։ Թուրք մտաւորականները իրենց պետութեան կործանման ամենագլխաւոր պատճառներից մէկը համարում են կրօնական տարբեր հատուածների պայքարը։ նրանք տրամաբանում են այսպէս։ քանի դեռ օսմանեան պետութեան բաղկացուցիչ ժողովրդների մէջ կան ու լինելու են քրիստոնեայ տարրեր՝ հակասետական արիւնահեղ ըմբռստութիւնները չեն դադարելու։

Մենք արդէն տեսանք, թէ օսմանեան կայսրութեան մէջ տեղի ունեցած ապստամբութիւններից խոշորագոյն մասի հեղինակներն ու ընթացք տուողները ոչ թէ քրիստոնեայ, այլ մահմետական ժողովուրդներն էին, որոնք իրենց կրօնական մոլեռանդութեամբ աւելի խալիս խալամներ էին, քան թուրքերն ու իրենց խալիփան։

Թուրք ոեկավարներից ոմանք ապստամբական շարժումները և նրանց հետեւանքով առաջ եկած կոտորածները համարում են արդիւնք օտար շահագրգոռուած պետութիւնների դաւադիր գործունէութեան եւ կամ զանազան խմբակցութիւնների գրգռման։ Բայց այս պնդումն եւս ահեթեթ է ու անհիմ։ Թուրքիոյ

քայքայման և անդամահատման մէջ շահագրգոռուած բազմաթիւ պետութիւններն ու խմբակցութիւններն որքան էլ ցանկանային նրա այլատարը ու այլակրօն հատուածներն իրենց շահերի համար օդտագործել եւ նրանց միջոցով հակապետական ցնցումներ առաջ բերել մազաչափ անգամ յաջողութիւն գտնել չպիտի կարողային և իրենց ցանկութիւնները պիտի մնային լոկ ցանկութիւններ, եթէ թուրք կայսրութեան մէջ այդ խլրտումների համար պարարտ հող լինէր, եթէ թուրք պետական գործիչները ժողովրդների (գոնէ իսլամ) արդարացի պոութիւններից խրատուած՝ նոյն ժողովուրդները կառավարելու պետական իմաստութիւնն ունենային կամ գէթ սովորէին, այլ կը լինէին, ի հարկէ, նաև հետեւանքները։

Յիմարութիւն է կարծել թէ թուրք պետութեան դէմ ապստամբած քսանից աւելի ժողովուրդները կատարեալ քաղաքական համբակներ էին՝ միշտ պատրաստ ուուսի կամ անգիւացու ձեռքին գործիք դառնալու և առանց շահի ու գիտակցութեան՝ իրենց գոյութիւնը այնքան աննախընթացօրէն վտանգելու։ Նախորդ էջերում արդէն բազմաթիւ փաստերով պարզեցի հայկական շարժումների զրդապատճառները։ նոյնի հայկական շարժումների միւս բազմաթիւ խլամ ժողովրդների ապստամբական շարժումների մասին, օսմանեան կառավարութեան դէմ յարուցուած ապստամբութիւնները հետեւանք են միայն և միայն թուրք պետութեան յուի վարչաձեւի և նրա միջոցով ստեղծըւած հալածանքների ու անհանդուրժելի քաղաքական տնտեսական ծանր կացութեան։

Թուրք մտաւորականներից շատերը օսմանեան պետութեան քայքայման պատճառը համարում են նաև այն, որ Թուրքիայի հպատակ՝ մանչ աշխարհական տնտեսական ծանր կացութեան։

վարակուած անպայմանօրէն բաժանելու տենդով, ինք-
նուրոյն և անկախ պնտական կեանքի էին ձգտում։
Այս պնդումը նոյնպէս անտեղի է ու անհիմն, որով-
հետեւ ապատամբ ազգերի մէջ՝ ամենագերակշիռ տեղը
բռնող թուրք-թաթար ցեղերը ամենեւին ցանկութիւն
չունէին թուրքիայից անջատուելու. իսկ հայերի ան-
ջատողական շարժման զրդապատճառներն ու հիմքերը
մանրամասնօրէն արդէն տեսանք։

Թուրք մտաւորականները և պետական գործիշ-
ները, այլեւս անզօր ու յուսահատ իրենց հայաջինջ-
ծրագիրը քօզարկելու մէջ, շշմած ու տկարացած եւ-
րոպական մամուլի ու հանրային կարծիքի անշառ-
մերկացումներից ու աղաղակող փաստերի հրապարա-
կումից՝ փորձեցին նոր գիւտ անել և կոտորածննդրի
ու գերեվարութեանց մեղքը ձգել էնվերների, Թա-
լէաթների և գերմանացիների վրայ. Ո՞վ կը հաւատայ,
թէ էնվերներն ու Թալէաթները կոտորածնների ու ա-
ւերածութեանց էրոստրատներ եղան իրենց անձնական
նախաձեռնութեամբ ու վճուղ. չէ՞ որ էնվերին ու
Թալէաթին նախորդող թուրք պատմութիւնը նման
ահաւոր զրուազների մի շղթայ է: Մի դաւադրութիւն
է փորձում յօրինել Սիւլէյման Նազիֆը՝ Մուսուլի եւ
շրջանի կոտորածնների պատասխանատուութիւնը ձգե-
լով շրջանի հրամանատար գերմանացի Շումանի
վրայ. մի նոր դաւադրութիւն, որով փորձում է
հայ նահատակուած ժողովուրդը լարել գերման ժո-
ղովրդի գէմ և այզու չքմեղանալ և ծածկել ահաւոր
իրողութիւնը, եթէ նոյնիսկ Շումանը կոտորածնների
մէջ մեղք էլ չունենայ, պատասխանատուութիւն ու-
նի անշուշտ. նա որպէս անհատ չէ որ մեղսակցած է
ո՞րին, այլ կառավարութեան զիտութեամբ և հրա-
հանգով. իսկ եթէ Սիւլէյման Նազիֆի պնդումը իրո-

դութիւն է՝ ի՞նչպէս թուրք կառավարութիւնը Շու-
մանին, որպէս ոճրագործի, զատի չտուեց ու չկախեց.
և, վերջապէս, Սիւլէյման Նազիֆը ի՞նչ ունի ասելու
միւս շրջանների կոտորածնների մասին. այնտեղ էլ կո-
տորողները գերմանացի Շումաններն ու զօրքերը չէին։
Միանգամայն անհիմն է ու անհեթեթ նաև հայ մտա-
ւորականութեան մի մասի այն կարծիքը թէ՝ քիւրտն
ու թուրքը իրենց աղգային ցեղական մղումներով,
կրօնական մոլեւանդութեամբ ու հակումներով ի բնէ
թշնամի են եղել հայութեան, թէ նրանք մարդաս-
պան ու ոճրագործ են ծնուած։ Որքան և անձամբ
տառապել եմ քիւրտի ու թուրքի հալածանքներից,
սակայն ամէնաղաժան հալածանքի օրերին էլ վերո-
յիշեալ մեղադրանքները քիւրտ եւ թուրք ժողովուրդ-
ներին չեմ ուղղել. մեղաւորը՝ մարդասպանն ու ոճ-
րագործը՝ ո՞չ թէ ժողովուրդներն են, այլ նրանց քա-
ղաքական աղգային կեանքին ոգի և ուղղութիւն տը-
ւող զեկավար մտաւորականները։ Պատմութիւնը իր
երթի ճանապարհին բազմաթիւ փաստեր ունի ցուցադր-
րած, թէ ի՞նչպէս հրեշտակային առաքինութիւններով
օժառուած ժողովուրդները իրենց զեկավարների պատ-
ճառով ոճրագործութեան ուղին են թեւակոխել, եւ,
ընդհակառակը, օճրագործ կարծուած ժողովուրդները,
իմաստուն զեկավարների ցուցմունքով և օժանդակու-
թեամբ, կուլտուրական վերելքի վսեմ ճանապարհը
բռնել։ Մանաւանդ թուրք ու քիւրտ ժողովուրդները,
որոնք գարեր շարունակ մեր կողքին են ապրել և ի-
րենց երակների մէջ —քուրտաերը յատկապէս— կըում
են մեր արեան մի խոշոր մասը։

Մեղաւորը իթթիատի զեկավարներն էին, իսկ
նրանցից առաջ թուրք պետութիւնն ու պետական
գործակալները, որոնք, գարեր շարունակ, օդասւեցին

թուրք ու քիւրտ ժողովուրդների տղիտութիւնից, յենուեցին նրա յոռի թնազդների վրայ և իրենց ոնրագործ ծրագիրը ու կարճատես պետական ըմբռնումը պարտադրեցին նրան, գործադրեցին նրա միջոցով և այսօրուայ հաւառոր կորուստների ու աղէտի պատճառ դարձան :

Այս ճշմարտութիւնը իր ամբողջ խորութեամբ ու տարածականութեամբ պէտք է ըմբռնել՝ մեր և թուրքերի ապագայ յարաբերութիւնների շուրջը եղած անտեղի յոռետեսութիւնները ցրելու և երկու դրացի ժողովուրդների ապագայ բարի յարաբերութիւնների անհրաժշտ հողը պատրսստելու համար։ Որովհետեւ որքան էլ հայ ու թուրք մտաւորականութիւնը անցեալի տիսուր փորձերից յուսահատ՝ թերահաւատութեամբ վերաբերուեն իբարու, անժխտելի է, որ գարեր շարունակ մենք, թուրք և քիւրտ ժողովուրդները ապրել ենք ու պիտի ապրենք կողք կողքի։ Անխուսափելի անհրաժշտութիւն, որի հետ պէտք է հաշտել և համապատասխան էլլաքայլեր առնել :

Մենք մատնանչեցինք թուրք մտաւորականութեան ու պետական գործիչների համարեայ բոլոր այն կարեւոր պատճառաբանութիւնները, որոնցով նոքացարդ աշխատեցին պարզել օսմանեան պետութեան վերջին երկու տարուան գահավէժ ընթացքն ու կործանման պատճառները, Մենք փաստերեզվ ապացուցեցինք, թէ որքան զիտումնաւոր, ժակերեսային ու անճշտէին այդ պատճառաբանութիւններն ու վերլուծումները :

Այժմ տեսնենք, թէ որոնք են իբական ու հիմնական այն պատճառները, որ վաղուց ի վեր քայլայում ու կիւծում են օսմանեան պետութեան վիրաւոր մարմինը, որոնք շարունակ պատճառ են դառնում թուր-

քիայի անդամահատութեան, բարոյական, տնտեսական անկման ու կազմալուծման, մի բան, որ այժմ էլ շարունակում է արագ քայլերով, մի բան, որ այսօրուայ վարիչները իրենց տարած յաղթութիւններով կուրացած չեն տեսնում կամ չեն ուզում տեսնել :

Պատճառները բազմաթիւ են, սակայն պատճական տարրեր շրջանների բոլոր տուեալները այսուղ կարիք չկայ շեշտելու. բաւական է գտնել հիմնական ու առաջնակարգ նշանակութիւն ունեցող պատճառները, և այն ժամանակ գէպքերն ու իրադարձութիւնները կը ներկայանան իրենց իսկական կերպարանքով։

Այդ տեսակէտից մօտենալով բոլոր ժամանակների ապստամբութիւններին ու կոտորածներին՝ նրանց հիմնական պատճառը պէտք է որոնել օսմանեան պետութեան յորի վարչածելի մէջ, որ երկու դարուց աւելի է, ինչ իշխում է տիրականօրէն օսմանեան երկարաժշտութիւն, ու ապրենք կողքի պատճառների վրայ, նա, մեր կարծիքով, հետեւանք է ստորեւ յիշտակուած պատճառների։

1. — Տիրող ազգի գերիշխանութեան .

2. — Համբարձամութեան, իբրև հիմք պետութեան .

3. — Համօսմանցիութեան և .

4. — Համաթռւրանականութեան .

Եթէ թուրք մտաւորականութիւնը գէթ այժմ փորձէր աղատազրուել պեղանտիզմից և մօտենալ Տաճկաստանի ազգային-քաղաքական վայրիվերումներին անաշառութեամբ ու սառնօրէն պիտի տեսնէր, որ իր հայրենիքին սպառնացող վտանգների 90 առ հարիւրը վերոյիշեալ չորս երեւոյթների ծոցից են ծնւռում։ Այդ հիմնական չորս սկզբունքներն են բավանդակութիւն ու թափ տուել թուրք վարիչների պետական ազգային կործանարար քաղաքականութեան . այդ չորս

սկզբունքներից են ծնունդ առել մինչեւ այսօր էլ տիրականօրէն իշխող օսմանեան օրէնքներն ու վարչաձեւը, մանր ազգերի քաղաքական, ազգային, կրօնական իրաւագրկութիւնը և, որպէս հետեւանք այդ յոռի պետականութեան, երէկուայ ու այսօրուայ քսանից աւելի մանր ազգերի ու ցեղերի ապատամբական շարժումները, կոսորածը, հալածանքներն ու գերիվարութիւնները:

Փորձենք քննութեան ենթարկել վերոյիշեալ չորս հարցերը իրենց պատմական յաջորդականութեամբ:

Ամենից հինը այդ չորս երեւոյթների մէջ, տիրող ազգի գերիշխանութեան սկզբունքն է (միլլէթը հաքիմէ):

Միջին գարերում, երբ Մերձաւոր Արեւելքի ժողովուրդներն իրենց պետական կեանքի քայլացան շրջանն էին ապրում թուրք-թաթարական ցեղը, հիմնուած իր փոքրաթիւ, բայց ռազմունակ զինուորների վրայ եւ օգտուելով հարեւան ազգերի թուրութիւնից, անսպասելիօրէն մեծացաւ ու տարածուեց, իր իշխանութեան տակ առնելով հետզետէ նուաճուած անկազմակերպ ժողովուրդները, նա տապալեց նոյն իսկ բիւզանդական հսկայ պետութիւնը, նրա առընթեր մի շարք թագաւորութիւններ եւ իշխանութիւններ ու տէր դարձաւ հսկայածաւալ երկրների ժողովրդների ու ցեղերի, որոնք տարբերում էին իրենց կրօնքով, լեզուով ու սովորութիւններով: Սեւ Ծովը դարձաւ նոր ստեղծուած օսմանեան հսկայ պետութեան ներքին լիճը, իսկ Դանուբը՝ ներքին գետ: Այդ նոր պետութիւնը շրջապատել էր նոյնիսկ Միջերկրականը և հետզհետէ մօտենում էր Ատլանտիանին: Օսմանեան ցեղը անչափելի մեծութեան հասաւ արագօրէն, միայն և միայն իր թափառական ցեղերի զին-

որական ոյժով. սակայն ո'չ ժողովուրդը և ո'չ էլ կառավարութիւնը որեւէ կուլտուրական, չինարարական աշխատանքի զծուեցին, իրենց ենթակայ բազմազան ազգերի ու ցեղերի համար աանելի օրէնսդրութիւն ու պետական վարչաձեւ չստեղծեց, Այդ ժողովուրդուները մէկ ընդհանուր հայրենիքի շուրջ հաւաքելու ու նրա (հայրենիքի) գիտակից ու անձնազոն քաղաքացին գարձնելու կարողութիւնը չունեցան, ուշագրութեան չառին նրանց ցեղային արդարացի պահանջները և սովորութիւնները և չբաւարարեցին նրանց ամենանուազագոյն պահանջները, իր պետական կեանքի ամենածաւալուն օրերից մինչեւ այսօր այդ պետութիւնը մնաց արտաքնապէս իրբեւ մէկ հզօր պետութիւն, իսկ ներքնապէս նա հիւծուեց, մնալով միշտ ենթակայ տարբեր ցեղերի ու ազգերի յարձակումներին ու ատելութեանց:

Օմանեան ցեղը միշտ էլ մնաց հին խաչնարածը, զինուորը և հրամանատարը: Նա իր իշխանութեան ամուրող ընթացքում հասկացաւ միայն զէնքի օրէնքը եւ զինուորի իրաւունքը: Նրան խորթ մնացին — և մինչեւ օրս էլ խորթ են — երկրագործութիւն, ճարտարարուեատ, ուսում, գիտութիւն, տանելի և արգար օրէնքներ հպատակ ազգերի համար: Լայնածաւալ կայսրութեան մէջ ստեղծուել էր երկու մեծ քանակ. մէկը՝ գերիշող սուլթանը և թուրք-թաթար արտօնեալ ցեղերի վրայ յենած բազմաթիւ գործակալների դասը, իսկ միւսը՝ հպատակ ազգերը, որոնք առանց կրօնի ու ցեղի խորութեան օրէնքից դուրս էին յայտարարուած, անարգուած և արհամարուած: Առաջին բանակը տէր ու անօրէն էր երկրին, երկրորդը՝ սեպհականութիւնը տիրողի: Չնայած այն հանգամանքին, որ օսմանեան ցեղը շատ անչափ քանակութիւն էր կազ-

մում հպատակ ցեղերի համեմատութեամբ՝ բայց նա երկաթէ ճիրաների մէջ ճզմում ու զսպում էր մեծամասնութիւն կազմող հպատակներին և նրանց հաշուին ապրում և նրանց նիւթական անսպառ միջոցներով իր գինուորական գերիշխանութիւնը հաստատում։

Թուրքը դարձաւ զինուորական, պետական պաշտօնեայ ու ոստիկան, իսկ հպատակները՝ սարուկներ և գերիներ, որոնք իրենց թէ՛ արհեստով, թէ՛ երկրագործութեամբ, թէ՛ գրականութեամբ և թէ՛ ուսումով ու վաճառականութեամբ շատ աւելի բարձր էին իրենց վրայ իշխող թուրքերից։ Օսմանեան բանակը նրա գերիշխանութեան յենարանն էր։ Մի բանակ, որ հաւասարապէս գժբախտութիւն էր թէ՛ իշխող, թէ՛ ենթարկուող ժողովուրդների համար։ Իշխողների համար զժբախտութիւն էր, որովհետեւ բանակի բարձրու ստորին պաշտօններին տիրացած թուրք ցեցը զինուորական անսասելի խրախանքների մէջ ուժապատճենում, և կեանքի միւս ասպարէզների համար միանգամայն անընդունակ գառնում։ իսկ ստորին խաւընման հարստահարութիւնների ու բռնութեանց հետեւանքով տնտեսապէս քայլքայուած էր և հոգեպէս այլասեռուած։

Թուրքիոյ մէջ տիրող օսման ժողովուրդը թէ իր նուազ քանակի և թէ իր անկուլտուրականութեան հետեւանքով կամ պիտի փորձէր հասկանալ մանր ժողովուրդների շարժումների պատճառները և գոհացում տար նրանց արդարացի պահանջներին (որ միայն ամրապնդել կարող էր օսմանեան պետութիւնը), և կամ, ապաւինած հրի ու սրի իր վատթար քաղաքականութեան՝ արեւան ճապաղիկների մէջ իր գերիշխանութիւնը պիտի հաստատէր։ Դժբախտաբար օսմանեան պետութիւնը իր գոյութեան ամրող ընթացքում որ-

գեգրեց երկրորդ ուղին։ Կոտորած, աւերածութիւն, հալածանք, ու գերեվարութիւն... ահա իւրաքանչիւր անգամ օսմանեան պետութեան տուած պատասխանը իր հպատակ բազմաթիւ ազգերին ու ցեղերին՝ երբ նըրանցից որեւէ մէկը փորձէր է իրաւունք, արդարութիւն և ապահովութիւն գտնել օսմանեան դժոխքի մէջ։

Դարերի ընթագքում ցուցադրած այս անհեռատեսուանիծակուու քաղաքականութիւնը անհրաժեշտ է համարուել պետութեան շահերը պաշտպանելու, նրա գոյութեան հիմերը ամրապնդելու տեսակէտից։

Մարդիկ դարերով կառավարել են մի հսկայածաւալ պետութիւն, մի քանի տասնեակ միլիոն ժողովուրդներով, իրենց պետական իմաստութիւնը հիմնելով այն սխալ համոզումի վրայ՝ թէ հպատակ ցեղերն ու ազգերը պէտք է լինեն տնտեսապէս ուժապառ, արիւնաքամ, քաղաքականապէս լկուած ու ստրկացած, որպէսզի զիւրին լինի նրանց թէ՛ սանձելն ու հպատակութեան մէջ պահելը և թէ՛ տիրող թուրք ցեղի օգտին շահագործելը։ Այս արատաւոր վարչածեփի հետեւանք պիտի համարել այն բուռն ատելութիւնը, որ ծնել ու դարերով սնուցել են իրենց հոգու մէջ հպատակ ժողովուրդները հանգէպ թուրքի։ Քիւրտը հպատակ ժողովուրդները «ուօմէ խալին», «զրզրաշը», «հաթուրքին անուանում է «ուօմէ խալին», «զրզրաշը», «հարամ օսմանցի»», արաբը՝ «կեղտոտ տանիկ» և այլն և այլն...»

Օսմանեան պետութեան յարուցած տնտեսական, քաղաքական ու ազգային անհանդուրժելի հալածանք ները ոտքի են հանել իրար յետեւից քսանի չափ ժողովուրդներ։ Նրանցից ոմանք ապստամբել ու ազատուել են թրքական լծից, ոմանք անհաւասար կռուի մէջ նոր վէրքեր սուացած շարունակում են տառապել

ու համբերել աւելի բարեյաջող պայմաններում պոռթ-կալու և ազատագրուելու համար:

Ամենահիմնական պատճառներից մէկը, որ օսման-եան երբեմնի հզօր կայսրութիւնը ներքուստ քանդեց ու աւերակների վերածեց՝ թուրք փոքրաթիւ ցեղի գերիշխանութիւնը ամրապնդելու յոռի քաղաքականութիւնն էր. մի քաղաքականութիւն, որի ստեղծած աւերակոյտերի վրայ կառուցուեցին մի շարք ստորադաս ազգերի պետական անկախ չէնքերը: ինչպէս, օրինակ՝ Սերբիա, Բուլղարիա, Ղարաբաղ, Ռումանիա, Եգիպտոս, Յունաստան, Սուրիա, Հիճազ, Իրաք, Երկրի մի մասին էլ ուրիշները տիրացան. իսկ միւս մասը, նոյն քաղաքականութեան հետեւանքով, ներքին արիւնուս բաղխումներ է ապրում շարունակ. Մեղաւորը ապստամբութեան ճանապարհով ազատագրւած հպատակ ժողովուրդները չեին. մեղաւոր չէր նոյնիսկ գերիշխող թուրք ժողովուրդը: Ամբողջ պատասխանատութիւնը ծանրանում է թուրք զեկավար մտաւորականութեան ու պետական գործիչների վրայ, որոնք օսման-եան լայնածաւալ կայսրութեան զեկը ձեռքներում պահած, ընդունակ չեին հասկանալու թէ անկարելի է պետութեան մէկ ութերորդ մասը կազմող թուրք ժողովրդի գերիշխանութիւնը հրի ու սրի միջացով հպատակ ժողովրդների նկատմամբ յարատեւ դարձնել, ժողովուրդներ՝ որոնք իրենց անցեալ ու ներկայ պատմութեամբ, մշակոյթով և արհեստով շատ աւելի բարձր էին քան թուրքերը: Թուրք զեկավար տարրերը մինչեւ այժմ էլ չեն կարողանում գիտակցել, որ իրենց քաղաքականութեան կործանարար հետեւանքները հաւասարապէս ազդել են թէ՝ թուրք պետութեան, թէ՝ հպատակ ազգերի եւ թէ՝ թուրք ժողովրդի բախտի վրայ: Այս անհեռատես քաղաքականութիւնն էր պատ-

նառը, որ շինարար տարրերը, հիւծուած ու քայքայուած տնտեսապէս, զանգուածօրէն սկսեցին գաղթել և երկիրը թողնել լատարկ ու անմշակ. այս քաղաքականութեան պատճառով էր որ, թուրք գերիշխող տեղը պարբերական պատերազմներից յոգնած, ուժապատ, հնարաւորութիւն չունեցաւ իր կրթութեան ու զարդացման գործին նուիրուելու, շարունակ խարիսափեց ագիտութեան մէջ, հարազատեց ու իւրացրեց կոտորելու, հալածելու և գերեվարելու գաղանային բնազդները, չարիք դառնալով թէ՝ իր պետականութեան ու թէ՝ հպատակ ազգերի համար: Ամենից շատ տուժողը, ի հարկէ, պետութիւնն էր, որը հսկայական մարդկային ուժեր և նիւթական միջոցներ էր սպառում ապստամբութիւնները ձևաշելու, հպատակ ժողովրդներին զսպելու համար: Եթէ վերոյիշեալ մարդկային ջանքերն ու զրամական միջոցները գործադրուէին երկրի վերաշնութեան, ստեղծագործական աշխատանքների և որոշ իրաւակարգ ստեղծելու վրայ, որքան հզօր պիտի լինէր այսօրուայ ջլատուած Թուրքիան, որքան երջանիկ պիտի լինէին այնտեղ ապրող ժողովուրդները: Այս յոթի քաղաքականութիւնից վեաւուեց օսմանեան պետութիւնը. վեասուեց գերիշխող թուրք ժողովուրդը, վեասուեցին հպատակ ազգերն ու ցեղերը և օգտուեցին միայն թշնամի պետութիւնները, որոնք իրենց ժանիքները սրած՝ հաւաքուեցին նրա դիակի շուրջը և իրենց մէջ բաժանեցին նրա հողերն ու ժողովուրդները:

Այս անիմաստ քաղաքականութեան զեկավարներին պատասխանատութեան կանչելու ո՛չ հնարաւորութիւն կայ և ո՛չ էլ որեւէ միտք, քանի որ նրանք վաղուց ի վեր հանգչում են իրենց սխալանքների վլատակների տակ: Պէտք չկայ նաև մտքերն ու զգա-

ցումները գրգռել՝ օսմանեան պետութեան անցեալի տխուր յիշողութիւններով։ Եթէ մենք այսքան երկար կանգ առանք ու մանրամասն վերլուծեցինք անցեալի իրադարձութիւնները՝ այդ արինք միայն մէկ նպատակով։ Մեր ցանկութիւնն էր, մէկ կողմից՝ լուսաբանել մեր ու թուրքերի յարաբերութեանց իրական հիմունքները, միւս կողմից՝ ուրուագծել օսմանեան պետութեան յորի վարչաձեւի և նրա հետեւանքով առաջացած դժբախտութիւնների պատկերը։

Թուրքիայի այսօրուայ զեկավարները եթէ իրօք ցանկանում են կուլտուրական ազգերի շարքն անցնել և իրենց ժողովրդի ու պետութեան կեանքը ապահովել ու յարատեւ դարձնել, նրանք պէտք է որ ըմբռնեն ու հասկանան մեր մատնանշած դառն իրողութիւնները։ Նրանք, հենց այսօր, կտրականօրէն պէտք է որ հրաժարուեն թուրք աիրող ժողովրդի գերիշխանութեան (միլլէթը հաքիմէ) գաղափարից և հպատակ ժողովրդների անկապտելի իրաւունքները ճանաչելով, նրանց էլ իրենց պետական ընտանիքի հաւասարագոր անդամը դարձնեն։

Օսմանեան պետութեան քայլայման երկրորդ մեծ պատճառը համիսլամութեան սկզբունքն էր, որ ծնունդ առաւ և ծաւալուեց աւելի ուշ, քան աիրող ժողովրդի գերիշխանութեան գաղափարը (միլլէթը հաքիմէ) և իր զարգացման գագաթնակէտին հասաւ ու իշխող դարձաւ Սուլթան Համիդի օրով։

Եւ Սուլթան Համիդը, և՛ նրա թեւ ու թիկունք թուրք մտաւորականութիւնը տեսան, որ օսմանցիների գերիշխանութեան վրայ հիմնած գաղափարականութիւնը փատած զէնք է երկրի մէջ խաղաղութիւն հաստատելու տեսակէտից և որ այդ գաղափարականութիւնը փոխանակ պատակ ժողովրդները թուրք պետութեան ներքին և արտաքին քաղաքականութեանց հիմնագոր։ Մանաւանդ, որ այդ շարժումը իրավուսում էին դրսից զանազան ուժեր և Վիլհէլմ կայսեր նման անձնաւորութիւններ։

Հուրջ համախմբելու, նրանց զինում է այս վերջինի դէմ։

Ահա այդ ծանր փորձութիւններից յետոյ նրանք հրապարակ նետեցին համիսլամական գաղափարը՝ անցեալ սխալանքները սրբազրելու, քողարկելու և պետութեան խախտուած հիմները ամրապնդելու նպատակով։

Սուլթան Համիդը և նրա քաղաքականութիւնը որդեգրած թուրք մտաւորականութիւնը այն համոզումն ունէին, թէ համիսլամական գաղափարի ծաւազով պիտի կարողանան ա.) երկրի ներախ իսլամ ցեղումով պիտի կարողանան ա.) մի համախմբել. բ.) այդ համազերն ու ազգերը ի մի համախմբել. բ.) այդ համազուած խոլամ տարրերը դարձնել թուրք պետութեան յենարան և նրանց միջոցով զսպել և ստրկութեան մէջ պահել ոչ խոլամ ժողովարդները. գ.) ի մի թեան միջազ պետութիւնները, և վերջապէս, դ.) այդ քին թշնամի պետութիւնները, և վերջապէս, դ.) այդ մանապարհով փորձել վերականգնելու թուրք պետութեան անցեալ փառքը հիմնասային Աֆրիկայից մինչեւ թեան համար մինչեւ Հնդկաստան, Մէք-Անդրկովկաս, Դանուբից մինչեւ Հնդկաստան։

Այս ցնորսական, բայց գրաւիշ հեռանկարների պատճեառով համիսլամական գաղափարը Սուլթան Համիդի ժամանակներից դարձաւ ո՛չ միայն պետական սկզբունք, այլ եւ թուրք պետութեան ներքին և արտաքին քաղաքականութեանց հիմնագոր։ Մանաւանդ, որ այդ շարժումը իրավուսում էին դրսից զանազան ուժեր և Վիլհէլմ կայսեր նման անձնաւորութիւններ։

Համիսլամական գաղափարի առաջնորդները ցանկութիւն ունենալու պատմութեան օրէնքները չուռտալ. յետ գնալ մինչեւ միջին դարերը՝ երբ կրօնական պետերն

էին զեկավարում կայսրութիւններն ու պետութիւնները . երբ բոլոր ոչ կաթոլիկներն ու հերետիկոսները կամ ողջակիցնում էին խարոյկների վրայ՝, կամ ճօնում նիզակների ծայրին . Ահա թէ ուր էին ձգտում և ինչի՞ հետամտում համիսամական շարժման առաջնորդները իրենց գերիշխանութիւնը հաստատելու համար :

Դժուար է, նոյնիսկ անհնարին, թուրք պատմութեան մէջ մատնանշել համատարած տգիտութեան, խաւարի ու անկման այնպիսի շրջան, որպիսին համիսամական գաղափարի ծագման ու ծաւալման շրջանն էր : Ամենակարճ ժամանակում հրապարակ են նետում ու ամբողջ պետութեան մէջ զրութեան տէր դառնում թուրք մոլլաները, սոֆթաները և տէրվիչները, որոնք, կիմնուելով իսլամների տգիտութեան, կրօնական մոլեռանդութեան, ներքին յոռի բնագդական մղումների վրայ՝ գրգռում, չոյսում ու խրախուսում են իսլամների ատելութիւնը դէպի ոչ իսլամ տարրերը, անէծքի ու արհամարհանքի են ենթարկում ամէն ինչ, որ զուրանից գուրս է, և խրախուսում, գրգռում ու քաջալերում իսլամ ցեղերի կրօնական միութեան անհրաժեշտութիւնը՝ բոլորովին մոռացութեան տալով նրանց ազգային առանձնայտկութիւններն ու արդար պահանջները . Որպէս հետեւանք այս յոռի շարժման՝ օսմաննեան հպատակ ժողովուրդները բաժանում են երկու իրարից խստօրէն զատուած ու թշնամի բանակների՝ հաւատացեալ իսլամների և ոչ իսլամ կեալուրների : Համիսլամութեան ջատագովների և իսլամութեան գլուխ խալիքա սուլթանների հրահանգներով ու զեկավարութեամբ ահա սուրերը ճօնում են իսլամների ձեռքում և հարիւր հազարաւոր կեալուրներ՝ հայ, ասորի, բուլգար, եղիդ, զղլբաշ՝ զոհ են զնում կրօնական մոլեռանդութեան ու բարբարասութեան :

Քէմալիստանի այժմեան զեկավար Ռասուֆ բէյերը և Սիւլէյման Նազիֆները՝ մինչև 1908թ. եղած կոտորածների, ջարդերի ու խոռվութեանց բուն պատճառները պիտի շարունակեն որոնել ոչ թէ «կոմիտաչիների», «բօմբաչիների գործունէութեան, այլ համիսլամական քաղաքականութեան մէջ, որի հետեւանքսկ ծնուեցին՝ գեավուրների կոմիտաչիներն ու բօմբաչիները» :

Քանի որ այժմ էլ օսմաննեան պետութեան մէջ բազմաթիւ են համիսլամական ցնորամիտ գաղափարների ջատագովներն ու կողմանակիցները, այդ մարդիկ կարող են մտածել՝ թէ ընդհանրապէս ջարդերը և յատկապէս հայկականը՝ թուրք պետութեան ներքին անդորրութեան համար բացասական նշանակութիւն չեն սենեցել, թէ այդ ջարդերի հետեւանքով, ընդհակառակը, երկրի ոչ իսլամ ժողովուրդները կամ բնաջնջուել են և կամ զաղթել ու նուազել, և որ, վերջապէս, երկիրը այդպիսով դարձել է մի միատարր իսլամական պետութիւն, որի ամեն մէկ ցեղը՝ հաւատարիմ իսլամի կրօնին ու խալիքայութեան՝ պատրաստ է դիմագրաւելու արտաքին ու ներքին ամեն թշնամանք :

Այս մտածումները կիմնուած են խոր թիւրիմացութիւնների վրայ՝, որ պէտք է պարզել :

Օսմաննեան պետութեան յետագայ պատմութիւնը մազաշափ անդամ չարդարացրեց համիսլամականութեան երազները . ճշմարիտ է, նրա (համիսլամականութեան) ծաւալումով աւելի զաժան հալածանքի, սրածութեան ենթարկուեցին ոչ իսլամ տարրերը . բայց և միաժամանակ աւելի խորթացան ու ըմբուտացան նրանք, իսկ հպատակ իսլամ ժողովուրդների հակապետական շարժումները ոչ միայն չթուլացան, այլ եւ նոր ուժով, նոր եռանգով ծաւալեցին ու խորացան :

Ի՞ւլամ ցեղերից ո՛չ ոք չխաթուեց թուրք խալիս ֆայի ու նրա դործ սկալ ֆռան մասններից :

Սանանը, Եմէնը շարունակեցին իրենց ազգային պայքարը . տասնետակ հազարաւոր թուրք զինուորներ ընկան արաբական գնդակներով . վահարիտները, բազմաթիւ շեյխեր, իմամ եայեաները գլուխ բարձրազրին թէ՛ խալիփայութեան և թէ՛ թուրք կառավարութեան դէմ . աղանդաւոր Տէրսիմը, նոյնիսկ շէյխ Զալիակեպինի որդի շէյխ Սայիտ Ալին ըմբոստացան խալիփայի և «Ռոմի Հիւքմաթ»ի դէմ . առնաւուտները, ամենամոլեւանդ խամամական հատուածը, համիսյամական գաղափարների պատճառով երրեք մոռացութեան չտուեցին իրենց ազգային երազներն ու ինքնորոյն պահանջները, և նոյնիսկ զուրանը լատինական տառերի օգնութեամբ ցանկացան մայրենի լեզով թարգմանել ու կարդալ :

Խալամ և ոչ խալամ թշնամի հատուածների արիւնոտ բաղխումները թուրք պետութեան մէջ գնալով աւելի խորացան . Այդ բաղխումների պատճառով . մէկ կողմից՝ թուրք պետութիւնը տնտեսապէս աւերւեց, քաղաքտկանապէս թուլացաւ, իսկ, միւս կողմից՝ հարեւան բազմաթիւ ժաղովուրդները իրար դէմ դարաւոր ատելութեամբ լցուեցին ու «խային ոօմից» խորթացան . Այս բոլորից, ի հարկէ, օգտուողո դարձեալ թուրքերը չեղան . այլ զիսի թշնամի ուժերը :

Համիսլամական շարժման ղեկավարները չարաշար պարտութեան մատնուեցին երկորի ներառում . Այլ էր պատկերը զրսի աշխարհում . Դրսի բազմամիլիոն խալամ ժողովուրդների մէջ համիսլամական շարժումը աւելի հող գտաւ :

Համիսլամական շարժման ղեկավարները այս պարագան ճիշտ էին գնահատել . այդ պատճառով էլ նրանց

յաջողուեց որոշ արդիւնքների հասնել, Գերմանական կայսրութեան ղեկավարները, օրինակ, շատ խոչոր յոյսեր էին դնում համիսլամական շարժման ծաւալման վրայ և իրենց շահերն ու դիրքը արեւելքում հաստատելու և ամրապնդելու համար՝ ամէն կերպ աջակցում, զործի էին մղում համիսլամական այդ շարժման ղեկավարներին և նպաստում նրանց գաղափարների տարածման . Համիսլամական շարժման ղեկավարներին և ջատագովների կարծեցեալ ոյժը այնքան մեծ ու ներջնչող էր թւում զրսի աշխարհում, քաղաքական այնպիսի երազուն ակնկալիքների հորիզոններ էր գծում դիւրահատների առաջ, որ մեծ պետութիւններից շատերը համիսլամ թուրքեղի քաղաքականութեան յենարան էին դառնում . Այսօր էլ քիչ չէ Պուանքարէների թիւը, որոնք արտակարգ արժէք տալով համիսլամական շարժման, մեծ մտավախութիւն են ցուցագրում և խոչոր զիջումներ անում թուրքերին :

Բայց եթէ Վելիչելմերը, Փուանքարէները արտակարգ նշանակութիւն են տալիս և ոյժ վերագրում համիսլամական շարժման, այդ ամենեւին չի նշանակում թէ արեւելքցի խալամն էլ նոյն վերաբերմունքն ու հասկացողութիւնն ունի այդ շարժման մասին . վերջինս շատ լաւ գիտէ այդ շարժման թէ՛ իրական ոյժը, թէ՛ նշանակութիւնը . նա խորապէս գիտակցում է, որ համիսլամական քաղափարը մի սին գաղափարէ, մի իրատուիլակ, որ ազգել կարող է միայն եւրոպական «բարձր զիւանագէտների» մտքի և հոգու վրայ . համիսլամականութիւնը թուրքերի համար արտաքին աշխարհում դարձաւ մի թղթէ վահան՝ իրենց ստահակութիւններն ու ներքին ճակատի թուրլութիւնը քօզարկելու համար . Եւ չնայած այն բանին, որ թուր-

քերը ամենուրեք համիսլամական շարժման անունից ազմուկներ բարձրացրին, ճառեցին, սպառնալիքներ կարդացին, յուզումներ առաջ բերեցին, բայց, այնուամենայնիւ, ոչ միայն ակնկալած խոշոր հետեւանքներին չհասան, այլ և մի չափով մինչեւ իսկ վեասեցին թուրք պետութեան։ Փաստ է, որ եւրոպական որոշ պետութիւններ, պետական, քաղաքական խոշոր գործիչներ չափեց աւելի արժէք տուին իսլամական շարժման և զիջումներ արին ու յոյսեր ներշնչեցին թուրքերին, ոմանք էլ, բոլորովին կարեւորութիւն չտալով այդ շարժման, մէկ կողմից՝ պատրուակ բռնեցին այն և աւելի ճնշեցին ու խեղեցին իրեւց հպատակ իսլամ ժողովուրդները, միւս կողմից՝ մատնանշելով Սուլթան Համիդի ինվէրների, Աղախանների համիսլամութեան անունով արած սպառնալիքները, սրբագործեցին տաճկական հողերի բռնագրաւումները։ Համիսլամական շարժման զեկավարները կամայ-ակամայ պէտք է բնդունեն վերոյիշեալ դառնձշարտութիւնները, որովհետեւ համիսլամական գաղափարների տարածման ամենափայլուն շրջանին էր, որ կործանուել սկսեց Մարօքոն։ վերջնականապէս խլուեց Ալֆերը, անդամահատման ենթարկուեցին Տրիպոլիս, Թունիս, Բէնգազին։ յաւիտեանս կորսուեց եղիպտոսը։ բաժանուեցին ամբողջ արաբական թերակղին, Սուրիան, Պաղեստինը, Միջագետքը։ Այս բոլորին ականատես հնդկաստանցի իսլամը, նուիրաբերած մի քանի միլիոն բուպիներից բացի ուրիշ որեւէ ձեռնարկութիւն չարեց։ անարձագանգ մնացին համիսլամութեան անունով տրուած բոլոր ողբերգական նիշերը։ Նոյնիսկ Աղւանիստանը որեւէ աջակցութիւն չը ցուցադրեց։ իսկ Պարսկաստանը, Խիւան, Բաւխարան թուրքիայի կործանման համար նոյնիսկ համականք

ու ցաւակցութեան խօսքերը զլացան։ Քեազիմ կարբէքիրներն խոստովանեցին, որ «Սրբազան պատերազմները, համիսլամական կոչերը անարձագանգ մնացին»։ և իսկապէս պատերազմի ընթացքում իսլամ հնդիկը, կամ արաբը նոյնքան եռանդով կռուեցին իսլիմայի զօրքերի դէմ, ինչպէս ոչ-իսլամները։

Թուրք պետութեան արտաքին ու ներքին ճակատներում համիսլամական շարժման առաջ բերած փորձութիւններն ու աղէտները լաւագոյն ապացոյց էին այն բանի, թէ այդ շարժումը և՛ Թիւրքիայի և՛ Արեւելքի ժողովուրդների համար միանգամայն կորստաբեր շարժում էր։ Թուրք պետական ականաւոր գործիչները եթէ տասը տարի առաջ գոնէ ըմբռնած ու հասկացած լինէին Կարապէքիր փաշաների այսօրուայ յայտարարութիւնը, թէ «սրբազան պատերազմներն ու համիսլամական կոչերն անարձագանգ մնացին», այն ժամանակ վստահօրէն կարելի էր պնդել, որ ո՛չ հայ յեղափոխութիւն կը լինէր, ո՛չ հայկական կոտորածներ, ո՛չ էլ օսմանցիք կը կորցնէին այնքան հողամասեր և ժողովուրդներ։ Զ'արժէ երկար կանգ առնել համիսլամական շարժման անկայուն հիմների և նրա առաջացրած վեասակար հետեւանքների վրայ, քանէ որ այդ շարժումը պամականօրէն դատապարտուած է մահոււան։ Այսօրուայ քէմալական պետութեան վճիռը՝ խալիֆային զրկել սուլթանական իրաւունքից, համիսլամական կործանարար գաղափարներից ազատագրուելու մի ուշացած փորձ է, մի նահանջ, որպէս այսօրուայ Թուրքիան փորձում է սրբազել իր տիուր անցեալի սխալանքները։ Երեւի անկրածեցած էր, որ թուրք անհեռատես պետութիւնն ու քաղաքական ականաւոր գործիչները անցնէին երեք հարիւրամեայ աշխինի, ահաւոր ճանապարհը ու նոր միայն հասկա-

նային ու ըմբռնէին իրենց անիմաստ քաղաքականութեան ու անհաշիւ սիսալանքների հետեւանքները :

Թուրքիայի հպատակ գրիստոնեայ ժողովուրդները, մասնաւորաբար հայերը, Հ. Յ. Դաշնակցութեան միջոցով, տասնեակ տարիներ առաջ խալիֆայական և սուլթանական իրաւունքները իրարից բաժանելու եւ տարբեր անձնաւորութեանց յանձնելու հարց էին յարուցել . այդ քայլը թուրք պետութեան ու ղեկավար շրջանների կողմից համարւում էր մի մահացումնեղք, կատարեալ դաւաճանութիւն : Դեռ 20—30 տարի առաջ թուրք ղեկավար շրջանները այն անյօղգողդ համոզումն ունէին, թէ համիսլամական շարժումը մի անպարտելի ոյժ է . որ պիտի միացնէ ու ձուլէ դրաի ու ներափ բոլոր իսլամ ժողովուրդները, և որովհետեւ հայ ժողովուրդը յամառօրէն կառչած իր կրօնին՝ հայկական բարձրաւանդակում մի ուժեղ սեպ էր՝ ցցուած Անդրկովկասի, Ադրբէյջանի իսլամ ժողովուրդների և տաճիկների միացման ճանապարհին, ուստի համիսլամական շարժման ղեկավարների համոզումով անհրաժեշտ էր ոչնչացնել այդ սեպ՝ իսլամ ժողովուրդների միութիւնը իրականացնելու համար :

Ահա այս յօնի, անիմաստ ցանկութիւնը իրագործելու նպատակով էր, որ թուրք կառավարութիւնը առանց որեւէ պատճառի՝ խզի հանգստութեամբ կազմակերպեց 1894—96 թուրականների հայկական ահաւոր կոտորածները, որ մեղմ ձեւով շարունակեց մինչև 1908 թիւը :

Ի զուր անցան հայերի ինքնապաշտպանութեան փորձերը՝ նրանք անզէն ու անպաշտպան ընկան, որպէս թուրք պետութեան և համիսլամական շարժման զոհեր :

Եւրոպական պետութիւնները, որոնք թրքահպա-

տակ գրիստոնեաների իրաւունքների պաշտպանութիւնը պիտակ դարձրած՝ թուրքիայի լայնածաւալ հողամասների վրայ հետամուտ էին իրենց քաղաքականութեան շահերն ապահովել . ճիշտ է, հայկական կոտորածների աթիւ արտաքին այխարհում աղմկեցին . նաւային ցոյցեր կազմակերպեցին, բողոքներ ներկայացրին թուրք կառավարութեան, բայց և այսպէս ներքնապէս շատ գոհ էին և ուրախ . նրանց հետաքրքրողը գրիստոնեայ ժողովուրդների տառապանքը կամ հայկական կոտորածներ էին, այլ թուրքիայի ներքին կեանքին խառնուելու մտահոգութիւնները . իսկ այս տեսակէտից հայկական կոտորածները լաւագոյն առիթն էին :

Թուրք պետութեան տիսուր անցեալին հետ ամենահեռաւոր ծանօթութիւնն ունեցող մարդն անգամ զիտէ՝ թէ Գերմանիան, Ռուսաստանը, Ֆրանսիան, Աւստրիան, Խտալիան ինչպիսի լարուածութեամբ ժանիքները սրած առիթներ էին որոնում թուրքիան յօշոտելու կամ նրանից համեղ պատառներ պոկելու ճիշտ այս քաղաքականութեան հետեւանքով համիսլամական շարժման ամենից զերմ պաշտպան Գերմանիան տիրացաւ Բաղտատի երկաթուղագծին, Աւստրիան ամրացաւ Բունիա-Հերցոգովինայում . Անգլիան տէր գարձաւ Կիպրոսին, Ֆրանսիան իր մենաշնորհները ուժեղացրեց թուրքիոյ մէջ, իսկ Ռուսաստանը դիւրութիւններ ստեղծեց իր հին ծրագիրները իրականացնելու համար . Տիրապետել հայկական բարձրաւանդակին հայերի, որոնք, որպէս աղային հայերի, որոնք, որպէս աղային և կուլտուրական ուժեղ զգացումներով օժտուած մի ժողովուրդ անցանկալի տարր էին, ցցուած Ռուսիոյ արեւելեան նուաճումների ճանապարհին, — ահա Ռուսաստանի միակ նպատակը . Ուստի և՛ հայկական կո-

առածները, և' հայկական վիլայէթների տնտեսական աղբիւրները օգտագործելու մենաշնորհները, և' երկաթուղիներ ու ճանապարհներ շինելու իրաւունքը, որ թուրքերը առանց վերապահութեան տալիս էին Ռուսաստանին՝ բաց էին անում և յարդարում վերջինիս առաջ դէպի հարաւ, հարաւ-արեւելք և արեւմուտք ձգուող ճամբաները.

Համիսլամական գաղափարը չարաչար պարտութեան ենթարկուեց թէ՛ արտաքին և թէ՛ ներքին ճակատներում, առանց չժապիելի արդիւնքների: Քիւրտը մնաց քիւրտ, պարսիկ՝ պարսիկ, իսկ Աղրպէյճանցի թաթարը դարձաւ ուսու պետութեան յետաղէմ քաղաքականութեան ամենահաստատուն յենարանը. վերջինիս միջոցով էր, որ Ռուսաստանը ճնշեց 1905—7 թուերի անդրկովկասեան յեղափողութիւնը՝ ստեղծելով հայ թաթարական արիւնու ընդհարումները:

Օսմանեան լայնածաւալ պետութիւնը օր օրի վրայ դէպի քայքայում ու կործանում էր գնում. ամենուրեք իրար յաջորդող պարտութիւնները՝ որել էին կեանքի ու մահուան առաջ. Թուրքիայի զեկավարները կամ պիտի զգաստանային ու նոր, խելահաս քաղաքականութեամբ փորձէին փրկել իրենց հայրենիքը, կամ պիտի թաւալագլոր անկումով մահանային: Բարերախտաբար թուրք զեկավար մտաւորականութիւնը ժամանակաւոր զգաստութեան նշաններ ցոյց տուեց. գահընկէց արաւ Սուլթան Համիդին և համիսլամական շարժումը մասամբ ջլատեց ու կասեցրեց: Այս զգաստութիւնը սակայն շատ կարճատեւ եղաւ. 1908 թուի յեղափոխութեամբ երիտասարդ թուրքերը իշխանութեան գլուխ անցան: Տիրող ժողովուրդի գերիշխանութեան և համիսլամական սկզբունքների փոխարէն նրանք հրապարակ նետեցին համօսմանցիութեան գա-

ղափարը: Երիտասարդ թուրքերի կազմակերպութեան նման՝ երիտասարդ, թարմ, բայց և անկազմակերպ ու յեղյեղուկ էր այս գաղափարը. իսկապէս համիսլամականութեան և համաթրքութեան, աւելի ճիշտ՝ համաթուրանականութեան մէջ տարուրերող մէկ գաղափար էր այս, որ մինչեւ այսօր էլ զեռ չծեւակերպուած տեղի, ժամանակի համաձայն երբեմն այս, երբեմն էլ այն կողմն է թեքուում: Համօսմանցիութեան գաղափարը համիսլամականութիւնից տարբերում էր նրանով, որ առաջինը ձգտում էր աւելի մեծ չափերով իրականացնել ազգային միութիւնը՝ մի յայտարարի բերելով հպատակ ժողովուրդների տարբեր պահանջները: Օսմանեան սահմանադրութիւնը մի հզօր և գրաւիչ զէնք էր հպատակ ժողովուրդներին պետականօրէն համախմբելու և օսմանցի անունով մկրտելու, և երիտասարդ թուրքերը, ապաւինած սահմանադրութեան, ամեն ջանք թափեցին այդ ժողովուրդներից ստեղծել ներքնապէս մի ուժեղ և միաձոյլ ազգութիւն: Սահմանադրութիւնը որոշ չափով ժպտում ու յոյսէր էր ներշնչում հպատակ ազգերին. գոնէ եթէ որպէս առանձին ազգ ապրելու և զարգանալու հնարաւորութիւն չունէին, որպէս քաղաքացի կարող էին մի փոքր ազատ շունչ քաշել. ապագայ դէպերը եկան այս յոյսերն ևս յօդո ցնկեցնելու: Երիտասարդ թուրքերը իրենց նոր քաղաքականութեամբ համիսլամական շարժման զեկավարների սխալանքների շարունակողը եղան: Նրանք էլ իրենց համօսմանցիութեան սկզբունքով աշխատում էին թուրք ժողովուրդի գերիշխանութիւնը հաստատել. մանաւանդ իրենց քաղաքականութեան յետագայ շրջանում՝ երիտասարդ թուրքերը միանգամայն յարեցան համիսլամականութեան: Համօսմանցիութեան գաղափարը լոկ պիտակ էր, նոր վարիչները

այդ պիտակի տակ թագնուած՝ փորձում էին քօղար-
կել նախորդ երկու սկզբունքների և նրանց առաջա-
դրած ծանր հետեւանքների տպաւորութիւնները։

Հիասթափութիւնը շատ շուտով կատարեալ դար-
ձաւ։ նոր վարիչները նոյնպէս դիմակազերծ եղան։
մայեաները՝ Արարիայում, Տալիսաթները, մէրտիտնե-
րը, Առնաւուտները, քիւրտ իպրահիմ փաշաները եւ
Մակեդոնացիք իրար ետեւից ոտքի ելան և իրենց ապ-
րելու առարական պահանջները առաջազրեցին նոր վա-
րիչներին։ վերջիններս շատ աւելի անհամբերատար-
ողի ցուցազրեցին հպատակ ազգերի պահանջների հան-
դէպ, քան նախորդները և պատասխանցին աւելի
սիստեմատիկ ու դաժան կոտորածներով։ այդ մտայ-
նութեան արդիւնքն էր նաեւ հայերի կիլիկեան կո-
տորածը։

Երիտասարդ թուրքերի խելագար քաղաքականու-
թիւնը այնտեղ հասաւ, որ իսլամ առնաւուտների շատ
հասարակ ու բնական ցանկութիւնը՝ ունենալ մայրենի
լեզուով գիր ու գրականութիւն, գաւաճանութիւն յայ-
տարարուեց և այդ ամենավաստակաւոր ժողովուրդը
թնդանօթների բերան տրուեց։

Համօսմանցիութեան անունով եղած թուրքացման
քաղաքականութիւնը ծայրայելորէն զրգուել ու զայ-
րացրել էր պիտութեան բոլոր բազկացուցիչ տարրերը՝
բացառութեամբ հայերի և մանաւանդ Հ. Յ. Դաշ-
նակցութեան։ թէ հայ ժողովուրդը և թէ նրա ամե-
նառութեղ կուսակցութիւնը անգնահատելի ծառայու-
թիւններ մատուցին երիտասարդ թուրքերին և՝ յեղա-
փոխական շարժումների օրերին և՝ սահմանադրութեան
հրատարակման ու կիրառման ժամանակ։ սակայն այդ
բոլորի փոխարէն՝ անարգօրէն դաւադրուած գտան իրենց՝
ի պատասխան այդ խոշոր ծառայութեանց՝ Ատանայի-
հայկական կոտորածները տեղի ունեցան։

Համօսմանցիութեան սկզբունքից ամենէն շատ
առևտողները հայերը եղան։ ամէն կողմ թալան, ա-
ւեր, սրածութիւն, բռնաբարութիւն։ կիլիկիայում
25,000 հայեր մորթուուեցին, և, չնայած դրան, Հ.
Յ. Դաշնակցութիւնը վճռեց մնալ հանգիստ և նոյն իսկ
աշխատեց հնար եղած չափով ամրապնդել սահմանա-
գրութիւնը, հակառակ միւս հայ քաղաքական կու-
սակցութիւնների գժգոնութիւններին։ իր լոռութեամբ
և համբերութեամբ Դաշնակցութիւնը չէր գաւաճա-
նում հայ ժողովուրդին և ոչ էլ գոհ էր Երիտասարդ-
Թուրքերից և նրանց վարած պետական կործանարար
քաղաքականութիւնից։

Դաշնակցութիւնը վստահ էր, որ թուրք ժողո-
վուրդը և նրա զեկավարները համօսմանցիութեան
ծրագիրներով կարող չպիտի լինէին հայ ժողովուրդին
ո՛չ ձուլել և ո՛չ էլ զիմազուրկ անել։ նա համոզուած
էր, որ յեղափոխութեան նախնական շրջանի այդ բուռն
ազգայնամոլ ձգտումները բաղիսելով անհարին ար-
դելքների, պիտի խելքի բերէին Երիտասարդ-թուրքե-
րին։ նա հաւատուած էր միաժամանակ, որ սահմանա-
գրութեան հաստատումով պիտի կարողանար զեռ
չձեւակերպուած իթթիհատ կուսակցութիւնը դնել ա-
սող քաղաքականութեան հիմերի վրայ, ընդունելի
գարձնել նրան՝ «Արեւելքի ժողովրդների ազգատագրման
և նրանց դաշնակցութեան սկզբունքը»։ Այս հնարա-
ւոր էր այն պատճառով, որ այդ ժամանակ թուրք
մատարականներից անհատներ ու խմբակցութիւններ
կային, որոնք հաւատուած էին այդ միութեան։ Այս
պարզ պատճառով Դաշնակցութիւնը ստիպուած էր
ազդու միջոցներով չըռզոքել եղած հարստահարութիւն-
ների և անիրաւութիւնների գէմ, մանաւանդ որ այդ
ժամանակներին մեծ վախ կար Ռուսաստանից, որը

սպառնում էր վերջնականապէս իսպառ թաղել Արեւելքի փոքր ժողովրդների դարաւոր ձգտումներն ու երազները։

Համօսմանցիութեան սկզբունքները 1913 թուին արդէն յօդս էին ցնդել։ Սակայն թուրք զեկավարները, փոխանակ օգտուելու եղած փորձառութիւններից և այլ ճանապարհ ընտրելու, գաղագած և ներկուած անմեղ ժողովուրդների արիւնով, ոտք դրին մի ուրիշ ճանապարհի վրայ, որ աւելի սարսափելի էր, քան նախորդները։ մի ուզի, որ աւելի ցնորական էր, էլ աւելի երազական և որով ընթանալու համար դեռ շատ ու շատ նոր արիւն պիտի թափուէր։

1912 թուին Թուրքիան ընդգրկում է մի նոր սկզբունք, որպէս հիմք պետական իտէլիր։ Դա համաթուրանականութիւնն էր։ մի սկզբունք, որ մինչ այդ քչերի պաշտպանութիւնն էր վայելում, իսկ այժմ դարձել էր բոլորի միակ յոյսն ու ապաւէնը, միակ կոռւանը, որով Տաճկաստանի հզօրութիւնն ու ազատագրումը պիտի ապահովուէր օտարների ձուլումից, և մասնաւորաբար Ռուսաստանից։

«Տիրող ազգի գերիշխանութեան» սկզբունքը շատ սահմանափակ էր և հինգած, բացի դրանից օսմանցի թուրքերի թիւր շատ վախտ էր։ ընդամէնը 6—7 միլիոն։ հետեւաբար Թուրքիան չէր կարող համաշխարհային այդ խնդիրը՝ համաթուրանականութիւնը՝ միամինակ լուծել։

Համիւլամականութեան սկզբունքը ջախջախուած էր և սնանկացած, իսկ համօսմանցիութիւնը, թէ սահմանափակ և թէ անիրականանալի։ ուստի Երիտասարդ-թուրքերը, և առհասարակ թուրք մտաւորականները, հետզհետէ կլանւում են համաթուրանականութեան նոր սկզբունքով։ Գերմանիան հրահրում է այս նոր սկզբունքը և լայն հորիզոններ է բաց անում թուրքերի

առաջ։ Գեղեցիկ ծրագիրներ են կազմւում, եռուն աշխատանք է սկսւում կիրառելու համար այս նոր հաւատամքը։

Այս ծրագրով արթնանում է թուրքի հին անցեալը։ Լէնկիթեմուրները, ձէնկիզխանները, Բաթիները եւ միւս աշխարհակալները իրենց արիւնուուշտ, հսկայ հասակով պատկերանում են թուրք մտաւորականների ուղեղի մէջ, նրանք տեսնում են դիակների շեղին, գանդէ բուրգեր, և այս բոլորից յետոյ, — աշխարհի կործանումը և համաթուրանականութեան փառաւոր յաղթանակը աշխարհի փլատակների վրայ։

Թուրք մտաւորականները Պոլիս նստած երազում էին իրենց հին Վաթանը՝ Տաշկէնտ, Սամարդանտ, Կուչկա և Պամիր, և համաթուրանականութեան գաղափարներով ուղում էին տէր դառնալ իրենց հին հայրենիքին։

Նրանք ուռախն համարում էին իրենց մահացութնամի, որովհետեւ նա իր ծոցում ունէր 26 միլիոնից աւելի իրենց ցեղակից հպատակներ, որոնք գլխաւորապէս ապրում էին Տաճկաստանի սահմանամերձ վայրերում, ինչպէս, օրինակ, Պարսկաստանի Ատրպատականը և Անդրկովկասի Աղրբէջանն էր։ Այդ պատականը և երկրամասների ընակչութեան ձնշող մեծամասնութիւնը ցեղակից թաթարներ էին և նթէ նրանց մէջտեղը չինէին հայերը, վրացիները, քրդերը և պարսիկները, այն ժամանակ Պոլսից մինչև Զինական պատերը նրանք կ'ունենային կրօնքով իսլամ ու ցեղակից միապաղազ ազգութիւն։ Երբ իրագործուի այդ միութիւնը, միւս իսլամներն էլ պիտի համախմբուեն և ենթարկուեն այդ միութեան, և մօտիկ պաղապայում, ինչպէս Լէնկիթեմուրի ժամանակները, այդ հսկայ ուժը տէր և տիրական պիտի դառնալ ամբողջ Արեւելքին։

Ահա այս հսկայ ծրագիրներն էին, որ ոգեւորում էին թուրք մտաւորականներին, նրանց մզում պատերազմների, արկածախնդրութիւնների, և գեռ այսօր էլ նրանք աշխատում են այդ հսկայ ծրագրի իրագործման վրայ: Էնվէրը, Տօքթ. Նազըմը և Խմբակը աշխատում են Աֆղանստանում, Թուրքեստանում և այլուր. իսկ Մուսթաֆա Քէմալը, Բառով պէյը և ուրիշներ Տաճկաստանում:

Թէ ո՞ր չափով արդեօք իրագործելի է թուրանականութիւնը, այդ ցոյց կուտայ ապագան. բայց որ համաթուրականութեան գաղափարախօսները չափութածկեն այն, որ իրենց ծրագրի իրագործման համար, առաջին հերթին, անհրաժեշտ համարուեց ճանապարհի վրայից մի անգամ ընդ միշտ վերցնել հայ ժողովուրդը՝ այս արդեն անառարկելի փաստ է: Ցեղանանութեան պատրուակի տակ՝ հայ ժողովուրդի մի մասը քշուեց անապատները, որ համաթուրանականութեան ճանապարհից դուրս է, իսկ մնացած մասը ոչընչացւեց, որպէսզի ժամանակակից թուրք մտաւորականութիւնը ոչ միայն չնսիմացնի իր նախահայրերի՝ Լէնկթեմուրների ու Ճինկիցիսանների բարբարոսութիւնները, այլ եւ գերազանցի նրանց:

Սրանք են հայկական կոտորածների բուն պատճառները և թուրք մտաւորականները զուր տեղն են հեթիաթներ և շինծու մեղադրանքներ հիւսում հայ ժողովուրդի հասցէին: Մեծամեծ ծրագիր ունեցող այդ մարդիկ թող ասեն, որ «աբետական անհրաժեշտուրինից» ծնունդ առած գործողութիւններէին հայկական կոտորածները, թո՛ղ այդ քաջութիւնը ունենան և ո՛չ թէ յանշանքը անամօթաբար բարդեն մեռելների վրայ:

Ահա՝ զարաւոր տառապանքների և հայկական կոտորածների չորս գլխաւոր պատճառները, որ մենք յիշատակեցինք:

Շատերը զարմանում և տարօրինակ են գտնում թուրքերի վերաբերմունքը հանդէպ հայերի, և հարց են տալիս թէ՝ ի՞նչ է պատճառը, որ աղքատ և այժմ անսմարդաբնակ Հայաստանի աւերակներից թուրքերը մի կտոր հող իսկ զանում են հայերին տալ՝ թէկուզ գլխացաւանքից ազատուելու համար, և, վերջապէս, ի՞նչ արտառոց չկամութիւն է, երբ թուրքերը հոգա սակաւութիւն չունենալով հանդերձ՝ ունեն 800,000 քառ. մզոնից աւելի տարածութիւն միմիայն 8 միլիոն բնակչութեամբ: Կան և ուրիշաւտմիամիտմարդիկ, որոնք ապշած են տեսնելով, որ թիւրքիան իր տարբեր երկրամասները վաճառքի է հանում, զիւրութեամբ զիջում է ուրիշներին, բայց մի՛շտ կառչած է մնում արեւելեան երկրամասին, մի՛շտ և ամէն յարմար առիթով յառաջանում է զէպի Անդրկովկաս՝ հայերից խլելով Ղարսը, իրեն կցելով Սուրմալուի շրջանը և ձգտելով գէպի Նախիջեւան-Շարուր: Ինչո՞ւ թուրքիան այլքան գէպի Նախիջեւան-Շարուր, ինչո՞ւ թուրքիան այլքան գէպի Կարսը հանդէպ: Այս հարցերի պատասխանը շատ լակարող են տալ քէմալականներն ու համաթուրանականները, եթէ միայն վստահ լինեն, որ գաղտնիքը չի բացուի:

— Ղարսը մի բռունցք է թիֆլիսի գլխին և ամուր յենարան՝ ոռուսկան արշաւի գէմ: Ղարս—Սուրմալու, Շարուր—Նախիջեւան գծով կապւում ենք Բագուի, Ատրբէջանի եւ Դաղստանի հետ, ուր ամուր կերպով կարելի է փակել ոռու արշաւի գռները, որից յետոյ կը միանանք մեր կրօնակից և ցեղակից եղբայրներին:

Երզում—Բայազետ—Մակու գծով մենք թաւրիզ պիտի գնանք, տիրելով ամբողջ պարսկական Աւարպատականը, որով պիտի կապուենք թուրքեստա-

Նին։ Իսկ Պիթլիս—Վան—Սալմաստ գծով կարող ենք իջնել Ռեւանտուզ, և կամ Թաւրիզի վրայով ուղղուել մինչեւ Աֆղանիստան։

Սակայն այս ճանապարհները ի՞նչպէս պիտի արրուեն մի ազգի, որ ցեղով թուրք չէ, որ կրօնքով եւ լեզուով տարբեր է։

Համաթուրանականները իրենց երեւակայութեամբ սիսալուած չեն, սակայն տեսնենք թէ թուրք մտաւուականների այդ երազները իրականանալի ե՞ն արգեօք, թէ՞ նրանք էլ, համիւլամականութեան և համօսմանցիութեան պէս, մի օր յօդս պիտի ցնդեն, իրենց եռե թողնելով նո՞ր քայքայում եւ նո՞ր աւերածութիւններ։

Ներկայումս թուրք գործիչների աչքերը յառած են զէպի Արեւելք և նրանք հաւատում են համաթուրանականութեան իրականացման, Նրանց կարող ուժերը շրջում են Պարսկաստան, Աղրկովկաս, Աֆղանիստան, Թուրքեստան, մինչեւ Հնդկաստան և ամէն տեղ քարոզում են համաթուրանական գաղափարներ։ Նրանք իրեւ համաթուրանականութեան հիմք ընդունում են Տաճկաստանը։ Նա՛ պէտք է ինի կենարոնը և համաթուրանականութեան հոգին։ Դրա համար նրանք աշխատում են ներքնապէս ուժեղացնել թուրքիան, իսկ այդ յաջողելու համար ամենից առաջ անհրաժեշտ է Տաճկաստանը թրքացնել, այսինքն՝ այստեղ չպիտի գոյութիւն ունենան տարբեր աղգութիւններ, կրօններ եւ լեզուներ։

Տաճկաստան թրքացնելն է հիմնական տատճառը, որ ոչ իսլամ եւ ոչ թուրք տարբերը արտաքսում, հալածում և ջարդում են թուրքիոյ մէջ, և նրանց տեղերը լիցւում են թուրքերով, Բնական է, որ այդ

քաղաքականութեան հետեւող թուրք գործիչները, ուրոնք Հայաստանից քչել են բոլոր հայերին, չուզենան հայերի վերադարձը դէպի իրենց օճախը և մնան իրեւ երգուալ հակառակորդներ անկախ եւ ազատ Հայաստանի։

Որքան էլ մեծ աշխատանքներ թափուեն, որքան էլ դրամ և արիւն ծախսուեն, որքան էլ ոչ իսլամ տարրերը բնաջնջուեն կամ քշուեն համաթուրանական ճանապարհներից հեռու, մարգարէ չզէտք է լինել ոչ էլ հմուտ քաղաքագէտ ասելու համար, որ համաթուրանական ձգումները բանաստեղծական երեւակայութիւններ են և նրանց իրականացումը՝ ցնորքին է պարզապէս։

Եթէ կրօնական երքերով տարուած Արեւելքի այլազան և բազմապիսի ժողովուրդները չեն թառկուեցին համիսլամութեան քարոզին և Արեւելքի այդ հզօրագոյն զէնքը փշրւեց ժողովուրդների քաղաքական ձգտումների և ուրոյն ազգային-ցեղական շահերի առաջ, ապա համաթուրանականութիւնը, որպէս բանաստեղծական ցնորք և մի խումբ արիւնոտ քաղաքական գործիչների քմայքոտ ցանկութիւն, առաւել ևս դատապարտուած է մահուան։

Այս մահավճիռը մենք տալիս ենք համաթուրանականութեան այն հասարակ պատճառով, որ այդպիսի մի հսկայ ծրագրի գործադրութեան ու յաջողութեան համար առ հրաժեշտ է նախապէս ունենալ մի կորիզ, որ իր հզօր բարոյական, անտեսական, Փիզիքական և մշակոյթային կարողութիւններով ի վիճակի լինէր օղակ հանդիսանալ և կապել իրարից հեռու եւ ծագումով տարբեր ժողովուրդներին։

Այս բոլորից զատ, այդ տարբեր ժողովուրդներն ու երկիրները իրար կապելու համար կենսական ան-

հրաժեշտութիւն է ունենալ հաղորդակցութեան կանոնաւոր միջոցներ, և, որ գլխաւորն է, քաղաքական, տնտեսական և այլ պայմանների նոյնութիւնն ուներդաշնակութիւնը։ Այս բոլորը անտես են առնում համաթուրանականութեան գաղափարախօսները և միայն հիմք են ընդունում իսլամ ազգերի և ցեղերի թրքական ծագումը։

Մեր միաքը աւելի հիմնաւորելու համար վերը նենք Տաճկաստանը, որպէս կորիզր համաթուրանականութեան։

Ներկայումս Թուրքիոյ մէջ մօտ ինը միլիոն ժողովուրդ կայ, որից հազիւ 5—6 միլիոնը Թուրքեր են։ Ճիշտ է, որ Թուրքը իրեւ խաչնարած և կիսաերկրագործ ժողովուրդ, ունի որոշ առաւելութիւններ, ինչպէս, օրինակ, նրա ռազմականութիւնն է, բայց նա իրեն դեռ Թուրք չի զգում, նրա մէջ դեռ նոր է միայն զարթնել ազգային գաղափարը, նոր է գիտակցում իր ծագումը, որպէս ազգային միաւորի։ Աւելին, Թուրք ժողովուրդի խոշոր տոկոսը դեռ լոկ իսլամ է։ Թրիստոնեայ Թուրքեր չկան, որովհետեւ Թուրքի հասկացողութեամբ այդպիսիները դաշտարում են Թուրք մինելուց։ Նոյնիսկ ոչ միւննի Թուրքը կորած է Թըրքութեան համար։

Երբ մի ժողովուրդ չի հասել ազգային հասկացութեան մինչեւ իսկ այս աստիճանին, նա անկառող է կորիզր գառնալ անըմբռնելի համաթուրանականութեան համար։ Մինչեւ Թուրք ժողովուրդը գիտակցութեան գայ, մինչեւ նա քաղաքակրթութիւնը ու դառնայ կուռ ազգային միութիւն, դեռ շատ երկար ժամանակ և աշխատանք է հարկաւոր։

Կայ եւ մի այլ կարեւոր հանգամանք, որ նկատի չի առնուում։ Այդ այն է, որ Թուրք ժողովուրդի կրօն-

քը իր ստեղծագործութիւնը չէ, նրա գիրն ու գրականութիւնը իրենը չեն, անգամ թուրք ժողովուրդի ծոցից ծնուած զինուորական աշխարհակաները զտարիւն թուրքեր չեն։ Նրա լեզուն ու կրօնը, նրա գիրն ու գրականութիւնը փոխ առնուած են արաբից, պարսկից։ Բացի այս, Թուրք ժողովուրդը միշտ աշակերտել է հային, յոյնին, սովորելով նրանցից երկրագործութիւն, վաճառականութիւն, արհեստ, գեղարվեստ և ճարտարապետութիւն։ Ներկայիս այդ ուսուցիչները չկան, և Թուրք ժողովուրդը մնում է կիսաւարտ, կիսակիրթ ու գեռ կիսափայրենի դրութեան մէջ։

Թուրք ղեկավարները մանկամտօրէն կարծում են, որ Թուրք ժողովուրդը մինակ, միատարր մնալով՝ կարող կը լինի դրաւորել իր ինքնուրոյն ազգային ըստեղծագործութիւնը, բայց նրանք չարաչար սխալուում են։ Թուրանական ցեղի գարաւոր պատմութիւնը ցոյց է տալիս, որ նա զուրկ է ինքնուրոյնութիւնից, նա միշտ կարօտ է եղել ուրիշի օգնութեան, միշտ փոխ է առել իր հարեւան քաղաքակիրթ ժողովուրդներից այն, ինչ որ ունէր և ունի։ Ճիշտ է, մի ժողովուրդ, որ ենթակայ է իրենից բարձր կուլտուրա ունեցող ժողովուրդի կամ փոխ է առնում նրա մշակոյթը, ազգուում է նրա հոգեկան ստեղծագործութիւնից, գեռ չի նշանակում, որ նա դատապարտուած է ոչնչացման, ձուլման։ Բայց անառարկելի է այն, որ նա չի կարող ուրիշներին տալ իր ընդօրինակածը. այն, ինչ որ իրենը չէ, ինչ որ իր ստեղծագործութիւնից չի բղխում։

Համաթուրանական գաղափարը իրագործելու համար պէտք է ունենալ հոգեկան անբաւ պաշար՝ միշտ տալու և ոչ թէ առնելու։ Եթէ Թուրքը ուզում է ի-

րեն կապել կամ ձուլել կիրկիզին, սարդին, բաշկիրին, Բագուի թաթարին, — պէտք է նրանց տայ իր սեփական լեզուն, կրօնն եւ պատմութիւնը, գրականութիւնն ու գեղարուեստը, ճարտարուեստն ու երերագործութիւնը ևլն. ևլն. : Բայց այս ամէնի փոխարէն թուրքը ի՞նչ է տուել, — միայն և միմիայն սպաներ, չափուչներ և ուրիշ ոչինչ:

Այս, հնչ որ թուրքին անհրաժեշտ է, փոխ է առնուած ուրիշից՝ պարսիկից, ուս սից, չինացուց, հնդիկից ու գեռ շարունակում են ընդօրինակել և իւրացնել, և որքան շատ են փոխ առնուած օտարներից, այնքան աւելի են հեռանուած, խորթանուած իրենք իրենցից և այն ժողովուրդներից, որոնց ուզում են ձուլել, կապել իրենց հետ՝ յանուն համաթուրանական գաղափարի յաղթանակի:

Այսպէս, ուրեմն պարզ չէ, որ երբ թուրքը ի՞նքը վտանգի տակ է, ենթակայ ձուլման և ոչնչացման, ինչպէս կարող է ձուլման և վտանգի ենթարկել թուրանական այս ցեղերին, որոնց միացումից նա սպասում է համաթուրանական ծրագրի հսկայ իրագործումը :

Հայերին եւ յօյներին վտարելով, թուրք մտաւորականները կարծում են, որ այլեւս ոչ մի խոչընդուռ չկայ համաթուրանակութեան ճանապարհի վրայ և նրանք անարգել ու հանգիստ կարող են իրագործել այդ ծրագիրը: Սակայն իրականութիւնը այլ բան է ասում:

Մրեւի պէս պարզ է, որ հինգ-վեց միլիոն թուրքի դիմաց երկութուկէս-երեք միլիոն այլ ազգութիւններ կան համաթուրանական ճամբին վրայ, որից մէկուկէս-երկու միլիոնը քրտեր են: Այս լեռնական ժողովուրդը թէեւ կրօնքով իսլամ է, բայց նրա ցեղային

բնագործ և ազգային գոյնը նոյնքան ուժեղ կերպով շեշտուած է, որքան հայերինը և մտածել նրան ձուլել և օսմանցի գարձնել առ նուազն միամտութիւն է: Այդ ժողովուրդը ապրած է Ասորեստանի, Պարսկաստանի, Բիրզանգիպիայի և Հայաստանի գերիշխանութեան ներքեւ, և, հակառակ այս բոլորին չի ձուլուել, չնայած այս աշխարհակալ երկրների կուլտուրական, քաղաքական և ռազմական հզօրութեան:

Երբ այդքան փորձութիւններից յետոյ քիւրտ ժողովուրդը պահել է իր ինքնութիւնը, շատ բնական է, որ սրանցից յետոյ էլ պիտի կառող լինի պահպանել:

Ուրեմն, ինչ պէտք է անել այս ժողովուրդին ձուլելու համար: Երիտասարդ-Թուրքերը այդ լաւ գիտեն: Նրանք մի միջոց ունեն միայն, կոտորել քրտերին, ինչպէս արին հայերին: Եւ սրգեն թուրքերը այդ ուղղութեամբ մի քանի փորձեր արին, 1915 թ. կոտորելով Յօհանանի և Ճըգիրի քրտերին: Սակայն եթէ թուրքերը այս արիւնոտ ծրագիրը գործադրեն սիստեմատիկաբար նաև քրտերի նկատմամբ, այդ բանը նրանց էժան չի նստի:

Մի բոպէ ենթագրենք. որ թուրք գեկավարները ջարդերի միջոցով քրտերն էլ վերցրին համաթուրանական ճամբու վրայից և իրենց անկաշկանդ զգացին ծաւալուելու Տաճկաստանից դուրս: Տեսնենք, թէ այստեղ ինչ անյաղթելի դժուարութիւններ են սպասում համաթուրանական ծրագրի իրագործման համար:

Ճիշտ է թուրքերի այն կարծիքը թէ՝ շատ հաբատութիւններ թուրանական ծագում ունեն, օրինակ, Հնդկաստանի ուաջաները, Պարսկաստանի կաշառները, Աֆղանստանի և Բուխարայի էմիրները և Զինաստանի մօնղոլ իշխանները: Բայց միթէ սա կարող է հիմք

ծառայել քաղաքական մի հսկայ ծրագրի իրագործան համար, ինչպիսին է համաթուրանական արկածախնդրութիւնը:

Ճիշտ է և այն, որ բացի թուրքերից, Ուրալ-Ալթայեան ցեղից սերած են բազմաթիւ մանր ցեղեր ու ժողովուրդներ, որոնց թիւը 45 միլիոնի կը հասնի, ինչպիսիք են՝ կալմիկները, բուռուջայթերը, տունգուզները, մանչուրները, այնուաները, եակուտները, կիրկիզները, գունգաները, զարազալրակները, ուզբէկները, սարդերը, թուրքմէնները, Սիբիրի, Կաղանի, Ղրիմի, Անդրկովկասի ու Պարսկաստանի թաթարները եայլ եայն:

Համաթուրանական գաղափարախօսների բացարձակ տգիտութիւնը ակներև է: Նրանք իրենց գաղափարի հիմք են ընդունում ոչ թէ ժամանակակից ցեղագրական, ազգագրական, քաղաքական և ընկերային պայմանները, այլ վերը թուած ցեղերի թուրանական ծագումը և այդ ժողովուրդների և ցեղերի հարստութիւնների սկզբնաւորութիւնը:

Մեր միտքը պարզելու համար մի քանի օրինակ բերենք:

Գերման ժողովուրդը համագերման ծրագիր ունի. Յունաստանի և Բոլգարիայի վրայ իշխող հարստութիւնները գերման ծագում ունեն, բայց Գերմանիան բնաւ յոյն ու բոլգար ժողովուրդներին գերմանացի չի համարում և ոչ նոյնիսկ համագերմանական գաղափարի համակիրներ:

Համաօլաւոնականութեան ծրագիր ունի և Ռուսաստանը, որ երկար ժամանակ աշխատել է միացնել սլավոն ցեղերը, որոնք, աւելի քան թուրանական ցրուած ցեղերը, ապրում են կողք-կողքի. իրարից լեզով, ազգային առանձնայատկութիւններով քիչ են:

Թարբերուում, միշտ շփման մէջ են իրար հետ, եւ կուլտուրայով անհամեմատ բարձր են թուրանական ցեղերից, բայց ո՞րչափով արդեօք այդ գաղափարը իրագործուեց, մի գաղափար, որ այնքան մօտիկ ուշադրաւ անցեալ ունի և այնքան տխուր պատմութիւն իր ետեւը, երբեմն հզօր Ռուսաստանը, որ Տաճկաստանի պէտիրեն համարում էր համասլաւոնականութեան հաստատուն կորիզը, ոչ միայն անկարող եղաւ իրագործել այդ հսկայ ծրագիրը — մի հզօր բոռնցք Արեւելքի գլխին — այլ և հակառակ արդիւնքը ունեցաւ: Փաստը մեր աշքի առջեւն է:

Այժմ սլաւոն ցեղերն ու ժողովուրդները իրար աւելի կատաղի թշնամի են. քան իրենցից բոլորովին տարբեր ժողովուրդները: Օրինակ. Սերբիան և Բուգարիան, Լեհաստանն ու Ռուսաստանը, չէխերն ու սլաւոնները եայլն եայլն: Զէ՞ որ այս ժողովուրդները սերած են նոյն արմատից, նոյն ցեղական ծագումն ունեն:

Համաթուրանական գաղափարն իր բնոյթով եւ էութեամբ հեռաւոր նմանութիւն անգամ չունի մեր տուած օրինակին. նա աւելի անկայուն է իր հիմքերով, աւելի փխրուն է ու երազային, մի հանգամանք, որ բացարձակապէս անտեսում է քաղաքականապէտ տհաս և արկածակիրները երիտասարդ-թուրքերի կողմից:

Համաթուրանական գաղափարի ճշգրիտ պատկերը տալու համար տարօրինակ ոչինչ ասած պիտի լինէինք, եթէ մի օր մենք, հայերս, վեր կենացինք և յայտարարէինք. — մենք արիական ցեղից ենք ծագել, և որովհենք հետեւ արիական ցեղին պատկանում են նաեւ հնդիկները, աֆղանները, պարսկիները, բելուչիստանցիները, Իեռնական կովկասցիները, վրացիները, քրտերը եւ

բօշաները, ապա ուրեմն պէտք է միացնել բոլոր արիական ցեղերը, որոնք թւով 266 միլիոն են և ապրում են մէկ տարածութեան վրայ, կողք-կողքի, առանց բաժանուած լինելու տարբեր ցեղերով և ժողովուրդներով, առանց աշխարհագրական արգելքներ և արուեստական խոչընդոտներ ունենալու:

Որքան ծիծաղելի է այս միտքը, նոյնքան թերեւս էլ աւելի ծիծաղելի ու անիրազործելի է նաև համաթուրանականութեան գաղափարականութիւնը:

Երիտասարդ թուրքերը և համաթուրանականութեան գաղափարախօսները աւելի համոզիչ, աւելի անառարկելի ճշմարտութիւն ասած կը լինէին, եթէ բացարձակօրէն յայտարարէին, որ մարդկութիւնը մի ծագում եւ մի արմատ ունի, և որովհետեւ իրենք էլ այդ արմատի մի շառաւիզն են, ապա ուղում են ամբողջ մարդկութիւնը դարձնել համօմանցիական, համիւլամական եւ համաթուրանական մի ահոելի գանգուած՝ միատարր ու հզօր:

Ու համաթուրանականութիւնը անիրազործելի եւ մահուան դատապարտաւած մի գաղափար է, այդ մասին երկու կարծիք չի կարող լինի. Սակայն, այնուամենայնիւ, տեսնենք թէ այդ արկածախնդրութիւնից ո՞վ է ամենից շատ տուժողը և ո՞վ է օգտազրը:

Յայտնի է, որ թուրքերը համօմանցիական, համիւլամական և համաթուրանական սկզբունքներով երկու գլխաւոր նպատակի են ձգտել. նախ՝ ստեղծել ներքնապէս ուժեղ և միաձայլ ազգութիւն, և ապա՝ հզօրանալով հետզհետէ՝ տարածուել գէպի Արեւելք եւ գէպի Արեւմուտք:

Մենք տեսանք, որ այդ սկզբունքները չարդարացրին առաջին նպատակը. ընդհակառակը, Օսմանեան կայսրութեան բաղկացուցիչ տարրերը իրարից խորթա-

ցան, հեռացան և դարձան թուրք կառավարութեան մէկ մէկ կատաղի թշնամիներ, Նրանք գերազասեցին մեռնել, ոչնչանալ, բայց չմնալ օսմանեան բռնութեան տակ:

Եւ հետեւանքն այն եղաւ, որ երբեմնի հզօր օսմանեան կայսրութիւնից, որ ունէր 3,600,000 քառակուսի մղոն տարածութիւն եւ 45—50 միլիոն ժողովուրդ, մնաց հազիւ ունի 750 հազար քառ. մղոն եւ 8—9 միլիոն ժողովուրդ: Այդ ժողովուրդը իր աշխատանքով, իր երկրով եւ նրա հարստութիւններով վաստօրէն վաճառքի է հանուած օտար հզօր պետութիւններին. Թուրք կառավարութիւնը չէ այդ ժողովուրդի տէրը, այլ նրանք, որոնք շահագործում են վողուրդի տէրը, այլ նրանք, որոնք շահագործում են թէ թուրք ժողովուրդը և թէ թուրք ժողովուրդը: Թուրք ժողովուրդը տգէտ էր և աղքատ, և եթէ նա մի կերպ կարողանում էր ապրել, այդ էլ չնորհիւ գրկից ու ստորագաս ժողովուրդների թափած ջանքերի, որոնց վտարումն ու աչնչացումը նոյն չափով ազգեց և թուրք ժողովուրդի տնտեսութեան, նրա քաղաքակրթութեան ժողովուրդի տնտեսութեան ավագութեան ավագայի վրայ:

Թուրք զեկավարներից Ալիզա Նուրին յայտարարում է ամերիկացիներին.

— «Աննէք ձեզ հաց կը տանք, իսկ դուք նրանց հող տուեք»:

Իսկ ձեմալ Նուրին աւելացնում է.

— «Ներկայումս, երբ հայկական հարցի կամ հայերի մասին մի բան եմ լսում, Էնկիւրի մինտարի վրայ պառկած՝ կուշտ ծիծաղում եմ».

Սակայն Տաճկաստանի այսօրուայ վարիչները, որոնք համաշխարհային ծրագիրներ յղանալու և որոնց աշխարհային ծրագրին ունեն, փոխանակ ծիծաղելու,

թող լուրջ մտածեն և հարց տան իրենց . միշտ է որ հայերին կոտորելով՝ իրենք շահեցին , արդեօք թուրք պետութիւն ու ժողովուրդը օգտուեցին այդ արիւնատերագրի իրագործումից :

Եթէ Ռիզա Նուրիներն ու Ճեմալ Նուրիները շրջանայեաց , հասուն քաղաքագիտ և ուղղամիտ ղեկավարները լինէին , ի հարկէ , բացասական պատասխան պիտի տային այդ հարցումին և ամօթահար պիտի խոստովանէին իրենց այն մեծ սխալը , որ գործեցին , նախ պատերազմին մասնակցելով և ապա՝ հայերին կոտորելով :

Համաշխարհային պատերազմին մասնակցելով , թուրքերը ոչ միայն ունեցան անտեսական և ֆիզիքական ահռելի կորուստներ , այլ եւ նրանք օսմանեան կայսրութիւնը չորս կողմից անդամահատեցին : Ներկայ Տաճկաստանը իր մէջ պարունակում է միայն Պոլիսն իր շրջականերով . Անատոլուն , Հայաստանը եւ Քիւրտիսատանը , ընդամենը՝ մօտ 8 հարիւր հազար քառ . մղոն տարածութիւն , 1914 թուրից մինչեւ այսօր այս երկրից պակսած (կոտորուած , մեռած ու աքսորուած) կայ առնուազն երեք ու կէսից մինչեւ չորս միլիոն ժողովուրդ (հայ , յոյն , քիւրտ ևլն .) . այդ նոյն ժամանակաշրջանում պատերազմների և այլ աղէտների հետեւանքով թուրքերը ունեցել են մէկ ու կէս , երկու միլիոն մարդկային կորուստ :

Յայտնի է , որ առաջաւոր Ասիան . յատկապէս Տաճկաստանը և մասնաւորաբար Պոլիսն ու ծովափեայ այլ վաճառաշահ քաղաքները իրենց բնական հարստութիւնների պատճառով միշտ էլ կոռւախնձոր են եղել հզօր ու աշխարհակալ պետութիւնների համար . թուրքերը , ստիպուած , միշտ զինուած պահակի դեր են կատարել , որպէսզի արդէն իսկ չափազանց կրծա-

ուած եւ մասնաւուած Տաճկաստանը նորից չենթարկուի նոր փորձութիւնների , նոր կրծատումների և նոր դրաւումների :

Արդ , կարո՞ղ են արդեք թուրքերը իրենց ազգաբնակութիւնից — թուով զգալիօրէն նուազած — այնքան զինուորական ուժ հանել , որ ի վիճակի լինեն դոնէ ինքնապաշտպանողական կոփւներ մղել : Ի հարկէ , ո՞չ : Նրանք չեն կարող նոյնիսկ ներկայ զօրքը պարենաւորել և սպառազինել , մի զօրք , որի յաջողութիւնները պատահական են , որի կոփւներն ու յազմանակները գիպուածօրէն միայն զուգորդուել են Տաճկաստանի համար ստեղծուած բարենպաստ պայմանների հետ . Բայց այդ . թէեւ կրծատուած է Տաճկաստանը ազգաբնակչութեամբ , սակայն նրա ուազմական ճակատները մնացել են ճիշտ նոյնը , ինչպէս , օրինակ , Սուրբոյ , Միջագետքի , Պարսկաստանի , Կովկասի , և այլ ճակատներն են , իսկ ծովերի , նեղուցների եւ եւրոպական Թուրքիոյ հին ճակատները միշտ կան ու միշտ էլ պիտի մնան :

Պատերազմից առաջ քիչ վերը յիշատակած ճակատները (նորերը) գոյութիւն չունէին . զրանից զատ , թուրք ղեկավարները գեռ չէին իրագործել կոտորածների դժոխային ծրագրը , և այդ երկրում ապրում էր ոչ-հոլամ մի հոծ զանգուած , որ միշտ և ամէն բանում իր օգտակարութիւնն էր բերում օօմանեան կայսրութեան : Հեռուն չգնալու համար՝ հէնց վերցնենք հայերին :

Թուրք ղեկավարները շատ լաւ գիտեն , որ 1908 թուրից զինուորագրութեան օրէնքը տարածուեց նաեւ հայերի վրայ , մի օրէնք , որ մինչ այդ գոյութիւն չունէր . շնորհիւ երկրում տիրող յոտի վարչաձեւին : Թուրք «հասուն» և «հեռատես» մտաւորականնե-

բին ծանօթ է և այն, որ այդ օրէնքով օսմանեան կառավարութիւնը հայերից կարող էր մօտ 200 հազար զինուոր ստանալ, մի ուժ, որ չի կարելի անտեսել: Ուրեմն, միմիայն հայերից թուրքիան հանում էր տասը տոկոս զինուոր, որ թրքական զինուորական ուժերի երեսուն տոկոսն է կազմում. մի ուժ, որ երկրի պաշտպանութեան գործում իր շօշափելի դերը կարող էր կատարել:

Թուրքիան ոչ միայն իմաստութիւն չունեցաւ այդպիսի մարտունակ խոշոր ուժից օգտուելու, այլ եւ բնաջնջելով երկու միլիոն հայ ժողովուրդը, մէկ կողմէց՝ աւերեց, քանդեց հսկայական շէն և բարգաւաճ նահանգներ, երկիրը զրկեց շինարար ձեռքերից, միւս կողմէց՝ կոտորածներից ու հալածանքներից մազապուրծ եղած տաճկահայ հատուածները լարեց ու զինեց իր գէմ: Թէ՛ անդիլական բանակի հայ կամաւորները, թէ՛ ֆրանսական հայ զօրամասերը (Կիլիկիա) և թէ՛ կամաւորական գնդերը 90 առ հարիւրով հալածուած զոհերն էին թուրք յոտի քաղաքականութեան: Թուրք մտաւորականութեան որոշ հատուածները շատ ազդու ձեւով այս պարագան են շեշտամշարունակ, թէ հայկական վերոյիշեալ զինուած բանակը մի գեղեցիկ օր հեշտութեամբ կարող էր դաւանեն և խոշոր չարիք գառնալ իրենց համար: Մի ըստ պէ ընդունենք որ այս անհիմն պնդումն ճիշտ է. թէ հայ զօրաբանակն ու ժողովուրդը դաւածաններ էին և ենթագրենք, որ թուրքերը շարունակէին հայ ժողովուրդի վրայ նայել այն աշքով, նրա հետ վարուել այն ձեւով, ինչպէս մինչեւ 1908թ. նայել և վարուել էին սուլթաններն ու թուրք պետութիւնը:

Անհերքելի է, որ նոյնիսկ այս գէպում, դաժան հալածանքների ու ճնշումների տակ անզամ հայ ժողո-

վուրդը, որպէս կթան կով պիտի շարունակէր կերակրել թուրք ժողովուրդն ու պետութիւնը: Վերոյիշեալ մտաւորականները անշուշտ չեն կարող ժխտել, որ հայերը ամենապարտածանաչ հարկատուներն են եղել և տասը թուրք ընտանիք այնքան հարկ չի վճարել պետութեան, որքան մի հայ ընտանիքի Եթէ գումարելու լինենք հայ ընտանիքների վճարած բազմատեսակ տուրքերի քանակը՝ աշարը, ամելի վերկիսին, գիշահարկը, հողային և այլ օրինաւոր ու ապօրէն տուրքերը, այն ժամանակ պիտի գանք այն անժխտելի համոզման; որ ամէն մէկ հայ ընտանիքի տուած տուրքով թուրք կառավարութիւնը կարող էր պահել, եթէ ոչ երկու գոնէ մէկ տաճիկ զինուոր, եւ եթէ ընդունենք, որ երկու միլիոն հայ ժողովուրդը բաղկացած էր 4000 ընտանիքներից, ապա ուրեմն այս ընտանիքների տուրքով միայն կառավարութիւնը կերակրում ու պահում էր 4—500 հազար զօրք: Եթէ հայերը նոյնիսկ դաւածաններ լինէին, դարձեալ թուրք պետական շահերը պահանջում էին նրանց չկոտորել, այլ, ընդհակառակը, պահել և օգտագործել. մանաւանդ որ՝ այդ ժողովուրդի հաշուով պահուող զօրքի աննշան տոկոսով միշտ կարելի էր ի պահանջել հարկին, այդ նոյն ժողովուրդին՝ «կարգի հրաւիրել»:

Բայց չէ որ հայ ժողովուրդը երբեք դաւածան չի եղել և պահանջել է միայն ամէն պետութեան ընականոն կեանքի համար անհրաժեշտ նկատուած արդարութիւնն ու աղատութիւնը:

Նախ քան հայկական կոտորածների ծրագիրն յղանակն ու գործադրութեան անցնելը, թուրք մտաւորականները արդեօք խորհե՞լ ու մտածե՞լ էին այն մասին, որ հայկական կոտորածներով երկիրը զրկում էին լաւագոյն դէպում 200 հազար հայկական ուազմաւ-

նակ զօրաբանակից, վատագոյն դէպքում՝ 4—500 հազարնոց թուրք զօրքը պահելու միջոցներից։ Գիտէին, որ դրանով կոտրում էին թուրքիոյ մէջքը ռազմական տեսակէտից և բաց անում իրենց երերի դռները արտաքին թշնամիներիհառած։ Դժբախտաբար, այդ պետութեան պատերազմի շրջանի տիսուր պատմութիւնը, կրած մարդկային, անտեսական և հողային անչափելի կորուտները, ինքնին մի ակնբախ բացասական պատասխան են մեր հարցումներին, իսկ այսօրուայ քեմալականն զեկավարների վարքագիծը՝ շարունակութիւն է երէկուայ անմիտ քաղաքականութեան։ Ինչպէս երէկ, նոյնպէս և այսօր, վերոյիշեալ կործանարար քաղաքականութիւնից օգտուեցին արտաքին թշնամի պետութիւնները և ամենից շատ՝ մեմալի այսօրուայ բարեկամ ու զինակից, բայց թուրքիայի յաւիտենական թշնամի Ռուսաստանը։

Ճշմարիտ էր Մատէքը, երբ ի լուր համայն աշխարհի յայտարարում էր թէ «հայկական, կոտորածները անհրաժեշտութիւն էին»։ Սակայն ոչ թէ «թուրքական անկախ պետութեան և ժողովուրդի գոյութիւնը ամրապնդելու տեսակէտից», աւելացնենք մենք, այլ պարզապէս Ռուսիոյ դարերի ընթացքում ցուցադրած նուաճողական ծրագիրը զիւրութեամբ գէպի հարաւ եւ արեւելք տարածելու տեսակէտից։ Զէ՞ որ այժմեան հայկական աւերակ ու դատարկ հինգ վիլայէթները լաւագոյն միջոցն է, որ Ռուսիան մասամբ իրականացած տեսնի «Հայաստանն առանց հայերի» տիրապետելու իր վաղեմի ցանկութիւնը։

Հայկական Եղեռնի կազմակերպողները գուցէ ձրգում էին թուրք «հողազուրկ» զիւրացիութեան հողային կարիքները բաւարարել, կամ անող ապագայ սերունդի համար հողային փօնտ ստեղծել։ Եթէ այս՝ ա-

պա այս դէպքում ևս թուրք զեկավար տարրերը հայ ժողովուրդը զոհ են դարձել իրենց անյատակ տգիւառութեան և խորը անտեղեակութեան։ Ում յայտնի չէ, որ Տաճկաստանի լայնատարած հողամասերի վրայ ազգաբնակչութիւնը անհամեմատ նոսր էր, քան ուեւէ երկրի մէջ։ Պատերազմից առաջ երկրի մէկ քառակուսի մղոնի վրայ ապրում էր 15, իսկ այժմ 10 մարդ, այն ինչ Փոքր Ասիայի, Քիւրտիստանի և Հայաստանի մէկ քառակուսի մղոնը, առանց ճարտարուեստի զարգացման, կերակրել կարող է առնուազն 80 մարդ։ Վերջապէս թուրքերը մեծ մասամբ խոշոր հողամէրեր էին և ապրում էին հայ աշխատաւորութեան հաշուխն՝ ուրեմն ի՞նչ խօսք կարող էր լինել նրանց հողային կարիքների մասին։ Անմտութիւն էր նաև մտահոգուել աճող սերունդի հողային կարիքների հարցով, քանի որ թուրք ժողովուրդը վաղուց ի վեր ոչ միայն չի աճում, այլ և նուազում է։ Եւ եթէ նա չփոխէ իր կենցաղաձեւը, իր ձգտումները, իր յուսի բարքերն ու սովորութիւնները՝ ապա զատապարտուած է անխուսափելի մահուան։ Ոչ Անդրբայի բռնի ամուսնութեան օրինագծերը, ոչ բազմածնութեան, ոչ էլ որդենութեան խրախուսանքները չեն կարող թուրք ցեղի գոյութեան սպառնացող վտանգը վերացնել։ Աըրանք կիսամիջոցներ են միայն և ուրիշ ոչինչ։ Ապացոյց՝ Ֆրանսան, որը շատ աւելի կտրուկ ու բանաւոր միջոցներով է կռւում նոյն չարիքի գէմ և սակայն էլի տարեկան 300 հազար մարդով նուազում է։ Արդ, եթէ Տաճկաստանում սակաւահողութիւն չկար, եթէ թուրք տարրը ոչ միայն մեր օրերում, այլ և երկու գար շարունակ հողի պակասութիւն չպիտի զգար, երբ մանաւանդ ազգաբնակչութեան թուրք հատուածի նըւազումը ազատ հողային ֆօնտի պահանջ չէր առաջա-

դրում՝ էլ ինչո՞ւ համար դատարկուեցին ու աւերածութեամ ենթարկուեցին հայկական նահանգները . ինչո՞ւ համար ստեղծեցին այնպիսի դրութիւն, երբ այսօրուայ թուրքիոյ ազգաբնակչութիւնը իր տիրապետած հողերի մէկ տասներորդ մասն անգամ չպիտի կարողանայ մշակել . Թեմալներն ու Ռէուփ պէյերը կարծում են, թէ իրենց իշխանութեան տակ գտնուած ընդարձակ ամայի հողերը պիտի շարունակեն մնալ այդպէս անվթար՝ մինչեւ որ կամ թուրք ժողովուրով աճելով կը ծաւալուի ու կը տիրանայ նրանց և կամ զրսի թուրանական ցեղերն ու իսլամները կը ներգաղթեն և կը բռնեն այդ տարածութիւնները . Առաջին ենթադրութեան խախուտ հիմերը տեսանք . երկրորդ ենթադրութիւնը նոյնպէս միանգամայն անհիմն է, որովհետեւ զրսի իսլամներն ու թուրանական ցեղերը ապրում են այնպիսի վայրերում, ուր թէ շատ աւելի ազատ ու արգաւանդ հողեր, տնտեսական շատ աւելի բարգաւաճ վիճակ և ազգային ու քաղաքական շատ աւելի ազատ կարգեր կան, քան Տաճկաստանում . Ի՞նչը պիտի զրաւի ու բերի այս ժողովուրդներին Տաճկաստան . Զէ՞ որ և ոչ մէկ լուսաւոր հեռանկար այս երկրում նրանց չի սպասում:

Զէ՞ որ նրանց բոլորի յիշողութեան մէջ թարմ են Տաճկաստան գաղթած չէրքէցների ու լեռնականների կրած զրկանքները, հալածանքները և այդ իսկ պատճառովնրանց ցուցադրած բողոքի, ըմբռութեանց արիւնոտ գրուագները :

Փաստ է, անողոք փաստ, որ հայկական վիլայէթները, Թիւրտիստանի խոշոր մասը ամայի ու անմարդաբնակ է դարձել և որ քեմալական իշխանութիւնը իր միջոցներով ուեւէ կերպ այդ բաց տարածութիւնները լիցնել երբէք չպիտի կարողանայ:

Միւս կողմից՝ այսօրուայ քաղցած Եւրոպայի ժողովուրդներն ու գիշատիչ պետութիւնները հազիւ թէ հանգիստ ձգեն Թուրքիան և նրա հարուստ, ընդարձակ և անմարդաբնակ հողերը .

Բնութիւնը ազատ տարածութիւն չի սիրում, իսկ մարդիկ, այն էլ սոված մարդիկ, ազատ երկիրներ ազատ չեն ձգում, ի՞նչ անընական ու անհնարին բան կայ ուրեմն այն երեւոյթի մէջ, որ տարեկան մի քանի միլիոն գաղթական փոխանակ Ամերիկա և այլուր ուղարկելու, Եւրոպան վաղը իր երթը գէպի Տաճկաստանի ազատ հողամասերը ուղղի: Ամենից գիւրինն ու բանաւորը Ռուսիոյ առաջխաղացումը կը լինէր, որովհետեւ վերջինս արեւելեան դատարկ նահանգներում հետամտում է ոչ միայն տնտեսական, այլ եւ քաղաքական նպատակներ: Զէ՞ որ զեռ 1917 թ. նա փորձում էր իրականացնել եփրատեան կազակութեան յայտնի ծրագիրը: Իսկ եթէ իրերի անխուսափելի բերումով այդ դատարկ տարածութիւնները պէտք է լեցուեն թուրք պետութեանը օտար և անհարազատ տարրերով, որոնք իրենց թիկունքին որպէս հզօր յենակ պիտի ունենան եւրոպական մեծ պետութիւնները, մի՞թէ հէնց իրեն թուրք պետութեան շահերի տեսակէտից աններելի սխալ չէ՞ր հպատակ հայ ժողովուրդի տեղահանութիւնն ու կոտորածը, մի ժողովուրդ, որ բազմիցս իր աշխատութեամբ ու ստեղծագործական կարողութիւններով ցոյց էր տուել, թէ յետի մնում նոր եկող ուեւէ ժողովուրդից: Եւ, վերջապէս, ո՞ր զրութիւնն է համապատասխանում թուրք պետութեան ու ժողովուրդի շահերին . արեօք հայ, թէկուզ «դաւաճան» ժողովուրդի գոյութիւնը այսօրուայ դատարկ հողամասերում, թէ՞ վաղուայ իտալցի, գերմանացի կամ ոուս գաղթականի ներկայութիւ-

Նը թուրքիայում, որոնք փաստօրէն իրենց պետութիւնների տնտեսական և քաղաքական նուածումների առաջապահ գնդերն են հանդիսանում:

Կայ մէկ հանգամանք եւս, որ թուրքերի ուշադրութիւնից չպիտի վրիտի. մի հանգամանք, որ Մուսաֆիա Քեմալն ու Ալիլէյման Նազիֆն անգամ մոռացութեան չեն տուլիս. այդ այն է, որ թուրք ժողովուրդը իր տիրապետութեան օրից մինչեւ այսօր եղել է զինուորական ժողովուրդ, եւ այդ մարզի վրայ է արտայայտել իր առանձնակի ընդունակութիւնները. Դարերի ընթացքում նրան անհաղորդ են եղել՝ երկրագործութիւն, վաճառականութիւն, ճարտարուեստ, արհեստներ ու գեղարուեստ. ազդակներ, որոնք ամէն մէկ երկրի ու ժողովրդի անկախ գոյութեան պատուանդանն են կազմում և որոնք գրեթէ ամբողջութեամբ բացակայել են թուրք ժողովուրդի ստեղծագործական աշխարհում: Ո՞վ պիտի այդ պակասը լրացի. Թուրք զեկավարները այն թիւը ըմբանումն ունեն՝ թէ իրենց ժողովուրդի ընդունակութիւնները այդ ուղղութեամբ պիտի կարողանան զարգացնել. այդ ըմբռնումը եթէ ուեէ մէկ հրաշքով իրականութիւն դառնայ, նա իրականութիւն կը դառնայ ոչ թէ վաղը, այլ գարերի տքնածան աշխատանքից յետոյ: Ռուս ժողովուրդն անգամ, որ այդ տեսակէտից անժխտելի ընդունակութիւններ է ցուցադրել, այնքան խոհեմ գըտնեց, որ տասնեակ հաղարաւոր հայեր հրաւիրեց Դոն, կուրբան, նրանցից այգեգործութիւն, երկրագործութիւն ու շերամաբուծութիւն սովորելու. գարեր շարունակ գերման ուսուցչի միջոցով ձգտեց գերմանական մշակոյթը իւրացնել: Սակայն, չնայած դրան, այսօր, իր աշխատանքի կէս ճանապարհին, նորից նրա մէջ անթնացել է վանդալը:

Կամ նոյնը, աւելի վատ ձեւով, տեղի պիտի ունենայ նաև թուրքի հետ, կամ երկրի ստեղծագործական ուժերի բացակայութեան պատճառով դրսից պիտի գան օտար ուժեր՝ իրենց մարզկանցով և դրամագլխով՝ թուրքիան ու նրա ժողովուրդը քաղաքականապէս ու տնտեսապէս ստրկացնելու:

Վերջին մի քանի խօսք էլ Ահմէտ ձէվաէթի խըրատների մասին:

«Եթէ հայերը ցանկութիւն ունեն մեզի հետ ապրելու, թող երկու հաւատացող մարդ ուղարկեն ինկիւրի և խնդրեն Մեծ Ազգային ժողովի կառավարութիւնից, որ իբր հայրենակից իրենց ներս առնեն. իսկ եթէ չեն ուղենաց մեզ հետ ապրել, թող զնան Արմէնոթինա և այնտեղ հաստատուեն»:

Այս նոյն միտքը աւելի մեզմ շեշտով արտայատում են Ալիլէյման Նազիֆ և միւսները:

Սակայն եթէ հայ ժողովրդի զեկը իմ ձեռքը լինէր, եթէ հայ և յոյն ժողովուրդներին լսելի լինէր իմ ձայնը՝ ես նրանց մէկ խորհուրդ պիտի տայի:

Զինուեցէք տառապանքի ու համբերութեան զրահով, թողէ՛ք թրքական բոլոր հողամասերը, ուր նոր պիտակի տակ համբաւեան հին անհանդուրժելի վարչաձեւն է իշխում, շատ մի՛ ցաւէք, որ վտարուում էք Թուրքիոյ սահմաններից. աշխոյժ մնացէ՛ք, մի՛ կորցնէք ձեր արիութիւնը և համոզուած եղէ՛ք, որ Թուրքիան ձեր բացակայութեամբ կորցնում է իր ուղեղն ու կոռւելու ընդունակութիւնը. հաւատացած եղէք, որ հեռու չէ ա'յն օրը. երբ Թուրքիան կը գտնայ մի իիվա, հուխարա կամ Տելուջիստան:

Ահա թէ ինչ կ'ասէի այդ երկու արի ժողովուրդներին՝ առանց տատանուելու. որովհետեւ տմէն տե-

սակէտից գերադասելի է կարճ ժամանակով տառապանքներ կրել լաւագոյն ապագայ ստեղծելու անխախտ հաւատով, քան դարերով կթան կով մնալ ոճրադուների համար:

Ի զուր է Ահմէտ ձէվտէթը ցոյց տալիս նաև հեռաւոր Արճէնթինայի ճանապարհը: Որքան էլ տաճակահայ ժողովուրդը անհայրենիք, թափառական ու խեղճ վիճակի մէջ է, որքան էլ մեր երկիրն ու ժողովուրդը ծանր օրեր են ապրում, այնուամենայնիւ, խոր ու անսասան է մեր հաւատոն ու համոզումը այն մասին, որ շատ մօտ ապագայում կա՛մ ինքը թուրքիան պիտի զգայ իր ճակատագրական սխալները եւ լապտերներով գայ մեղ որոնելու, և կամ թուրքիայի գերեզմանի վրայ պիտի կառուցումն մեր օճախները: Ահմէտ ձէվտէթ մեր յուսահատ վիճակով թող շատ էլ չուրախանայ, որովհետեւ մեր պատմական հայրենիքը չորս անգամ այսօրուայ նման աւերտել ու սրբուել է հայերից և չորս անգամ էլ նորից լցուել է հայերով և դարձել Հայաստան: Մենք անվհատ կրկնելու ենք մեր շինականի այն խօսքը թէ՝ «սալը չի մաշի, սալը աւլող ցախաւելը կը մաշի», և խոր հաւատով սպասելու ենք մեր պաշտելի հայրենիքի վերածնութեան:

Կարելի է նոր ու անհաջու փաստեր արձանագրել, հատորներ զրել թուրքերի անիմաստ քաղաքականութեան մասին, մի քաղաքականութիւն, որ հրի, որի և աւերածութեան ուղին բռնած՝ կործանեց օսմանեան. լայնատարած կայսրութիւնը, բայց մենք բաւականանք այսքանով:

Ամֆոիենք մեր ասելիքները և վերջացնենք:

Որպէսզի հնարաւոր դասնայ հայերի և թուրքերի միատեղ ու հաշտ կենցաղը, որպէսզի իրագործուեն Սիւլէյման նազիֆի յորդորները թէ՝ «Հայե՛ր, մենք

ձեզ ենք պէտք, դուք էլ մեզ», — այսօրուանից իսկ ինկիւրի Մեծ Ազգային ժողովի շէնքի ճակատին, ոսկէ տափառակի վրայ, պողպատէ տառերով, պիտի արձանագրուեն ու գործադրուեն հետեւեալ անհրաժեշտ պատգամները.

1. — Անէ՛ծք այն սկզբունքին, թէ՝ «տիրող ժողովուրդ» պէտք է լինի. այդ սկզբունքը քայլայեց օսմանեան պետութիւնն ու ոչնչացրեց մեր երկիրի փոքր ժողովուրդները:

2. — Անէ՛ծք համիսլամական գաղափարին, որ կասեցրեց կայսրութեան յառաջդիմութիւնը և գերեզման տարաւ հայ եւ այլ քրիստոնեայ ժողովուրդներին:

3. — Անէ՛ծք համօսմանցիութեան գաղափարին, որ երկպառակեց ու բաժանեց պետութիւնը և ճնշեց ու իրաւագուրկ յայտարարեց Հայերին ու այլ ոչ-թուրք տարրերին:

4. — Անէ՛ծք համաթուրանական գաղափարին, որ իր յարուցած ցնորժներով կայսրութիւնը արկածախնդրութեան զոհ գարձրեց և հայերի կոտորածների պատճառ գարձաւ:

5. — Անէ՛ծք և ներկայ քեմալական «ժողովրդապետութեան», քանի որ նա միմիայն թուրքին է ճանաչում և չէ զոքացնելով նրան՝ դարձնում անկամ, և օտարների ձեռքին գործիք:


6. — Եւ կեցցէ Մերձաւոր Արեւելքի ժողովուրդների ազատագրման և ներդաշնակ համագործակցութեան սկզբունքը:


Ամբողջ հոգով կը ցանկայինք, որ այս լեց պատգամները, գոնէ այսքան ծանր կորուստներից յետոյ, լսելի դառնային սին յաղթութիւններով լացած ՈՒ-զա նուրիներին, ձէվտէթներին և Ռառւֆներին:

Գէթ Ակնունիին երկրպագող նախկին ահրար ՈՒ-
դա Նուրին ըմբռնէր այս պատգամներն ու ջանար կա-
տարել։

Եւ որքա՞ն երջանիկ պիտի լինէինք թէ՛ մենք եւ
թէ՛ թուրքերը . եթէ մէկ որ հարկադրուած չլինէինք
մէկ աւելորդ ու վերջին անգամ եւս կրկնելու թէ՛
առեւխն սապոնն ինչ կ'անի , թէ խեթին խրատն ինչ անի» :







Հայաստանի Ազգային գրադարան



NL0428795

16292